

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ՎԱՐՔՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԻՐԼԻԿԻԱՑԻ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ԾԳՆԱՎՈՒՄԿԱՆ ԿՅԱՆՔԸ



Շուրջ 17 դար է անցել այն ժամանակներից, երբ երկրում ապրում և գործում էր սուրբ ու աստվածահաճո, մեծ հրաշագործ, Միրլիկիայի արքեպիսկոպոս Նիկողայոսը, որին այժմ մեծարում և փառաբանում է ողջ քրիստոնեական աշխարհը հավատի նախանձախնդրության, առաքինի կյանքի և անհաշիվ հրաշքների համար, որ մինչև այժմ հայտնվում է նրանց, ովքեր հավատով դիմում են նրա օգնությանը և Աստծո ողորմածությանը:

Աստծո նախախնամությանը հաճո էր երկիր ուղարկել սուրբ Նիկողայոսին քրիստոնեական ամենադժվար ժամանակներից մեկում: Քրիստոսի ծննդից հետո, երրորդ դարում, որի երկրորդ կեսին նա ծնվեց, քրիստոնեության և հեթանոսության միջև ընթացող ամենավճռական պայքարի ժամանակներն էին, երբ վերջնականապես պետք է լուծվեր խնդիրը. քրիստոնեակա՞ն հավատը պետք է փոխարիներ հեթանոսությանը, թե՞ հեթանոսությունը կմնար անսասան և ընդմիշտ կճնշեր քրիստոնեությանը: Անշուշտ, քրիստոնեությունն արդեն իսկ գերազանցում էր քայքայվող հեթանոսությանը Հիսուս Քրիստոսի և Նրա սուրբ առաքյալների Աստվածային ուսմունքի ներքին ուժով, սակայն այդ ժամանակ հեթանոսության ձեռքին էր արտաքին ուժը, որն իրեն հասու բոլոր միջոցներով ձգտում էր ճնշել իր համար ատելի քրիստոնեությունը: Այսպես, քրիստոնյան հանցագործ էր համարվում, հռոմեական աստվածների և կեսարի թշնամի, հասարակական խոց, որին պետք կտրել ու դեն նետել: Նախանձախնդիր հեթանոսները՝ հռոմեական կայսրերը, քրիստոնեությունը համարելով կործանարար Հռոմեական կայսրության համար, իսկ քրիստոնյաներին՝ ամենավտանգավոր թշնամի, դաժան հալածանքների էին ենթարկում նրանց, ստիպում հրաժարվել Քրիստոսից, երկրպագել կուռքերին և կեսարի պատկերին և նրանց առաջ խուճկ ծխել: Եթե քրիստոնյաները չէին համաձայնում, ապա նրանց նետում էին զնդան և դաժան կտտանքների ենթարկում. տանջահար էին անում ցրտով և սովով, ճպտահարում, այրում մարմնանդամները: Եթե այդ ամենից հետո էլ նրանք անհողողող էին մնում քրիստոնեական հավատի

մեջ, ապա տանջամահ էին անում՝ ջրահեղծում, վայրի գազանների առաջ նետում, վառարաններում կամ խարույկներում այրում: Հնարավոր չէ թվել այն բոլոր տանջանքները, որոնց ենթարկում էին կատաղած հեթանոսները անմեղ քրիստոնյաներին: Քրիստոնյաների հալածանքների մեջ ամենադաժանը Վալերիանոս կայսեր նախաձեռնությունն էր: Քրիստոսի ծննդից հետո, 228 թվականին նա հրովարտակ արձակեց, որով քրիստոնյաների նկատմամբ սահմանվում էին սարսափելի միջոցներ: Ըստ այդ հրովարտակի, եպիսկոպոսները, քահանաներն ու երեցները սպանվում էին սրով, սենատորներն ու դատավորները ունեզրկվում էին, իսկ եթե դրանից հետո շարունակում էին մնալ քրիստոնեական հավատի մեջ, նույնպես մահապատժի էին ենթարկվում, ազնվական կանայք ունեզրկվելուց հետո արքայվում էին, մնացած քրիստոնյաները՝ շղթայակապ արվելով, ուղարկվում էին տաժանակիր աշխատանքի: Հալածանքները առանձնակի ուժգնությամբ գործադրվում էին Եկեղեցու հովիվների նկատմամբ, և նրանցից շատերը իրենց հավատը կնքեցին տանջալի նահատակությամբ: (Այդ ժամանակ սուրբ Կիպրիանոսը Կարթագենում ընկավ, սուրբ Լավրենտիոսը Հռոմում խորովվեց երկաթե կրակակալի մեջ):

Սակայն չար ոգու բոլոր ջանքերը՝ սասանել Եկեղեցին, ըստ նրա աստվածային հիմնադրի խոսքերի, դժոխքի դռները այն չափտի հաղթահարեն (Մատթ., ԺԶ, 18), ապարդյուն անցան: Հենց այն ժամանակներում, երբ հոսում էր Եկեղեցու նահատակ հովիվների արյունը, որ դարձավ քրիստոնեության պտղավոր սերմը, Տերը կամեցավ դրա փոխարեն նրանց պարզևել Քրիստոսի հավատի նոր նախանձախնդիր պաշտպանի ու ջատագովի՝ սուրբ Նիկողայոսին, որին Եկեղեցին հպարտությամբ անվանում է *ամենահմայիչ սքանչելագործ, պայծառափայլ Արեգակի անանց աստղ, աստվածային քարոզիչ, Աստծո մարդ, ընտրյալ անոթ, սյուն և հաստատում Եկեղեցու, բոլոր վշտահարների ներկայացուցիչ և մխիթարիչ* (սուրբ Նիկողայոսի արարողությունը՝ դեկտեմբերի վեցին և մայիսի իննին):

ԾՆՆԴԻՑ ՄԻՆՉԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Նիկողայոս Սքանչելագործի ծնողները՝ Թեոփանեսն ու Նոննան, ապրում էին Փոքր Ասիայի կազմի մեջ գտնվող հնագույն Լիկիայի (այժմյան Անատոլիան) Պատարի քաղաքում: Նրանք ազնվական ծագում ունեին, բավականաչափ ունևոր, և որպես բարեպաշտ քրիստոնյաներ, առանձնանում էին օրինակելի վարքով՝ աղքատների նկատմամբ բարեգթությամբ և Աստծո հանդեպ ջանադրությամբ: Ինչպես Ջաքարիային և Եղիսաբեթին (Հովհաննես Սկրտիչի ծնողները) և հինկտակարանային բազմաթիվ արդարներին, Տերը կամեցավ ծանր փորձության ենթարկել. ծերանալով օրինական ամուսնության մեջ՝ նրանք երեխաներ չունեին:

Անպտղությունը չափազանց վշտացնում էր, և նրանք անընդմեջ աղոթում էին Տիրոջը, որ Նա որդի պարգևի իրենց, ընդ որում ուխտել էին նրան նվիրաբերել ի ծառայություն Տիրոջ: Արդարների ջանադիր աղոթքը վերջապես լսելի եղավ: Նոննան որդի ծնեց, որին մկրտելիս կոչեցին *Նիկողայոս* քրիստոնեական անվամբ, ինչ նշանակում է՝ *ժողովրդին հաղթող (Նիկողենոս)*: Աստծո մեծ սիրեցյալին հենց մկրտության ժամանակ տրված անունը ցույց է տալիս, որ նա կյանքում շատ անգամներ է առիթ ունենալու հաղթահարել մարդկային չարությունը: Ծնելով սուրբ Նիկողայոսին՝ Նոննան այլևս երեխաներ չունեցավ:

Մանկության հենց առաջին օրերից սուրբ Նիկողայոսն ապացուցեց, որը ինքը Տիրոջը ծառայելու հատուկ կոչվածություն ունի: Պահպանված գրույցները վկայում են, որ սուրբ մկրտության խորհրդի արարողության ժամանակ առանց որևէ մեկի օգնության, մկրտության ավազանում նա կանգնած մնաց երեք ժամ շարունակ. երեք ժամ կանգնելով ավազանում, մեծ մանուկը, ըստ սուրբ Դիմիտրի Ռոստովցու խոսքերի, նախանշեց Սուրբ Երրորդության նկատմամբ ունեցած իր ապագա հավատը, Որին իր հետագա ողջ կյանքում նախանձախնդրորեն պաշտպանեց: Մանկության հենց առաջին օրերից սուրբ Նիկողայոսն սկսեց խստակյաց ճգնավորական կյանք վարել, որին հավատարիմ մնաց մինչև վերջ: Ըստ ավանդազրույցների, նա կերակրվում էր մոր միայն աջ կրծքի կաթով, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերին հրաժարվում անգամ դրանից և ուտում էր միայն մեկ անգամ՝ համաձայն առաջին քրիստոնյաների սահմանած կարգի:

Սուրբ Նիկողայոսի մանկական հասակի այսպիսի անսովոր վարքը ծնողներին հուշում էր, որ նա դառնալու է Աստծո սիրելին: Այդ պատճառով նրանք հատուկ ուշադրության տակ առան նրա դաստիարակության խնդիրը և, լինելով, ինչպես ասացինք, բարեպաշտ քրիստոնյաներ, առաջին հերթին ջանում էին նաև իրենց որդուն ներշնչել քրիստոնեական ճշմարտություններ ու արդար կյանքով ապրելու մղում: Ծնողների ջանքը հաջողությամբ պսակվեց: Բարի սերմը, որ ցանցին նրանք որդու հոգում, պարարտ հող գտավ և առատ բերք տվեց: Շնորհիվ ի ծնե հարուստ օժտվածության, Սուրբ Հոգով առաջնորդվող պատանին շուտով հասու եղավ նաև գրի իմաստնությանը, որը, սուրբ Դիմիտրի Ռոստովցու բառերով, այնքան անհրաժեշտ էր «Քրիստոսի նավի բարի նավավարին և խոսքի ոչխարների հմուտ հովվին»: (Պահպանվել է մի ավանդազրույց, թե, երբ սուրբ Նիկողայոսի ծնողները չգիտեին ում ընտրել իրենց որդուն ուսուցիչ, մանուկ Նիկողայոսը, առաջնորդվելով Սուրբ Հոգով, վանկարկելով տվեց այն ուսուցչի անունը, որ իրեն պետք է գրագիտություն սովորեցներ:)

Հաջողության հասնելով գրաճանաչության մեջ, պարմանի Նիկողայոսը նույնքան հաջողակ և բարեպաշտ էր կյանքում: Նրան չէին զբաղեցնում հասակակիցների ունայն, բարուն չտանող գրույցները: Նրա համար խորթ էր վատ բանի

հանգեցնող ընկերության այնքան վարակիչ օրինակը: Խուսափելով ունայն և մեղսալի զվարճանքներից, դեռահաս ու պատանի Նիկողայոսն առանձնանում էր օրինակելի ողջախոհությամբ և ոչ միայն խուսափում էր կանանց նկատմամբ անմաքուր մտքերից, այլև, որպես խստակյաց ճգնավոր, խուսափում էր անգամ հակառակ սեռի ընկերակցությունից, չէր խոսում նրանց հետ և ջանում էր չնայել նրանց դեմքին, վախենալով գայթակղությունից և հիշելով Փրկչի խոսքը, թե *ամենայն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում* (Մատթ. Ե, 28): Գրեթե ողջ ժամանակը պարմանի Նիկողայոսն անցկացնում էր Սուրբ Գրքի ընթերցանությամբ, պատերի և աղոթքների մեջ, դեռ պատանեկությունից իրենից կերտելով Աստծո տաճար, ուր անարգել կարող էր բնակվել Սուրբ Հոգին: Ուժգին սեր էր տածում Սուրբ Նիկողայոսն Աստծո տաճարի հանդեպ և երբեմն օր ու գիշերներ էր անցկացնում այնտեղ Աստվածային գրքերի ընթերցանությամբ և բարեպաշտ աղոթքներով:

Առհասարակ պատանության ընթացքում սուրբ Նիկողայոսն այնպիսի բարձրության էր հասել առաքինի կյանքով, որ նրան չէին անհանգստացնում այդ հասակին հատուկ մեղսալի կրքերը. թվում էր, թե նա պատանի չէ, այլ ծեր անապատական, որ հրաժարվել է երկրային ամենայն ինչից և ամբողջովին նվիրվել Աստծու ծառայությանը:

ՁԵՌՆԱԴՐՈՒՄԸ

Պատանի Նիկողայոսի բարեպաշտ կյանքը շուտով հայտնի դարձավ Պատարիի բոլոր բնակիչներին: Քաղաքի եպիսկոպոսն այդ ժամանակ սուրբ Նիկողայոսի հորեղբայրն էր, նույնպես Նիկողայոս: Նկատելով, որ եղբորորդին բոլորից առանձնանում է առաքինությամբ և ճգնակեցությամբ, և տեսնելով նրա մեջ աստվածահաճո մարդու, հորեղբայր-եպիսկոպոսն սկսեց համոզել սուրբ Նիկողայոսի ծնողներին նրան Տիրոջ մոտ ծառայության տալ: Ծնողները հաճությամբ համաձայնեցին, քանի որ, ինչպես վերը նշվեց, դեռ մինչև որդու ծնվելը այդպիսի ուխտ էին արել: Պատանի անապատականին առնելով հովանավորության տակ, հորեղբայր-հովվապետը նրան քահանա ձեռնադրեց: Անտարակույս է, սակայն, որ սուրբ Նիկողայոսն անցել է նաև եկեղեցական ծառայության ստորին աստիճաններով, թեև անհայտ է, թե մինչև քահանայության արժանանալը, ինչպես էր նա ծառայում Աստծուն որպես սաղմոսասաց կամ նույնիսկ սարկավագ: Սուրբ Նիկողայոսին քահանայական խորհրդի օժման ժամանակ եպիսկոպոսը, Սուրբ Հոգով լեցուն, մարգարեաբար ժողովրդին կանխագուշակեց Աստծո ծառայի մեծ ապագան. «Ահա, եղբայրներ, ես տեսնում եմ նոր արև, որ ծագում է երկրի ծագերից, ո-

րը մխիթարություն կլինի բոլոր վշտակյացների համար: Երանելի կլինի այն հոտը, որին կվիճակվի այդպիսի հովիվ ունենալ: Նա լավ կարածեցնի մուրոյալների հոգիները, կերակրելով նրանց բարեպաշտության մարգագետիններում, և ջերմ օգնական կլինի դժբախտության մեջ գտնվողներին»: Հորեղբայր-եպիսկոպոսի մարգարեական ավետումը շուտով սկսեց արդարանալ եղբորոգու կյանքում: Ընդունելով քահանայական աստիճան, սուրբ Նիկողայոսն սկսեց ավելի խիստ, ճգնակյաց կյանք վարել: Անընդմեջ արթնությունը, պասն ու աղոթքը մերձեցրին նրան անմարմին հոգիներին, այնպես որ, բոլորին թվում էր, թե դա այլևս մարդ չէ, այլ մարմնավորված Հրեշտակ: Խորին հլուքամբ սուրբ Նիկողայոսն իր հոգևոր սխրանքներն առաջվա պես կատարում էր առանձնության մեջ, ամեն կերպ ջանալով դրանք ի ցույց չդնել այլոց: Բայց Աստծո Նախախնամությանը հաճո էր, որ սուրբ Նիկողայոսի առաքիլի կյանքը նաև ուրիշներին ուղղորդի ճշմարիտ ճանապարհ և ծառայի ի նպաստ նրանց հոգուն և փրկության: Դա կատարվեց այսպես: Սուրբ Նիկողայոսի հորեղբայրը, Պատարիի եպիսկոպոսը, որոշեց ուղևորվել Պաղեստին, որպեսզի այնտեղ խոնարհվի սուրբ վայրերին: Բացակայության ընթացքին Պատարիի Եկեղեցու կառավարումը նա հանձնարարեց եղբորորդի-քահանային, նրա մեջ տեսնելով իր բարձր պաշտոնի արժանավոր փոխարինողին:

Եվ իսկապես, քահանա Նիկողայոսը լիովին արդարացրեց հորեղբոր հույսերը. նա ամբողջ հոգով նվիրվեց բազմաչարչար, բայց միևնույն ժամանակ եպիսկոպոսական կառավարման բարձր և սուրբ պարտականությունների կատարմանը: Շատ բան կարող էր անել և իսկապես բարիքներ արեց այն ժամանակ սուրբ Նիկողայոսն իր հոտի համար: Դրան նպաստեց ևս մի հանգամանք, որ հնարավորություն տվեց սուրբ Նիկողայոսին մեծամեծ բարեգործություններ անել: Մոտավորապես այդ ժամանակ վախճանվեցին սուրբ Նիկողայոսի ծնողները՝ Թեոփանեսն ու Նոննան, և հարուստ ժառանգություն թողեցին իրենց միակ որդուն: Ոչ մի ուրիշ ձեռքերում չէր կարող նման հարստությունը գործածվել առավել օգտակարությամբ, քան սուրբ Նիկողայոսի ձեռքերում: Ինչպես հարիր է ճշմարիտ քրիստոնյային, իր հարստությանը նա նայում էր որպես ժամանակավոր և վաղանցուկ մի բանի. նա չէր ջանում ամեն գնով բազմապատկել այն, ինչպես նման դեպքերում անում են ուրիշները. երկրային հարստության միակ ճիշտ գործածությունը համարում էր բաժանելը աղքատներին ու կարիքավորներին, հիշելով Քրիստոսի պատվիրանը, որ ողորմություն տվողները տալիս են այն իրեն՝ Քրիստոսին և դրանով իսկ հավիտենական հարստություն դիզում երկնքում: Նրա ձեռքը բաց էր նվիրաբերություն անելու համար ամեն կարիքավորի, ինչպես ջրառատ գետն է բացում ջրերը ամեն մեկի համար, ով ցանկանում է հագեցնել ծարավը: Այն մասին, թե ժառանգություն ստանալով, ինչպիսի քրիստոնեական խոնարհությամբ

եր սուրբ Նիկողայոսը բարեգործություն անում, կարելի է դատել հետևյալ դեպքով:

Պատարիում ապրում էր մի մարդ, որ երեք գեղեցկուհի աղջիկ ուներ: Մի ժամանակ նա շատ հարուստ էր եղել, բայց հետո, դժբախտ հանգամանքների բերումով, զրկվել էր ամեն ինչից և ընկել ծայրահեղ աղքատության մեջ: Արդեն չասելով այն մասին, որ նա ոչինչ չուներ աղջիկներին ամուսնության տալու, դրան չուներ նույնիսկ իր և ընտանիքի համար սնունդ և անհրաժեշտ հագուստ ձեռք բերելու համար: Ինչի՞ ասես չի հասցնի ծայրահեղ աղքատությունը մարդուն, որ բավականաչափ քրիստոնեական խոնարհություն չի դրսևորել: Աղքատությունը վիճակի բարելավման հույսը կորցրած դժբախտ հորը հանգեցնում է սարսափելի մտքի՝ զոհաբերել աղջիկների պատիվը, նրանց գեղեցկությունից գոյատևման միջոցներ կորզել: Բայց, նրա բախտից, նրա հետ նույն քաղաքում ապրում էր սուրբ Նիկողայոսը, որն աչալրջորեն հետևում էր իրեն վստահված հոտի կարիքներին: Հայտնություն առնելով Տիրոջից դժբախտի հանցավոր մտադրության մասին, սուրբ Նիկողայոսը որոշում է նրան ազատել նյութական աղքատությունից, որպեսզի դրանով իսկ փրկի նրա ընտանիքը հոգեկան կործանումից: Որպես Քրիստոսի ճշմարիտ աշակերտ և հովիվ, նա մտածում է բարեգործություն անել այնպես, որ ոչ ոք չիմանա իր մասին որպես բարեգործի, չիմանա նույնիսկ նա, ում մտադիր էր բարիք անել: Այդ որոշման մեջ, քրիստոնեական խորին հնազանդությանը, ինչն արտահայտված է Փրկչի խոսքերում. *զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց* (Մատթ. 23, 1), Աստծո ընտրյալը դնում է կյանքի խորունկ փորձը, իմանալով, թե ինչքան ծանր է ողորմություն ընդունել նրանց, ովքեր հարստությունից զրկվել են և ընկել ծայր աղքատության մեջ:

Վերցնելով ոսկով մեծ քսակը, կեսգիշերին, երբ բոլորը քնած էին և, հետևաբար, չէին կարող նկատել իր բարեգործությունը, երբ քնած էր նաև դժբախտ հայրն իր դուստրերով, սուրբ Նիկողայոսն անձայն մոտենում է նրա խրճիթին և, բացելով պատուհանը, ոսկին ներս նետում, իսկ ինքը շուտափույթ վերադառնում տուն: Առավոտյան արթնացավ տանտերը, և նրա հայացքն անմիջապես ընկավ ոսկով քսակին: Կարելի է պատկերացնել նրա ուրախությունը, երբ քանդելով կապոցը, նա այնտեղ գտավ այն, ինչի պատճառով ուզում էր խայտառակել աղջիկներին: Չհավատալով աչքերին և մտածելով, թե երազ չէ արդյոք, նա շոշափեց ոսկին և վերջապես գիտակցեց, որ իրականություն է: Երկար մտածեց, թե ով կարող է լինել այդպիսի անշահախնդիր բարեգործ, բայց ոչ մեկի վրա միտքը կանգ չառավ: Որոշելով, որ Ինքը Աստծո Նախախնամությունն է ուղարկել գաղտնի բարեգործին, նա ջերմեռանդորեն շնորհակալ եղավ Տրիոջը և ստացված ոսկով ամուսնացրեց մեծ աղջկան:

Տեսնելով, որ իր բարեգործությունը տվեց հարկ եղած պտուղները, Սուրբ Նիկողայոսը որոշեց գործը հասցնել ավարտին. հաջորդ գիշերներից մեկում նույն եղանակով գաղտնաբար չքավորի խրճիթ նետեց ոսկու մյուս կապոցը: Չքավորն այս անգամ արդեն իրեն չկորցրեց իր բարերարի անձը պարզելու կռահումներով, այլ ուղղակի բերանքսիվայր ընկավ գետին ու շնորհակալ եղավ Տիրոջը. «Աստված, դու գթության աղբյուր ես,-շնորհակալ եղավ հուզված հայրը:-Դու եռապատկում ես մեր փրկությունը: Դու նախ և առաջ թողություն տվեցիր ինձ Քո հովանավորությանը, իսկ հիմա տունս երեխաներիս հետ ոսկով փրկում ես թշնամու ցանցից: Ցույց տուր ինձ նրան, ով այստեղ ծառայում է Քո բարեգթությանը և մարդասիրական ողորմածությանը: Ցույց տուր ինձ այդ երկրային հրեշտակին, որ պահպանում է մեզ մեղսալի կործանումից: Թող հայտնի լինի ինձ, ով է մեզ ազատում կեղեքող աղքատությունից և ետ պահում վատ մտքերից: Քո ողորմածությանը, որ ցուցաբերում ես ինձ գաղտնորեն Քո ընտրյալի ձեռքով, ես երկրորդ դստերս եմ ամուսնացնում օրենքով և դրանով խուսափում եմ թշնամու ցանցն ընկնելու ու աղջկաս վատ արարքի մղելու անհրաժեշտությունից»:

Շնորհակալ լինելով Տիրոջը, հայրն ամուսնացրեց երկրորդ աղջկան, վստահաբար հուսալով, որ Տերը նույն կերպ և երրորդ աղջկա համար ողորմություն կուղարկի: Դրա հետ մեկտեղ որոշեց՝ ինչ գնով էլ լինի իմանալ գաղտնի բարերարին, որպեսզի արժանավայել շնորհակալ լինի նրան, և դրա համար գիշերներ չքնեց, սպասելով նրա հայտնությանը: Սպասումը երկար չտևեց: Շուտով երրորդ անգամ եկավ Քրիստոսի բարի հովիվը խրճիթ, նույնպես գիշերը, և, նետելով ոսկու կապոցը պատուհանից, շտապեց տուն: Բայց այս անգամ նրան չհաջողվեց թաքցնել բարերարությունը: Չքավորը, լսելով ընկնող ոսկու ձայնը, հապշտապ դուրս եկավ տնից և հասավ գաղտնի բարերարին: Ճանաչելով սուրբ Նիկողայոսին, ընկավ նրա ոտքերը, համբուրեց և շնորհակալ եղավ, որպես անխուսափելի դժբախտությունից իր և իր ընտանիքի ազատարարի : «Եթե Տերը քեզ չուղարկեր, դժբախտս, վաղուց կզոհվեի աղջիկներիս հետ, որոնց որոշել էի մղել պիղծ կյանքի: Իսկ հիմա քո շնորհիվ մենք փրկված ենք և ազատված մեղսագործությունից»:

Սուրբ Նիկողայոսը բարձրացրեց նրան և, խորհուրդ տալով ողորմածության համար այսուհետ շնորհակալ լինել Տիրոջը և աղոթել Նրան, երդում առավ նրանից ոչ ոքի չպատմել իրեն արված բարեգործության մասին: Ահա քրիստոնեական այն բազմաթիվ ողորմածություններից մեկը, որ կատարել է սուրբը և որոնք իրենց քրիստոնեական բարձրությամբ պետք է մեզ բարեգործության օրինակ ծառայեն:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՂԵՍՏԻՆ

Պաղեստինից հորեղբայր-եպիսկոպոսի վերադառնալուց հետո սուրբ Նիկողայոսն ինքը պատրաստվեց ուղևորվել այնտեղ, որպեսզի տեսնի և խոնարհվի մեր Տեր Չիսուս Քրիստոսի ոտնահետքերով լուսավորված սուրբ վայրերին: Նավով Պաղեստին ուղևորության ժամանակ սուրբ Նիկողայոսը խոր մարգարեական պայծառացման և հրաշագործության շնորհ դրսևորեց: Երբ նավը մոտենում էր Եգիպտոսին, Աստծո ընտրյալը կռահեց և նավատերերին հաղորդեց, որ շատ շուտով ուժեղ փոթորիկ և վիթխարի ալեկոծում կլինի. նա նույնիսկ տեսել էր, թե ինչպես անմաքուր ոգին մտավ նավ և փորձում էր խորտակել նավը մարդկանց հետ միասին: Եվ իսկապես, երկինքն հանկարծակի պատվեց ամպերով, փչեց սարսափելի քամի, նավն սկսեց թռցնել, ինչպես տաշեղ: Ծովագնացները սարսափի մատնվեցին և իրենց փրկության հույսը կապեցին միայն սուրբ ընտրյալի հետ, որին էլ դիմեցին աղաչանքով: «Եթե դու, սուրբ հայր, Տիրոջն ուղղված քո աղոթքներով չօգնես մեզ,-ասում էին նրան,-ապա մենք կկործանվենք ծովային խորխորատում»: Սուրբ Նիկողայոսը հանգստացրեց նրանց և խորհուրդ տվեց հույսը դնել Աստծո գթասրտության վրա: Բարեպաշտի աղոթքն անմիջապես լսվեց: Ծովային ալեկոծումն հանդարտվեց, լռություն տիրեց. միաժամանակ նավաստիների տրտմությունն ու հուսահատությունը փոխվեց ուրախության ու երախտագիտության առ Տերը և Նրա սուրբ ծառային, որ հրաշքով կռահել էր ծովային ալեկոծումը, իսկ հետո ոչ պակաս հրաշքով սանձել այն Տիրոջն ուղղված աղոթքներով:

Դրանից անմիջապես հետո սուրբ Նիկողայոսը մի ուրիշ հրաշք գործեց: Նավաշինական գործով նավաստիներից մեկը բարձրացել էր կայմի ծայրին. այնտեղից իջնելով, նա սայթաքեց և, ընկնելով տախտակամածին, մահու չափ վնասվեց: Ընկերոջ անշունչ մարմնի տեսքից ծովայինների ուրախությունը փոխվեց վշտի: Սակայն Տիրոջը հաճո բարեպաշտի աղոթքը կրկին ցրեց ընդհանուր տխրությունը: Մինչ օգնության խնդրանքով կդիմեին սուրբ Նիկողայոսին, նա ինքն աղոթքով դիմեց Տիրոջը, Որը, ինչպես քիչ առաջ, նույնպիսի փութով անսաց նրան: Մեռած պատանին հարություն առավ և բոլորի աչքի առջև կանգնեց, ինչպես խոր քնից արթնացողը: Ջարմանահրաշ հարությունը տեսնելով՝ ներկա ծովայիններն առավել մեծ հարգանքով լցվեցին հրաշագործ ուղեկցի նկատմամբ:

Սուրբ ընտրյալի աղոթքներով պաշտպանվող նավը շարունակեց նավարկել և բարեհաջող հանգրվանեց Եգիպտոսի առևտրական մեծ քաղաք Ալեքսանդրիայի ափերին:

Մինչ ծովայինները սննդամթերքի և նավարկության համար այլ անհրաժեշտ պաշարներ էին կուտակում, սուրբ Նիկողայոսը հոգ էր տանում տեղի բնակիչների

ցավերը դարձանելու. ոմանց բժշկում էր անբուժելի թվացող հիվանդություններից, մյուսներից հալածում էր նրանց տանջող աննաքուր ոգին, վերջապես, ոմանց հոգեկան վշտերին էր մխիթարություն տալիս:

Հեռանալով Ալեքսանդրիայի ափերից, նավը բարեհաջող հասավ Սուրբ հող: Առաջին հերթին սուրբ ուխտավորն ուղևորվեց Երուսաղեմ, ուր Հիսուս Աստված իրագործեց մեր փրկությունը, և այստեղ խոնարհվեց սուրբ վայրերին, որ լուսավորված են մարդկային ցեղի Աստվածային Փրկչի ոտնահետքերով:

Սուրբ քաղաքը, որ բնակեցված էր կռապաշտներով և նրանց մեջ ապրում էր առավել հայտնի Էլիա Կապիտոլիացի անունով մեկը, այն ժամանակ քիչ ուրախություն կարող էր պարգևել քրիստոնեական զգացմունքներ ունեցողների համար: Քրիստոսի համբառնալուց հետո նախ Տիտոսի, ապա Անդրիանոսի կողմից կրկնակի ավերված, և երկրորդ վերականգնման ժամանակ նախկին վայրից մասամբ տեղաշարժված բիբլիական Երուսաղեմը կռապաշտների պատճառով քրիստոնեական հայացքների տարածման համար փակ էր: Երկրորդ տաճարի տեղում, որտեղ Տերն այնքան հաճախ քարոզում էր, կանգնած էր Յուպիտեր Կապիտոլիացու տաճարը: Գողգոթայի Աստվածային արյունով ներկված Գողգոթան, մտնելով քաղաքի կազմի մեջ, նսեմացված և խայտառակված էր Վեներայի արձանով: Տիրոջ գերեզմանն էլ, հողով լցված ու սալահատակված, Յուպիտերի կռատանը պատվանդան էր ծառայում: Քաղաքի երկրորդ ավերումից ու վերականգնումից հետո փրկվել էր միայն ոչ մեծ մի եկեղեցի և մի քանի տուն Սիոն լեռան վրա. եկեղեցի, որ կառուցվել էր այն սեղանատնից, որտեղ մեր Տերը հաստատեց հաղորդության գաղտնիքը, իսկ հետո առաքյալները Հիսնականների օրն ստացան Սուրբ Հոգին: Միայն հանուն առաքյալների այդ լեռնային եկեղեցին կարողացավ մխիթարել բարեպաշտ քահանային: Պահպանվել է մի ավանդություն. երբ գիշերը սուրբ Նիկողայոսը ցանկանում էր Տիրոջն աղոթել եկեղեցում, որը փակ էր, եկեղեցու դռները Աստծո կամոք իրենք իրենց բացվեցին Տիրոջ ընտրյալ ծառայի առջև, որն այդպիսով հնարավորություն ստացավ տաճար մտնելու և կատարելու իր հոգու բարեպաշտ ցանկությունը:

Սիրով տոգորված Աստվածային Մարդասերի հանդեպ, որ տանջվում էր մեղավորների համար և հարության ու երանության երջանիկ հույսեր էր պարգևում, սուրբ Նիկողայոսը հույժ ցանկություն ուներ ընդմիշտ մնալ Պաղեստինում, հեռանալ մարդկանցից և թաքնաբար ծառայել Երկնային Հորը:

Բայց Տիրոջը հաճո էր, որ հավատի այնպիսի լուսատուն, ինչպիսին էր Նիկողայոս սրբազանը, չմնար անապատի գրվանում, այլ Լիկիա երկրում պայծառորեն լուսավորեր իր կարիքն ունեցողներին: Եվ ահա, վերին կամքով, բարեպաշտ քահանան որոշեց վերադառնալ հայրենիք և դրա համար պայմանավորվեց նավավարների հետ, որ պարտավորվեցին տեղ հասցնել: Նավարկության ժամանակ

Աստծո սպասավորին վիճակված էր իր վրա զգալ մարդկային չարությունը, որի հանդեպ պայքարով նա կարողացավ տանել իր իսկ անվամբ նախացուցված հաղթանակը: Լիկիա նավարկելու փոխարեն, ինչպես խոստացել էին սուրբ Նիկողայոսին, չար նավավարները, օգտվելով համընթաց քամուց, ուղևորվեցին Լիկայի հակառակ ուղղությամբ: Նկատելով չար մտադրությունը, Աստծո սպասավորն ընկավ նավավարների ոտքերը, աղաչելով իրեն ուղարկել հարազատ Լիկիա: Բայց չարական նավավարներն աներեր մնացին իրենց հանցավոր դիտավորության մեջ, չկասկածելով, թե ինչ Աստվածային զայրության էին մատնվում Աստծո սպասավորի հանդեպ իրենց չարամիտ արարքով: Այդ ժամանակ սուրբ Նիկողայոսը ներում շնորհելու ջերմ աղոթքով դիմեց Տիրոջը, որը շուտով լսելի եղավ: Հանկարծակի չափազանց ուժեղ քամի բարձրացավ, որ շրջեց նավը և արագ հասցրեց Լիկիայի ափերը: Իրենց կամքին հակառակ Լիկիա հասնելով, նավավարները, բնականաբար, երկյուղում էին, որ կպատժվեն իրենց չար մտադրության համար: Բայց նրանցից վիրավորված ճամփորդը, իր անչար բնույթով, չնախատեց նրանց. հակառակը, օրհնեց և խաղաղությամբ ճամփեց տուն:

Ցանկանալով հեռանալ աշխարհիկ ունայնությունից, հայրենիք վերադառնալուց հետո Աստծո սպասավորն ուղևորվեց ոչ թե հայրենի քաղաք Պատարի, այլ Սիոնի մենաստան, որ հիմնադրել էր նրա հորեղբայր-եպիսկոպոսը: Այստեղ եղբայրները նրան ընդունեցին մեծ ուրախությամբ, ինչպես Աստծո Հրեշտակի, որ ուղարկված էր ուսուցելու նրանց զրույցներով և առաքինությամբ ուղղորդելու բարեպաշտ կյանքի: Այստեղ, վանական խցի խաղաղ մեներության մեջ, սուրբ Նիկողայոսը մտադիր էր անցկացնել ողջ կյանքը:

ՄԻՐԼԻԿԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵՌՆԱԴՐՈՒՄԸ

Տեր Աստված, ինչպես մի ժամանակ չէր ցանկացել, որ սուրբ Նիկողայոսն անհայտ մնար պաղեստինյան անապատում, այնպես էլ հիմա չցանկացավ, որ հավատի և բարեպաշտության այնպիսի գանձը, ինչպիսին Աստծո սպասավորն էր, փակվեր վանական նեղ խցուն: Եկավ ժամանակը, երբ սուրբ Նիկողայոսը պետք է դառնար Լիկիայի Եկեղեցու գերագույն առաջնորդը, որպեսզի լուսավորեր մարդկանց սուրբ Ավետարանական ուսմունքով և առաքինի կյանքով: Մի անգամ, երբ սուրբ Նիկողայոսն աղոթում էր վանական առանձնության մեջ, նա մի ձայն լսեց, որն ասաց նրան. «Նիկողայոս, դու պետք է սկսես ծառայել ժողովրդին, եթե ցանկանում ես պսակ ստանալ Ինձնից»: Սրբազան երկյուղը պատեց նրան, երբ լսեց այդ խոսքերը. միաժամանակ նա չէր պատկերացնում, թե ինչ է իրեն

պատվիրում կատարել հրաշալի ծայնը: Այդ ժամանակ այդ նույն ծայնն ասաց. «Նիկողայոս, այս մենաստանը այն ասպարեզը չէ, որ կարողանաս քեզանից Իմ սպասած պտուղը բերել: Հեռացիր այստեղից և գնա մարդկանց աշխարհը, որպեսզի քեզնով Իմ անունը փառաբանես»:

Այդ ժամանակ սուրբ Նիկողայոսը հասկացավ, որ հրաշալի ծայնն, անկասկած, Իր իսկ Տիրոջ ծայնն է, որ պատվիրում է թողնել մենաստանը և մտնել աշխարհ՝ փառաբանելու համար Աստծո անունը հավատով և բարի գործերով: Միշտ հնազանդ Աստծո կամքին, նա անմիջապես թողեց իրեն պատսպարած մենաստանը: Թեև այժմ արդեն սուրբ Նիկողայոսի համար էլ անկասկած էր, որ իրեն վիճակված է ժողովրդի քրիստոնեական առաջնորդության պատվավոր տեղն զբաղեցնել, առաջվա պես խուսափում էր մարդկային փառք ու պատվից. հեռանալով մենաստանից, որ ցուցված էր Աստծո Նախախնամությամբ, նա կրկին իր համար բնակատեղ ընտրեց ոչ թե հայրենի Պատարին, որտեղ բոլորը ճանաչում էին սուրբ ընտրյալին և իր սրբության համար հատուկ պատվի կարժանացնեին նրան, այլ մեծ քաղաք Միրին, Լիկիա երկրի մայրաքաղաքն ու թեմը, ուր, որևէ մեկից չիմացվելով, կարող էր խուսափել աշխարհիկ փառքից: Այստեղ նա ապրում էր աղքատի պես, չիմանալով, որտեղ դնել գլուխը, բայց բաց չթողնելով եկեղեցական բոլոր արարողությունները: Որքան Աստծո սպասավորը հնազանդեցնում էր իրեն, այնքան Տերը, որ խոնարհեցնում է հպարտներին և բարձրացնում խոնարհներին, բարձրացնում էր նրան:

Միրում, սուրբ Նիկողայոսի այնտեղ գտնվելու ժամանակ, վախճանվեց ամենայն Լիկիա երկրի արքեպիսկոպոս Հովհաննեսը: Նոր արքեպիսկոպոս ընտրելու համար ըստ սովորության Միրում հավաքվեցին Լիկիա երկրի բոլոր եպիսկոպոսները: Այդ բարձր պաշտոնն զբաղեցնելու համար շատ խելացիների և ազնիվների առաջարկներ եղան, բայց ընդհանուր համաձայնություն չեկան որևէ մեկի ընտրության հարցում: Այդ պաշտոնն զբաղեցնելու համար Տերն առավել արժանի մեկին էր գտել, քան նրանք, որ նրանց մեջ էին: Համաձայնության չգալով, եպիսկոպոսները որոշեցին, որ այնպիսի կարևոր գործը, ինչպիսին արքեպիսկոպոսի ընտրությունն է, ամբողջովին պետք է կախված լինի Աստծո կամքից, և այդ պատճառով ջերմեռանդ աղոթքով դիմեցին Տիրոջը, որպեսզի Նա ցույց տա նրանց այն մեկին, որն առավել արժանի է զբաղեցնելու Միրի արքեպիսկոպոսությունը:

Տերը, իմաստնորեն կառավարելով եպիսկոպոսներին, կատարեց նրանց բարեպաշտական խնդրանքը: Ջերմեռանդ աղոթքի ժամանակ տարեց եպիսկոպոսներից մեկին հայտնվեց լույսով ողողված մի այր, և հրամայեց այդ գիշեր լինել տաճարի բակում և տեսնել, թե ով առաջինը տաճար կգա առավոտյան ժամերգության. դա էլ հենց Տիրոջ ընտրյալ այրը կլինի, որին եպիսկոպոսները պետք է կարգեն արքեպիսկոպոս: Դրա հետ մեկտեղ պարզվեց Աստծո ընտրյալի անու-

նը՝ Նիկողայոս: Աստվածային հայտնություն ունենալով, տարեց-հովվապետը հաղորդեց այդ մասին մյուս հովվապետերին, որոնք, առնելով Աստծո ողորմածության լուրը, էլ ավելի ուժեղացրին իրենց աղոթքները, իսկ ինքը գիշերն ընկնելուն պես կանգնեց տաճարի բակում, սպասելով Բարձրյալ Տիրոջ ընտրյալի գալուն: Եկավ առավոտյան ժամերգության պահը, և սուրբ Նիկողայոսը, ըստ սովորության կեսգիշերից սկսելով աղոթքը, բոլորից շուտ եկավ եկեղեցի: Եկեղեցու բակ մտնելու ժամանակ նրան կանգնեցրեց տեսիլքին արժանացած եպիսկոպոսը և հարցրեց անունը: Սուրբ Նիկողայոսը, զարմացած ամենատարեց եպիսկոպոսի այդպիսի հարցից, սկզբում լռեց: Բայց երբ հովվապետը համառորեն սկսեց թախանձել այդ մասին, նա համեստորեն և ցածրաձայն պատասխանեց. «Ինձ անվանում են Նիկողայոս, քո սրբազնության ծառան, քահանայապետ»:

Եկվորի անունից և խորին հնազանդությունից համոզվելով, որ նա Աստծո ընտրյալն է, որը պետք է զբաղեցնի Միրի արքեպիսկոպոսական ամբիոնը, եպիսկոպոսը բռնեց նրա ձեռքը և բերեց մյուս եպիսկոպոսների ժողովին: Նրանք ուրախությամբ ընդունեցին նրան և կանգնեցրին եկեղեցու կենտրոնում: Այդ ընթացքում արքեպիսկոպոսի հրաշալի ընտրության մասին լուրը, չնայած գիշերվան, տարածվեց ողջ քաղաքում, և եկեղեցին լցվեց մեծ բազմությամբ՝ ցանկանալով տեսնել Աստծո հրաշալի ընտրյալին: Եպիսկոպոսը, որ արժանացել էր տեսիլքին, դիմեց բոլոր ներկաներին հետևյալ խոսքերով. «Ընդունե՛ք, եղբայրներ, ձեր հովվին, որին ձեզ համար օծել է Սուրբ Հոգին և որին Նա հանձնել է ձեր հոգիների կառավարումը: Ոչ թե մարդկային ժողովը, այլ Աստծո դատաստանն է նշանակել նրան: Ահա մենք ունենք նրան, ում ցանկանում էինք. գտանք և ընդունեցինք, ում փնտրում էինք: Նրա իմաստուն ղեկավարությամբ մենք աներկբա կարող ենք հուսալ Տիրոջը ներկայանալ Նրա փառքի և դատաստանի օրը»: Լսելով այդ խոսքերը և տեսնելով Աստծո ընտրյալին, ժողովուրդը ջերմեռանդորեն շնորհակալ եղավ Տիրոջը Նրա հրաշալի օգնության համար: Նիկողայոս սրբազանը, իմանալով հոգևոր աստիճանի մասին, որին ուզում են բարձրացնել իրեն, սկզբում երկար ժամանակ հրաժարվում էր դրանից: Բայց, տեղի տալով եպիսկոպոսների և ժողովրդի համառ թախանձանքներին, վերջապես համաձայնեց ընդունել արքեպիսկոպոսական աստիճանը: Սուրբ Մեֆոդին, Կոստանդնուպոլսի պատրիարքը, պատմում է, որ Աստծո սպասավորը դեռ Լիկիայի արքեպիսկոպոս Հովհաննեսի մահվանից առաջ էր հրաշալի տեսիլքով տեղեկացվել իրեն սպասվող հոգևոր բարձր աստիճանի մասին: Մի գիշեր սուրբ Նիկողայոսը տեսնում է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս Փրկիչը վսեմաշուք փայլով կանգնած է կողքին և նրան է մեկնում Ավետարանը՝ շրջանակված ոսկով ու մարգարտով, իսկ մյուս կողմը կանգնած է Սուրբ Աստվածամայրը և նրա ուսերին զցում է սրբազան շուրջառը:

Եպիսկոպոսների ժողովը սուրբ Նիկողայոսին ձեռնադրեց Միրլիկիայի Եկեղեցու արքեպիսկոպոս: Այսպիսով, հավատի և առաքինության լուսատուն՝ նախկինում թաքնված լինելով, սկսեց փայլել ողջ Միրլիկիայի Եկեղեցու համար:

Միրլիկիայի արքեպիսկոպոսությունն ընդունելու ժամանակ սուրբ Նիկողայոսն ասաց ինքն իրեն. «Այժմ, Նիկողայոս, քո դիրքն ու քո տեղը քեզանից պահանջում են, որ դու ամբողջովին ապրես ոչ թե քեզ, այլ ուրիշների համար»: Այդ պատճառով նա չսկսեց թաքցնել իր բարի գործերը, ինչպես նախկինում, անելով դա այժմ ոչ թե հպարտությունից կամ փառասիրությունից, այլ միայն համայնքի բարօրության և Աստծո անվան փառաբանման համար՝ համաձայն Փրկչի պատվիրանի. *Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է* (Մատթ. Ե, 16): Նա, ըստ սուրբ Դիմիտրի Ռոստովցու խոսքերի, «հայելին է իր հոտի բարի գործերի» և ծառայում էր, ըստ Պողոս առաքյալի, *օրինակ հավատացյալներին խոսքով, վարմունքով, սիրով, հավատով, սրբությամբ* (Ա Տիմոթ. Դ, 12):

Նա մեղմաբար էր և սրտով անչար, հոգով հնազանդ, օտար ամեն տեսակ գոռոզության ու շահամոլության: Չնայած իր բարձր աստիճանին, կյանքում սուրբ Նիկողայոսը շարունակում էր պահպանել խիստ չափավորություն և պարզություն. նա միշտ հագնվում էր պարզ, պասի կերակուր էր ուտում օրը մեկ անգամ՝ երեկոյան: Ամբողջ օրը մեծ հովվապետն իրեն վարժեցնում էր բարեգործության և հովվապետական գործերում: Նրա տան դռները բաց էին բոլորի առջև. յուրաքանչյուրին ընդունում էր սիրով ու սրտաբաց, որբերի համար լինելով հայր, աղքատների համար՝ սնուցող, արտասովորների համար՝ մխիթարիչ, հալածվածների համար՝ պաշտպան: Այս բազմաչարչար աշխատանքների մեջ նրան օգնում էին երկու քահանա՝ Պողոս Ռոդոսցին և Թեոդորոս Ասկալոնիտը, «բոլոր հույներին հայտնի այրեր,-նկատում է սուրբ Դիմիտրի Ռոստովցին,-իրենց բարի գործերով և ամբ»: Նրանց և ուրիշ աշխատակիցների հետ անխոնջ և հաջող գործում էր սուրբ Նիկողայոսը, և նրա հոտը ծաղկում էր:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ԴԻՈՎԼԵՏԻԱՆՈՍԻՆ ՀԱԼԱԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Սատանայի նախանձոտ աչքը, չկարողանալով հանգիստ նայել Քրիստոսի Եկեղեցու ծաղկմանը և միշտ ջանալով նրան ինչ-որ վնաս հասցնել, այս անգամ էլ նրան հանգիստ չթողեց և նրա նկատմամբ ուժեղ հալածանք հարուցեց: Այդ հալածանքը նրանով էր սարսափելի, որ այն ի հայտ եկավ երկարատև խաղաղությունից հետո, որից մինչ այդ օգտվում էր Քրիստոսի Եկեղեցին: Վալերիանոսի ժառանգորդները, որ հալածանք էին հարուցել քրիստոնեության դեմ III դարի երկրորդ կեսին, հաճախ փոխարինելով մեկը մյուսին, ստիպված էին ողջ զորությամբ հոգալ մերթ իրենց անհաստատ իշխանության մասին, մերթ դիմագրավել բարբարոսներին, որ ամեն կողմից հարձակվում էին Հռոմեական կայսրության վրա: Նրանք ժամանակ էլ չունեին մտածելու քրիստոնյաներին հալածելու մասին: Միայն Ավրելիանոս կայսրը (270-275), հակահարված տալով արտաքին և հաղթելով ներքին թշնամիներին, «պատրաստ էր մեզ հալածանքի ենթարկել,-գրում է Եվսևփիոսը,-բայց հազիվ էր մտածել և նոր-նոր էր ուզում մեր դեմ հրամանագիր ստորագրել, երբ նրան հասավ Աստծո դատաստանը»: Իսկ Ավրելիանոսի կարճաժամկետ ժառանգորդներից՝ Տակիտոսից (275), Ֆլորիանոսից (276), Պրովասից (276-282) և Կարայից (282-283) հետո գերագույն իշխանության հասած Դիոկլետիանոսը (285-304) իր իշխանության առաջին կեսին զբաղված էր աշխարհակալ կայսրության կառուցումով և ոչ միայն հանգիստ էր թողել Տիեզերական Եկեղեցին, այլև նույնիսկ բացահայտ բարեհաճ էր քրիստոնյաների հանդեպ: Քրիստոնյաներն սկսեցին շրջապատել կայսրին: Նրանք պետական բարձր պաշտոններ ստացան և բարեխղճորեն կատարում էին իրենց պարտականությունները: Կայսերն իրենց հավատարմությամբ նրանք առավել ամրապնդեցին Դիոկլետիանոսի բարեհաճ վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ: Օգտվելով դրանից, եկեղեցական առաջնորդները նախանձախնդրորեն հոգում էին մոլորյալ հեթանոսներին ճշմարիտ Եկեղեցու գիրկը գրավելու, բազմամարդ քրիստոնեական ժողովների համար վեհասքանչ տաճարներ կառուցելու մասին: Քրիստոնեության արագ տարածումը այն աստիճան գրգռեց մոլի կռապաշտներին, որ նրանք որոշեցին ինչ գնով էլ լինի ճնշել այն: Իրենց նպատակի միջոց ընտրեցին Դիոկլետիանոսի իշխանակից Գալերիանոսին, որն «ունեի հեթանոսության բոլոր արատներն ու բոլոր մոլությունները», և որը թախանձանքներով ու կեղծ զրպարտություններով ծեր Դիոկլետիանոսին տրամադրեց քրիստոնյաներին նախ հեռացնելու պալատից և զորքից, այնուհետև՝ զրկելու նրանց պետական պաշտոններից, ավերելու եկեղեցիները և վերջապես՝ բացահայտ, ամենուրեքյա և անողոք հետապնդման ենթարկելու նրանց: Կայսերական հրամանների զորությամբ քրիստոնեական եկեղեցիներն ավերվում էին «վերից վար»: Աստվածային և ժամասացության գրքերն այրվում էին հրապարակներում. եպիսկոպոսներին փակում էին բանտերում և կտտանքների ենթարկում. քրիստոնյաները ենթարկվում էին ամեն տեսակ վիրա-

վորանքների ու տանջանքների: Ամեն ինչ թույլատրված էր քրիստոնյաների դեմ: Ամենասովորական կենցաղային գործերում նրանք հանդիպում էին ոչ թե դատավորների՝ իրենց անմեղության պաշտպաններին, այլ գազազած թշնամիների: Մի եզրիպտացի եպիսկոպոս-նահատակի՝ Ֆիլեասի խոսքերով, քրիստոնյաներին վիրավորել թույլատրվում էր ամենքին, ով ուզում էր. ոմանց հարվածում էին դազանակներով, ուրիշներին ճիպտահարում էին, երրորդներին՝ մտրակում, նրանց՝ խառազաններով, սրանց՝ մտրակով: Քրիստոնեական արյունը հորդում էր վտակներով. հալածյալները թաքնվել էլ չէին կարող, եթե անգամ ցանկանային. կայսրության մեջ հազիվ թե որևէ տեղ մնացած լիներ, ուր հրապարակված և գործողության մեջ դրված չլինեին այդ սարսափելի հրամանները:

Հալածանքը, որ սկսվեց Նիկոմեդիայում, ուր հենց Ջատկի օրը տաճարում այրվեց մոտ 20 000 քրիստոնյա, մահաբեր շնչով տարածվեց շատ մարզերում և հասավ մինչև Միրիկիայի Եկեղեցի, որի առաջնորդն այն ժամանակ սուրբ Նիկողայոսն էր: Քրիստոսի Եկեղեցու համար հալածանքի դժվարին ժամանակ Լիկիայի հովվապետն աներկյուղաբար իր հոտը պահում էր հավատի մեջ, բարձր և անթաքույց քարոզելով Աստծո անունը: Դրա համար նա հետապնդման ենթարկվեց և շատ այլ քրիստոնյաների հետ փակվեց բանտում: Այստեղ նա ոչ քիչ ժամանակ անցկացրեց, համբերությամբ տանելով սովը, ծարավն ու նեղությունը, մտքով անգամ չանցկացնելով հրաժարվել Հիսուս Քրիստոսից: Բանտարկության ընթացքում սրբազանը չէր դադարում հոգալ իր հետ միասին բանտարկված քրիստոնյաների մասին: Սովյալներին նա սնուցում էր Աստծո խոսքով, ծարավներին հագեցնում էր բարեպաշտության ջրերով: Այդ կերպ նա վերադարձնում էր նրանց հավատը հանուն Քրիստոս Աստծո և հաստատում նրանց Նրա ամուր խոստովանության մեջ չարչարողների առջև, որպեսզի նրանք կարողանան տանջվել Քրիստոսի համար մինչև վերջ: Նրա առաջնորդության շնորհիվ բանտարկվածներից շատերը մինչև վերջ աներեր մնացին Քրիստոսի հավատի մեջ: Այդպիսին էին սուրբ Նիկողայոսի թե եկեղեցական կառավարման, թե բանտային կալանքի սխրակիցները. Կրիսկենտոսը, Դիոսկորիդոսը և Նիկոկլոսը, որոնք, սուրբ Անդրեյ Կրետացու խոսքերով, «սուրբ Նիկողայոսի ոգևորությունից ու նախանձախնդրությունից իրենց համար մարտիրոսական պսակ հյուսեցին»: Իսկ Քրիստոսի սուրբը, «պատրաստական նահատակը», փրկվեց Դիոկլետիանոսի հալածանքի ժամանակ, քանի որ նրա կյանքը պետք էր Աստծո անունը հետագայում փառաբանելու համար:

Հանդգնվելով, որ քրիստոնյաների նկատմամբ դաժանությունը ցանկալի արդյունքի՝ քրիստոնեության ոչնչացմանը չի հասցնում, Գալերիանոս կայսրը (Դիոկլետիանոսն այդ ժամանակ արդեն հրաժարվել էր գահից) սկսեց թուլացնել հալածանքը քրիստոնյաների նկատմամբ: 311 թվականին Գալերիոսը, տանջվե-

լով սարսափելի հիվանդությունից, որ ուղարկված էր Տիրոջ կողմից նրա դաժանության և անբարո կյանքի համար, բացահայտորեն «քրիստոնյաներին հայտնեց իր հանդուրժողականությունը, թույլատրելով նրանց կրկին մնալ քրիստոնյա և տներ կառուցել իրենց հավաքների համար», ուր նրանք «այդպիսի հանդուրժողականության համար պետք է աղոթեին իրենց Աստծուն առողջություն պարգևելու» նախկին հալածողին: Ենթարկվելով հրամանին, քաղաքի իշխանությունները դուրս էին հանում և ազատում բանտի կալանավորներին: Ականատեսի, Եվսեփիոսի վկայությամբ, «այդ իրադարձությունից հետո հանկարծ, ասես գիշերային խավարի ընդերքից, փայլատակեց ինչ-որ լույս. յուրաքանչյուր քաղաքում սկսեցին հայտնվել եկեղեցական համայնքներ, քրիստոնյաների բազմաքանակ խմբեր և դրա հետ մեկտեղ՝ ժամերգությունների համար սովորական հավաքներ: Անհավատներից յուրաքանչյուրը ոչ պակաս ապշած էր դրանից, զարմացած գործի մնան շրջադարձից և քրիստոնյաների Աստծուն հռչակում էր մեծ և միակ ճշմարիտը»:

Բանտից ազատվելուց հետո սուրբ Նիկողայոսը, «կամավոր նահատակը» և «անապաստան պսակակիրը», նորից զբաղեցրեց Միրլիկիայի ամբիոնը և էլ ավելի նախանձախնդրությամբ նվիրվեց իր բարձր պարտավորությունների կատարմանը: Սարսափելի հալածանքը, որ եկեղեցուն պարգևեց մի շարք նահատակներ ու խոստովանողներ, միաժամանակ մեծ վնաս հասցրեց նրան: Այդ պատճառով սուրբ Նիկողայոսը բացի իր ծառայողական սովորական աշխատանքներից ու հոգսերից պետք է նոր սխրանքներ գործեր, որ անհրաժեշտաբար ծագել էին երկարատև և սարսափելի հալածանքների հետևանքով: Ինչպես այն ժամանակվա շատ այլ հովիվների, անկասկած, նաև նրան էր վիճակված նորոգել հինն ու կառուցել նոր եկեղեցիներ, վերականգնել հալածանքների հետևանքով խարխլված ժամասացության և բարեպաշտության եկեղեցական կարգերը, թույլ տալ ապաշխարելու նրանց, ովքեր հալածանքի ժամանակ թուլացրել էին հավատը և նահանջել Քրիստոսից, իսկ հալածանքից հետո շտապում էին բժշկվել, թախանձագին խնդրելով ուժեղների փրկարար աջը. ընդունել և խաղաղեցնել «աստվածահարգության վեհանձն ջատագովներին», հանքահորերում տանջանքներից փրկվածներին. ինչպես նաև հայտարարել և պատրաստել մկրտության այն հեթանոսներին, որոնք դիմել էին Քրիստոսին՝ զգացված Քրիստոսի եկեղեցու հանդիսավոր-խանդակաթ ուրախությունից:

Այդ ուրախությունը մթազնեց Քրիստոսի եկեղեցու հանդեպ Գալերիանոսի ժառանգորդի՝ Մաքսիմին Դայոսի (311-313) թշնամական վերաբերմունքից. բայց ահեղ ամպերը շուտով ցրվեցին, քանի որ Մաքսիմինը տապալվեց Լիկինոսի կողմից: Սակայն արևելյան քրիստոնյաներին վիճակվեց կրկին ենթարկվել կարճատև հալածանքի. Մաքսիմինին հաղթող և Կոնստանդինոսի իշխանակից Լիկի-

նեսը, վերջինիս հետ հրատարակելով Միլանյան հրամանները (312-313), որ բարենպաստ էին Եկեղեցու համար, անսպասելի սկսեց նեղություն տալ և հետապնդել քրիստոնյաներին: Միրում, ինչպես և ընդհանրապես ուղղափառ Արևելքի քաղաքներում, որ ենթակա էին Լիկինեսոսի իշխանությանը, դեռևս այդ հետապնդումը նկատելի էր, և բարի հովիվ Նիկողայոսը դարձյալ պատրաստ էր ամեն ինչ ներդնել հանուն իր հալածվող հոտի: Աստծո ողորմածությամբ, սակայն, Լիկինեսոսի հալածանքը դաժան և երկարատև չէր. 323 թվականին պարտվելով Կոնստանդինոսից, հալածողը շուտով զրկվեց իշխանությունից և կյանքից: Լիկինեսոսին գահընկեց անելուն պես, այցելելով արևելյան մարզեր, հաղթանակած Կոնստանդինոսն սկսեց մեղմել ոչ մի մեղք չունեցող տառապյալ-քրիստոնյաների վիճակը: Նա տուն վերադարձրեց աքսորյալներին ու բանտարկվածներին, ազատեց տաժանակրության դատապարտվածներին, վերականգնեց խոստովանվողների քաղաքացիական և զինվորական իրավունքները, նահատակների ունեցվածքն էլ տվեց նրանց ժառանգներին կամ, նրանց բացակայության պատճառով, Եկեղեցուն. ընդհանրապես բոլորին, այս կամ այն կերպ հալածանքից տուժածներին նա առատորեն վարձատրեց կայսերական ողորմածությամբ:

Չբարարվելով դրանով, կայսրն արևելյան բոլոր կառավարիչներին «կռապաշտական մոլորության մասին հորդոր» ուղարկեց, իսկ յուրաքանչյուր գավառի եկեղեցիների հովվապետներին գրեց, որպեսզի նրանք ջանադրորեն զբաղվեն եկեղեցիների ստեղծումով, կամ կարգի բերելով, ինչը պահպանվել է, կամ տարածելով դրանք, կամ, եթե պետք է, կառուցել նորերը, և տեղնուտեղը նրանց լիազորություն տվեց, «կարիքի դեպքում աջակցություն պահանջել կառավարիչներից և նահանգի ղեկավարներից», որոնց գրավոր կարգադրություն էր արված ջանադրաբար կատարել նրանց պահանջները:

Կայսեր բոլոր նման կարգադրությունները, ժամանակակցի՝ Եվսեփիոսի վկայությամբ, «ի կատար էին ածվում փութաջանությամբ»: Այսպիսով, Արևելյան եկեղեցիների առաջնորդները (այդ թվում և սուրբ Նիկողայոսը) լիակատար ազատություն ստացան հոգ տանելու Աստծո փառքի և մերձավորներին փրկելու մասին:

**ՓՈՒԹԱՋԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԵՎ ՀԵՐԵՏԻԿՈՍՆԵՐԻՆ ԱՐՄԱՏԱԽԻԼ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նիկողայոս սրբազանը Միրլիկիայի Եկեղեցու արքեպիսկոպոս եղած ժամանակ հռչակվեց առանձնակի նախանձախնդրությամբ ուղղափառ հավատի հաս-

տատման և հեթանոսությունն ու հերետիկոսությունն արմատախիլ անելու գործուն, այդ պատճառով Եկեղեցին ըստ արժանվույս նրան անվանում է «բարեպաշտության վիթխարի սյուն», «Ուղղափառության հաստատուն ամրան», «որոմների հմայքները կտրող սուր»:

Նիկողայոս սրբազանի վախճանից չորս հարյուրամյակ անց սուրբ Անդրեյ Կրետացին, հիշատակի տուրք տալով միրլիկյան տաճարի աստվածակիր հորը, նկարագրում է նրա հովվական եռանդը Աստծո փառքի և մերձավորների փրկության մասին հետևյալ խոսքերով. «Ինչպե՞ս անվանենք քեզ, - դիմում է նա ննջեցյալ հովվապետին: - Մշա՞կ: Այդպե՞ս: Այդ անունը, հոգևոր իմաստով, պատշաճ է քեզ: Քանի որ դու, բնաջնջելով ողջ Լիկիայի նահանգի անհավատության որոմները, պարարտացրիր խելամիտ արոտավայրերը, ցանեցիր այնտեղ բարեպաշտության կենդանի խոսքը և ինչպես ամբարում՝ հոգիների մեջ հավաքեցիր հոգևոր հունձքը: Անվանե՞նք, արդյոք, քեզ ճարտարակերտ: Մե՞ղք չենք գործի: Քանի որ քո խոսքի ուժով դու ավիրեցիր կռապաշտական զոհարանները, դևերի այդ որջը, եկեղեցիներ կանգնեցրիր Քրիստոսին, սուրբ տաճարներ կառուցեցիր ի պատիվ նահատակների և, որպես աշխատասեր մշակ, որթնատունկն այս բարեբեր դարձրիր, իսկ հոգու ճարտարապետությամբ, որպես Եկեղեցու իմաստուն ճարտարակերտ, հաստատեցիր այն ճշմարիտ հավատի հիմքով: Անվանե՞նք քեզ մարտիկ: Անվանումն արդարացի կլինի. քանի որ, պայքարելով աներևույթ ուժերի դեմ, դու, որպես մի զորապետ, ստանձնեցիր հոգևոր ողջ սպառազինությունը. քո մեջքը գոտեպնդած ճշմարտությամբ, հազած արդարության զրահները և քո ոտքերը հազած-կապած՝ պատրաստ խաղաղության Ավետարանին (Եփես. 2, 14, 15): *Փրկության սաղավարտով ետ մղելով* կրքերի գրոհը, դու մնացիր ամուր և անսասան որպես քարը: Պաշտպանվելով *հավատի վահանով* և թշնամական սրերի դեմ աներեր հույսով, դու ոչնչացրիր հակառակորդներին քո հարվածներով և, ի դերև անելով նրանց բոլոր խարդավանքները, արիաբար պաշտպանեցիր քո հոտը նրանցից»:

Նիկողայոս սրբազանը նախ և առաջ չէր կարող անտարբեր լինել, թե ինչպես Լիկիա նահանգի շատ բնակիչներ կործանվում էին պիղծ կուռքերին ծառայելով: Լիկայում այն ժամանակ դեռ մնացել էին հեթանոսական մեհյաններ, որոնք գրավում էին բազմաթիվ երկրպագուների: Առանձնակի պաշտամունք ուներ Ափրոդիտե աստվածուհին, որի անամոթ երկրպագությունը տարածված էր Փոքր Ասիայում: Նրա հոյակերտ տաճարը շլացնում էր հենց Միրում. տաճարում ծառայող քրմերն աչքի էին ընկնում անառակությամբ, որին տրվում էին բացահայտորեն և որով գայթակղում էին հեթանոսների աստվածուհուն երկրպագության այցելողներին: Իհարկե, հովվապետության հենց սկզբում Նիկողայոս սրբազանին վրդովեցնում էր այդ անվայելուչ վայրը, որ բավականին խոչընդոտում էր քրիս-

տոննեության հաջող տարածմանը, և ջանում էր ոչնչացնել այն: Բայց Դիոկլետիանոսի և նրան հաջորդող հեթանոս կայսրերի հալածանքի ժամանակ, որ ջանում էին վերականգնել հեթանոսությունը և ճնշել քրիստոնեությունը, անշուշտ, խոսք իսկ չէր կարող լինել աստվածամերժ կռատան ոչնչացման մասին: Դրա համար նպաստավոր ժամանակ եկավ Կոնստանդինոսի թագավորության օրոք, որն Արևելյան Եկեղեցու կառավարիչներին ուղարկած իր «կռապաշտական մոլորությունների մասին հորդորներում», հեթանոսական կռատները համարում էր մոլորություն և դրանով անուղղակիորեն թուլատրում էր քանդել դրանք:

Եվ ահա Նիկողայոս սրբազանը, օգտվելով բարեպաշտ կայսեր թուլտվությունից, քանդեց իր երկրի բոլոր հեթանոսական կռատները, այդ թվում և Ափրոդիտեի տաճարը՝ հիմնեհատակ ավերելով: Կռատների ավերումը խելքի բերեց հեթանոսներին և նրանց գրավեց Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու գիրկը: «Նախկին սնահավատ մարդիկ,-գրում է Եկեղեցու պատմաբան Եվսևփիանոսը,-սեփական աչքով տեսնելով իրենց մոլորությունների սնանկությունը և իսկապես գիտակցելով ամենուր հանդիպող նախկին տաճարների ու կուռքերի դատարկությունը, դիմեցին փրկարար ուսմունքին»:

Բայց մարդկային ցեղի թշնամին, Կոնստանդինոս Մեծի թագավորության օրոք բազմաքանակ կռատների ավերման հետևանքով զրկվելով սնոտիապաշտ հեթանոսական զանգվածների վրա իշխելուց, չդադարեց Քրիստոսի Եկեղեցու վրա չարանենգ հարձակումներից: Նրա մեջ նա ցանց հերետիկոսների որոմներ, որոնք շուտով հասունացան և սկսեցին նրա մեջ սերմանել անհաշտություն ու երկպառակություն: Նիկողայոս սրբազանի ժամանակակիցներից շատերը, տրվելով իմաստակությանը, հերտիկոսների առաջացման մեղավոր դարձան, երկար ժամանակ պառակտելով Քրիստոսի Եկեղեցին: Բայց անառակ մտքի այդ տատանումները,-ասում է մեծ քահանայապետ Ինոկենտիոսը,-բոլորովին խորթ էին Միրիփիայի Եկեղեցու բարեպաշտ հովվին: Լինելով առաքյալ այրերի՝ հոգիների հովվության ժառանգորդը, նա նաև նրանց պարզ հավատի ժառանգորդն էր: Նրանց նման նա քրիստոնեության բարեպաշտության կատարելությունը համարում էր ոչ թե անհասանելիության մեջ խորանալը, այլ իմացածի ճշմարիտ իրագործումը. նրանց նման հավատը գնահատում էր ոչ թե խոսքերով, այլ գործերով: Մտածել այնպես, ինչպես բոլոր ճշմարիտ հավատացյալները, սովորեցնել այնպես, ինչպես սովորեցրել են անցած դարերի հայրերը. ահա այն արքայական ճանապարհը, որով գնում էր Նիկողայոս սրբազանը և առաջնորդում իր հոտը:

Եվ նույն հերետիկոսների հետ վարվեցողության ու խրատների մեջ մեծ հովվապետը մեղմաբարո էր և մեծահոգի, ինչը բնորոշ է Քրիստոսի հոտի ճշմարիտ հովվին: Նրանց հետ շփվելու առաջին և ամենագործուն միջոցը նա համարում էր հոգևոր սուրը, այսինքն՝ Աստծո խոսքը: Սուրբ Անդրեյ Կրետացին հերետի-

կոսներից մեկին Նիկողայոս սրբազանի այդպիսի խրատներից բերում է հետևյալ օրինակը:

«Մի ժամանակ դու,-դիմում է նա Նիկողայոս սրբազանին,-ինչպես պատմում են, դիտելով Քրիստոսի որթատունկ և հանդիպելով երջանկահիշատակ այր Թեոգինեսին (այն ժամանակ նա Մարկիոնիտեսի եպիսկոպոսն էր), Սուրբ Գրքի բառերով մերկացրիր նրա մոլորություններն այնքան ժամանակ, մինչև ստից ճշմարտության դարձի չբերեցիր: Բայց քանի որ նա բորբոքվել էր, որ այդպես մերկացվել էր, նկատելով այդ, բարձր ձայնով դու ասացիր հետևյալ առաքելական հորդորը. *(արեգակը) ձեր բարկության վրա թող մայր չմտնի* (Եփես. Դ, 27): Եղբայր իմ, հաշտվենք»:

«Աստծո խոսքի սրով,-ասում է սուրբ Անդրեյ Կրետացին նույն Նիկողայոս սրբազանի մասին,-դու մինչև վերջ արմատախիլ արեցիր արիոսականների բաժանարար հերետիկոսությունը և սավուղականների միությունը: Ինչպես և բոլոր նրանց, ովքեր համարձակվում էին բաժանել Միակը Միակից և Սուրբ Երրորդությունը Քրիստոսից, ճշմարիտ Աստծուց, որ մարմին առավ մեր փրկության համար, և ճիշտ չհասկանալով մարմնավորման խորհուրդը՝ կամ համարձակվում էին չընդունել ի դեմս միակ Քրիստոսի և Աստծո երկու բնույթների միավորումը առանց այլոց խառնելու, կամ թույլ էին տալիս նրանց բաժանումը. այս բոլոր անարդար իմաստակներից, որ մեկ այս կամ մեկ այն կողմ են թեքվում, դու, որպես Թիմեոսը, ոչնչացրիր սրի մի հարվածով, ամեն կերպ գթաշարժելով ամենքի Աստծուն»: Եկեղեցին հատկապես չափազանց տուժեց IV դարի սկզբում հերետիկոս Արիոսից, որը մերժում էր Աստծո Որդու Աստվածությունը և չէր ընդունում Յայր Աստծո հետ Նրա միևնույն էությունը: Ո՛չ իմաստուն միջոցառումները առաքելահավասար Կոնստանդինոսի, ոչ Եկեղեցու հովիվների հայրական հոգացողությունը չկարողացան ճնշել այդ անաստված ուսմունքը: Այն լայն ալիքով ծավալվում էր քրիստոնեական աշխարհով մեկ: Դրա ընդունմանը հակված էր նույնիսկ ինքը՝ Եվսեփիոսը, որին մենք պարտական ենք քրիստոնեության առաջին դարերի պատմության լուսաբանման համար:

Ցանկանալով Քրիստոսի հոտում խաղաղություն հաստատել, ցնցված հերետիկոս Արիանոսի ուսմունքից, առաքելահավասար կայսրը Ալեքսանդրիայի եպիսկոպոս Ալեքսանդրի խնդրանքով ուղերձներ հղեց իր տիեզերական թեմի բոլոր եպիսկոպոսներին, հրավիրելով նրանց Առաջին Տիեզերաժողովի: Այդ ժողովը կայացավ Քրիստոսի Ծննդի 325 թվականին, Բութանիայում գտնվող գլխավոր քաղաք Նիկիայում: Այստեղ՝ իր իսկ կայսեր նախագահությամբ հավաքվեցին 318 եպիսկոպոսներ, որոնց մեջ առաջին անգամ տեղ զբաղեցրին Օսիյա Կորդուբացին, Եփեսոսի Անտիոքացին և Մակարիոս Երուսաղեմցին: Այդ ժողովում, որ ձգվեց մոտ երկու ամիս, մտցվեց եկեղեցական համընդհանուր օգտագործման

«Արդեն կեսգիշերն անց էր,-գրում է նա,-երբ ես դուրս եկա Նիկիայի երրորդ հոյակերտ դարպասներով, որ Արքայական անունն էին կրում, քանի որ դրանցով մայրաքաղաքից մեկնում էին կայսրերը. դարպասներին նաև հաղթական գրություն կա, որի վրա այժմ ծիծաղում են ժամանակն ու մարդիկ. «Այստեղ վերջնական հաղթանշանն է անամոթ սարակինոսների հրոսակների վրա, այստեղ քրիստոսասեր կայսրերը մեր, Լևոնն ու Կոնստանդինոսը, նորոգեցին քաղաքը, վերականգնելով սույն աշտարակը երեք փութ ոսկու գնով և յոթնամյա աշխատանքով»: Բայց մի այլ սրբազան ավանդություն է պահպանվել այս նույն դարպասների մասին. թուրքերն իրենք են այն կրկնում: Պահակը, որ ուղարկվել էր ի պատիվ ինձ այանից կամ քաղաքապետից, վիթխարի հրակնատներից մեկում, հոյակապ դարպասներից աջ, մեզ ցույց տվեց սուրբ Նիկողայոս Սքանչելագործի, այսպես կոչված բանտը. այստեղ, ըստ տեղական ավանդության, նա բանտարկված էր այն բանի համար, որ ժողովում հարվածել էր Արիանոսին, պաշտպանելով հավատի դավանանքները, և կապանքի մեջ էր պահվում, մինչև երկնային վերին ատյանից արդարացվելը, որը նշանավորվեց Ավետարանի հայտնությամբ և շուրջառով, ինչպես դա պատկերվում է նրա սրբապատկերներում: Սրբազանի հանդեպ խորին հարգանքը, իսկ այն կարելի է իսկապես ասել՝ համընդհանուր է, առկա է նույնիսկ մահմեդականների մեջ. ինչպես՝ բացատրել այդ երջանիկ ազդեցությունը, որը Աստծո այս սպասավորը բոլորից առավելություն ունի բոլոր ցեղերի ու լեզուների վրա»:

Այդ ավանդության մասին պատմությունը՝ կապված այլ պատմական որոշ հետաքրքիր տեղեկությունների հետ Նիկիա քաղաքի վերաբերյալ, մենք գտնում ենք մի ուրիշ, ավելի ուշ ժամանակի, իր անունը չհիշատակած, ճանապարհորդի մոտ, որը Նիկիայում եղել է 1872 թվականին: «Մենք ուղևորվում էինք,-ասում է նա,-անայի տեղերով դեպի Նիկիայի հյուսիսային դարպասները, որոնք հայտնի են Կոնստանդինոպոլյան անվամբ: Դրանք կազմված են երեք շարք դարպասներից. ներքին, միջին և արտաքին: Դրանցից հնագույնը ներքինն է: Դրանք հեթանոսական շրջանի են: Երկու դարպասամերձ սյուներ վերջավորվում էին Գորգոնի՝ ճերմակ մարմարակերտ վիթխարի գլուխներով: Մեկը դեռևս կանգնած է տեղում և գեղազմայլ երևում է հարևան ծառերի կանաչների արանքից: Մյուսն ընկած է գետնին՝ քարակուտակների մեջ: Միջին դարպասները, որոնք բյուզանդական ծագում ունեն, հրաշալի են իրենց գեղեցկությամբ: Իրենց տեսակի մեջ դրանց կարելի է համարել բյուզանդական արվեստի օրինակ: Դրանք շարված են գորշ, կանոնավոր տաշած քարից, կազմված բարձր և խոր կամարով միացված կամրջամասից, և դրսի կողմից երկու որմնախորշով: Որմնախորշերում դեռ պահպանվել են երբևէ եղած պատկերներ: Այսպես, մեկում երևում էին սուրբ Նիկողայոսի թույլ ուրվագծերը՝ ընտրյալի գլխի երկու կողմերում Փրկչի և Աստվածամոր փոքր

պատկերներով, ինչպես դա պատկերվում է մեզ մոտ և ինչպես երբեմնակի հանդիպում է հունական սրբապատկերներում... Այս երեք դարպասներից հատկապես միայն միջիններն են մտնում քաղաքի պատից ներս: Դրանցից արևելք առաջին աշտարակում ցույց են տալիս սուրբ Նիկողայոսի զնդանը: Դրա ներքևի մասերը լցված են հողով: Վերևիներում ոչինչ չկա, որ բանտ հիշեցնի: Ավանդույթն, այնուամենայնիվ, վառ է: Այդ է վկայում նաև վերը հիշատակված սրբազանի պատկերը, որը գտնվում է այդ աշտարակի մոտ»:

Ժողովից վերադառնալուց հետո Նիկողայոս սրբազանը շարունակում է Քրիստոսի Եկեղեցու կառուցման հովվապետական բարեգործական աշխատանքները. հաստատում էր քրիստոնեական հավատը, հեթանոսներին ճշմարիտ հավատի էր դարձնում և խրատում հերետիկոսներին, «փրկելով նրանց բազմությունը կործանումից, չերերալով հերետիկոսական հարձակումներից և քշելով Քրիստոսի բանավոր հոտից այդ գիշատիչ գայլերին» (Անդրեյ Կրետացի): Ինչպես իմաստուն մշակ,-ասում է սուրբ Դիմիտրի Ռոստովցին,-հացահատիկը քամհարելով իր կալատանը, հունդը հավաքում է մի տեղ, իսկ որոնը զցում այլ տեղ. այդպես էլ Քրիստոսի կալատան ողջամիտ սարքող սուրբ Նիկողայոսը հոգևոր շտեմարանը լցնում էր բարի գործերով, ջանադրորեն զատելով Տիրոջ հասկը հերետիկոսական ուսմունքի որոնից և հեռու շարտելով իր կալատանից վերջինները, ինչի համար էլ Եկեղեցին իրավացիորեն նրան անվանում է «բահ, որ քաղիանում է Արիանոսի մոլախոտային ուսմունքը»: Այդպիսի հոգատարությամբ վերաբերվելով իր հոտի հոգևոր կարիքներին, Նիկողայոս սրբազանը չէր արհամարհում և նրանց մարմնական կարիքները: Ահա իր հոտի մարմնական կարիքների մասին հոգատարության նման մի դեպք: Լիկիայի երկրում սաստիկ սով էր տիրում: Միրում ցամաքել էին կերակրի պաշարները, և քաղաքացիներից շատերը ծայրահեղ կարիքի մեջ էին: Եթե մի քիչ էլ շարունակվեր այդ տխուր վիճակը, ապա ժողովրդական մեծ աղետը անխուսափելի էր: Բայց Նիկողայոս սրբազանի կողմից բարեպատեհ ժամանակ արված հրաշալի օգնությունը քաղաքն ու երկիրը չհասցրեց աղետի: Դա տեղի ունեցավ հետևյալ կերպ:

Մի առևտրական, իր նավը Իտալիայում բարձելով հացով, նավարկելուց առաջ երազում տեսնում է Նիկողայոս Աքանջելագործին, որը հրամայում է նրան հացը վաճառքի տանել Լիկիա և որպես կանխավճար նրան տալիս է երեք ոսկեդրամ: Անմիջապես արթնանալով, վաճառականը, ի զարմանս իրեն, իսկապես իր ձեռքում տեսնում է երազում սրբազանի տված ոսկեդրամները: Դրանից հետո նա իր պարտքն է համարում կատարել երազում հայտնված սուրբ մարդու կամքը, և նավարկում է Միրի, ուր և վաճառում է հացը, միաժամանակ պատմելով հրաշք տեսիլքի մասին: Միրիի քաղաքացիները, առևտրականի երազում հայտնված մարդու մեջ ճանաչելով իրենց հովվապետ Նիկողայոս սրբազանին, ամենաջեր-

մեռանդ շնորհակալանքները հայտնեցին Տիրոջը և Նրա սուրբ ծառային, որ այդպես հրաշքով կերակրել էր իրենց սովի ժամանակ:

ԹՇՆԱՄԱՅԱԾՆԵՐԻ ՀԱՇՏԱՐԱՐԸ ԵՎ ԱՆՍԵՂ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ՀՁՈՐ ՊԱՇՏՊԱՆԸ

Օգտվելով իր սրբության ազդեցությունից և մեծ հարգանքից, Նիկողայոս սրբազանը դեռ կյանքի ընթացքում հռչակվել էր որպես թշնամացածների հաշտարար, անմեղ դատապարտվածների հզոր պաշտպան և հիանալի հովանավոր ու ազատարար անհմաստ մահից:

Ավանդությունը պահպանել է թշնամացածների նրա հաշտարարության և անմեղների դատապարտվածության պաշտպանության դեպքեր:

Կոնստանդինոս Մեծի թագավորության ժամանակ Փռյուզիայի երկրում (Լիկիայից հյուսիս) խռովություն բռնկվեց: Դրա վերացման համար Կոնստանդինոս թագավորը զորք ուղարկեց երեք զորավարների ղեկավարությամբ՝ Նեպոտիանոսի, Ուրսոսի և Երպիլիոնոսի: Վերջինները նավերով Կոստանդնուպոլսից զորքով նավարկեցին և, ծովային ուժեղ ալեկոծման հետևանքով չհասնելով Փռյուզիա, կանգ առան Լիկիայում, Ադրիատիկի ափերին, ուր քաղաքն էր:

Ծովն անհանգիստ էր, և զորքն ստիպված էր երկար մնալ այստեղ: Այդ ընթացքում պաշարներն սկսեցին սպառվել: Այդ պատճառով զինվորները հաճախ իջնում էին ափ և բնակիչներից ուժով մթերք խլում: Սրանք ընդվզեցին նման բռնությունից, և ահա Պլակոնատեում տեղի ունեցավ դաժան և արյունալի մարտ զինվորների և տեղի բնակիչների միջև:

Հագիվ էր Նիկողայոս սրբազանը լսել Պլակոնատեում կատարվածի մասին, երբ անմիջապես շտապեց այնտեղ խռովությունը հանդարտեցնելու նպատակով: Բոլորի կողմից հարգված Աստծո սպասավորի ժամանման լուրը վերջ տվեց երկպառակությանը. սուրբ Նիկողայոսին ընդառաջ եկան թե՛ Պլակոնատեի բնակիչները, թե՛ խռովության մեղավորները՝ զինվորները: Սուրբ Նիկողայոսը զորավարներին հանդեց վերականգնել խաղաղությունը և հնազանդությունը իրենց զորքում և թույլ չտալ վիրավորել տեղի բնակիչներին, ընդ որում նրանց հրավիրեց քաղաք և բարեկամաբար հյուրասիրեց:

Թշնամացածներին հաշտեցնելով, Աստծո սուրբ սպասավորը գրեթե միաժամանակ պաշտպան կանգնեց անմեղ դատապարտվածներին այլ հարցում: Այն ժամանակ, երբ նա Պլակոնատեում էր, Միրիից նրա մոտ եկան քաղաքացիներ, խնդրելով պաշտպանել ոչ մի մեղք չգործած երեք համաքաղաքացիների, որոնց

Լսելով Միրիի քաղաքապետ Եվստափիի անարդար արարքի մասին, Նիկողայոս սրբազանը շտապեց Միրի, որպեսզի հասցնի ազատել ապօրինաբար մահվան դատապարտվածներին, և խնդրեց իրեն հետևել արքայական երեք զորավարների: Երբ սուրբ Նիկողայոսը հասավ տեղ, որ անվանվում է Առյուծ, նրան ասացին, թե մեղադրյալներն արդեն տարվել են Դիոսկուրոսյան դաշտ մահապատիժն ի կատար ածելու համար: Արագացնելով քայլերն ու հասնելով սուրբ Կրիսթենդի եկեղեցուն, Աստծո սպասավորը տեսավ դաշտը՝ դատապարտյալներին շրջապատած ժողովրդի բազմությամբ: Նրանք միանգամայն պատրաստ էին մահապատժի. նրանց ձեռքերը կապած էին, դեմքերը՝ ծածկած, ծնկները՝ ծալված, մերկացված պարանոցները ձգված՝ մահաբեր հարվածի սպասումով: Թվում էր՝ մարդկային օգնությունն անհնաստ էր: Սակայն վճռական պահին մահապատժի վայրում հայտնվեց Նիկողայոս սրբազանը, դահճի ձեռքից խլեց մերկացված սուրը, գցեց գետնին և ազատեց անմեղ դատապարտվածներին: Ներկաներից ոչ մեկը չհամարձակվեց կանգնեցնել նրան. բոլորը համոզված էին՝ որ ինչ էլ նա անի, անում է Աստծո կամքով: Կապանքներից ազատված երեք տղամարդիկ, արդեն իրենց տեսած լինելով մահվան դարպասների մոտ, լալիս էին ուրախության արցունքներով, և ժողովուրդը բարձրաձայն փառաբանում էր Աստծո սպասավորին հովանավորության համար:

Այդ ժամանակ մահապատժի վայր եկավ և ինքը՝ քաղաքի ղեկավար Եվստափին, որի հրամանով պետք է իրագործվեր անմեղների մահապատիժը: Տեսնելով սուրբ ընտրյալի իրավացիությունը և գիտակցելով սեփական մեղավորությունը, որի պատճառով կարող էր պատժվել արքայից, Եվստափին ընկավ սուրբ Նիկողայոսի ոտքերը՝ ներում աղերսելով նրանից: Բայց թշնամու չարամիտ ներշնչանքով, նա չէր ցանկանում իրեն մեղավոր ճանաչել հանցագործության մեջ և ողջ մեղքը բարդում էր քաղաքի երկու ավագների՝ Սիմոնիդոսի և Եվդոքսիայի վրա: Այդպիսի սուտն աննկատ չմնաց սուրբ ընտրյալից, որը Եվստափիի համառության պատճառով ուզում էր մատնել նրան արքային և սպառնում էր նրան տանջանքներով այն աշխարհում անարդար կառավարման համար: Վերջապես Եվստափին ազնվորեն խոստովանեց, որ երեք անմեղ քաղաքացիների մահվան դատապարտումը իր ձեռքի գործն է և զղջանքի արցունքներով ներում խնդրեց սուրբ Նիկողայոսից: Եվստափիի անկեղծ զղջումն ընդունվեց Աստծո սպասավորից, և նա ներեց նրան:

Արան ներկա արքայական զորավարներն ապշած էին Նիկողայոս սրբազանի եռանդով ու իշխանությամբ, չկասկածելով, որ ինչ-որ ժամանակ նա նույնպիսի օգնություն ցույց կտա իրենց, ինչպես Միրիի երեք անմեղ դատապարտյալներին: Ծանապարհ ընկնելով Տիրոջ սրբի բարեմաղթանքներով, նրանք արագ հանդարտեցրին խռովությունը Փռյուզիայում և, ուրախացած արքայական հանձնարարության բարեհաջող կատարումից, վերադարձան տուն: Արքան զորապետերին ողողեց նվերներով և շնորհներով:

Արքայի բարեհաճությունը երեք զորապետերի հանդեպ նախանձ ծնեց նրանց թշնամիների սրտերում, և նրանք մտադրվեցին կործանել զորավարներին: Դրա համար նրանք զորապետերին զրպարտեցին Կոստանդնուպոլսի քաղաքապետ Եվլավոսի առջև արքային դավաճանելու և նրան գահընկեց անելու մեջ: Ոսկով կաշառված Եվլավոսը անսաց նրանց զրպարտանքին և արքային հավատացրեց լսածի ճշմարտացիությանը: Վերջինս, ապշահար իր կողմից շնորհների արժանացած զորավարների նենգ երախտամոռությունից, հրամայեց նրանց զնդան նետել:

Որոշ ժամանակ անց զորավարների թշնամիները, զգուշանալով, թե հանկարծ գործի քննության ժամանակ չբացահայտվի իրենց զրպարտանքը, նորանոր նվերներով Եվլավոսին մղեցին այն բանին, որ նա կայսրից թույլտվություն խնդրի զորապետերին անհապաղ մահապատժի ենթարկելու մասին: Շահասեր քաղաքապետը տխրադեմ ներկայացավ արքային: «Բանտարկյալներից ոչ ոք չի ուզում ապաշխարել, - ասաց նա: - Ընդհակառակը, նրանք հաստատ են իրենց նողկալի դիտավորությունների մեջ և քո հանդեպ մեծ չարություն են տածում: Հրամայիր, արքա, անմիջապես մահապատժի ենթարկել նրանց, որպեսզի նրանք քո հանդեպ իրենց չար դիտավորությունները չիրականացնեն»: Կրկնակի մոլորության մեջ ընկնելով, կայսրը սարսափելի զայրացավ և հրամայեց հաջորդ առավոտյան մահապատժի ենթարկել զորապետերին: Դժբախտ կալանավորներին տխուր լուրի հայտնելը վիճակվեց բանտապանին: Նա չափազանց ցավում էր կատարվածի համար, համոզված մահվան դատապարտվածների անմեղությանը, և դառնորեն ողբում էր առաջիկայում նրանցից բաժանվելու համար: «Լավ կլիներ, - ասում էր նա, - որ մենք ծանոթացած չլինեինք և ես բավականություն ստացած չլինեի ձեզ հետ հացկերույթից ու զրույցներից. այդ ժամանակ ես չէի տանջվի այսպես ձեզ հետ առաջիկա բաժանումից և այդքան վիշտ չէր լինի իմ հոգում: Վաղը մենք կբաժանվենք ընդմիջտ: Ցավ է ինձ համար: Այլևս երբեք չեմ տեսնի ձեր սիրելի դեմքերը, չեմ լսի ձեր գեղեցիկ և իմաստուն խոսքերը: Առավոտյան նշանակված է մահապատժի: Այժմ կանխավ արեք ձեր ունեցվածքի մասին կտակը: Վաղը ուշ կլինի»:

Լուր առնելով մահվան դատավճռի և չինանալով իրենց գործած ոչ մի մեղքի մասին, զորապետերը հուսահատվեցին. նրանք պատառոտեցին իրենց հագուստները և պոկոտեցին մազերը: «Ո՞ր թշնամին էր նախանձում մեր ապրուստին, - ասում էին նրանք: - Ինչի՞ համար ենք մենք մեռնում, ինչպես չարագործները: Ի՞նչ ենք արել մենք, որ մեզ պետք էր զրկել կյանքից»: Դրա հետ մեկտեղ նրանք վկայակոչում էին իրենց անմեղությունը բոլոր հարազատներին, ծանոթներին և Իրեն՝ Աստծուն:

Բարեբախտաբար, զորապետերից մեկը, Նեպոտիանոսը, հիշեց Նիկողայոս սրբազանին, որ անխուսափելի մահից փրկեց Միրիի անարդար դատապարտված երեք քաղաքացիների: Հաստատապես հուսալով, որ անմեղների հիանալի պաշտպանն առանց օնության չի թողնի իրենց, նրանք ջերմեռանդ աղոթքներով դիմեցին Տիրոջը պաշտպանություն թախանձելով Նիկողայոս սրբազանի միջոցով: «Աստված Նիկողայոսի, այն ժամանակ ազատելով երեք տղամարդկանց անտեղի մահից, օգնիր այժմ և մեզ, քանի որ մենք օգնող չունենք մարդկանց մեջ: Մեզ մեծ փորձանք է պատահել, և ոչ ոք չկա, որ ազատի մեզ դրանից: Ահից մեր ծայրը կտրվում է, տանջանքների հրից լեզուներս չորանում է կոկորդում, այնպես որ, մենք չենք կարող այլևս սովորական աղոթք հղել Քեզ: Տե՛ր, ազատիր մեզ նրանց ձեռքից, ովքեր մեր մահն են պահանջում: Վաղն ուզում են մեզ մահապատժի ենթարկել. շտապիր մեզ օգնության և ազատիր մեզ, քանի որ մենք արժանի չենք խայտառակ մահվան»:

Նրանց աղոթքն ընդունվեց Մարդասերի կողմից, և Նա ազատեց նրանց մահվանից Իր սուրբ սպասավոր Նիկողայոսի միջոցով: Հենց նույն գիշեր Աստծո սպասավորը հայտնվեց արքայի երագում և խստորեն ասաց նրան. «Ազատիր զնդանից երեք զորապետերին, քանի որ նրանք անարդար են դատապարտված և անմեղորեն տանջվում են»: Այնուհետև պատմեց արքային, թե ինչպես էին զրպարտված զորապետերը, և վերջում ավելացրեց. «Եթե դու չլսես ինձ և չազատես նրանց, ապա կբարձրացնեն նույնպիսի խռովություն, ինչպես Փռյուզիայում, և դու կզոհվես»:

Ջարմանալով հայտնված մարդու տիրական հրամանից և չհասկանալով, թե ինչպես կարող էր նա գիշերով ընկնել պալատ, թագավորն ասաց նրան. «Ո՞վ ես դու, որ սպառնում ես ինձ պատերազմով ու կործանումով»: «Ես Նիկողայոսն եմ, Միրիի թեմի արքեպիսկոպոսը», - եղավ հայտնված մարդու պատասխանը: Այդ տեսիլքից հետո թագավորն արթնացավ և սկսեց մտածել այն մասին, թե ինչ կարող էր դա նշանակել: Նույն գիշեր Նիկողայոս սրբազանը հայտնվեց և քաղաքապետ Եվլապիոսի երագում՝ պահանջելով ազատ արձակել անմեղ դատապարտված զորավարներին:

Առավոտյան կայսրն իր մոտ կանչեց Եվլավոսին և, իմանալով, որ նա նույնպես նման երազ է տեսել, հրամայեց բերել մահվան դատապարտված զորապետերին: «Ի՞նչ կախարդություն եք արել դուք,-խիստ հարցրեց նա,-որպեսզի այս գիշեր մարդ ուղարկեք ինձ մոտ, որը պահանջի ազատ արձակել ձեզ, հակառակ դեպքում սպառնալով կործանարար երկպառակիչ պատերազմ բարձրացնել»: Ջորապետերը, ոչինչ չիմանալով կայսրի երազում սուրբ Նիկողայոսի հայտնվելու մասին, տարակուսեցին լսելով այդ խոսքերը, և, երբ թագավորը ավելի մեղմ հրամայեց պատմել ճշմարտությունը, պատասխանեցին. «Տիրակալ, մենք երբեք չենք զբաղվել կախարդությամբ և երբեք որևէ վատ մտադրություն չենք ունեցել քո հանդեպ: Եթե մենք ստում ենք, ապա թող ոչ միայն մենք կործանվենք, այլ մեր ողջ տոհմը: Մենք մանկությունից սովոր ենք հարգել և սիրել մեր թագավորին, ջանք ենք թափել քեզ համար մեր ուժերի ներածին չափ և հնարավորություններով և ապացուցել ենք մեր հավատարմությունը քեզ, որ հանդարտեցրել ենք Փռյուզիայի խռովությունը: Դու ինքդ էիր առաջ նշում մեր հավատարմությունը պատիվներով, իսկ հիմա թշնամիների զրպարտության պատճառով մենք դատապարտված ենք անմեղ և անտեղի հանդուրժում ենք, քանի որ ոչ մի վատ բան քո հանդեպ չենք մտադրվել և չենք արել»:

Լսելով այդ խոսքերը, թագավորը զղջաց, որ մահվան էր դատապարտել իր հավատարիմ ծառաներին և դարձել էր ապօրինության հանցակից, որի պատճառով ենթակա է Տիրոջ դաժան դատաստանին: Նա մեղմ և սիրալիիր խոսեց իր հավատարիմ ծառաների հետ: Այդ ժամանակ ինչ-որ արտակազ բան տեղի ունեցավ: Ջորավարների աչքին երևաց սուրբ Նիկողայոսի պատկերը, որ նստել էր թագավորի մոտ և ձեռքի շարժումով նրանց ողորմածություն ու ներում էր խոստանում: Նա երևում էր նրանց, բայց թագավորին և Եվլավոսին՝ ոչ: Այդ ժամանակ զորապետերը բացականչեցին. «Աստված Նիկողայոսի, որ այն ժամանակ անտեղի մահից ազատեցիր Միրում երեք տղամարդու, ազատիր և մեզ իրական դժբախտությունից»: Ապշած կայսրը հարցրեց նրանց. «Ո՞վ է այդ Նիկողայոսը, և ի՞նչ մարդկանց է փրկել անտեղի մահից»: Նեպոտիանոսի շուրթերից լսելով իրադարձության մասին պատմությունը, որ կատարվել էր Միրում, թագավորը զարմացավ սուրբ սպասավորի ճշմարտասիրության նախանձախնդրությունից և ազատեց զրպարտված զորավարներին: «Դուք ազատ եք,-ասաց նրանց,-բայց ոչ թե ես եմ նվիրում ձեզ կյանքը, այլ Տիրոջ մեծ սպասավոր Նիկողայոս սրբազանը, որին դուք օգնության եք կանչել: Դե գնացեք նրա մոտ, շնորհակալ եղեք նրան և իմ կողմից ասեք, որ ես կատարեցի նրա հրամանը»: Դրա հետ մեկտեղ արքան Նիկողայոս արքեպիսկոպոսին ուղարկեց Ավետարան և եկեղեցու համար այլ նվերներ:

Սուրբ Նիկողայոս ընտրյալի միջամտությամբ փրկվելով անխուսափելի մահից, զորապետերն անմիջապես ուղևորվեցին Լիկիայի Միրի քաղաքը: Այստեղ

նախ և առաջ ջերմորեն շնորհակալ եղան սրբազանին հրաշագործ օգնության համար, փոխանցեցին արքայական նվերները, շռայլորեն ողորմություն բաժանեցին աղքատ եղբայրներին և, Քրիստոսի սրբի ողջերթի օրհնությամբ, բարեհաջող վերադարձան տուն:

Սրբազանը կյանքի օրոք օգնում էր նույնիսկ այն մարդկանց, ովքեր բուլորովին չէին ճանաչում իրեն և երբեք չէին տեսել, ընդամենը դիմում էին օգնության մասին խնդրանքով և այդ օգնության ազդեցության հավատով: Այդքան մեծ էր իրենց դժբախտություններում մարդկանց օգնելու Աստծո սուրբ ընտրյալի պատրաստակամությունը: Ահա բազմաքանակ օրհնակներից մեկը:

Եգիպտոսից Լիկիա լողացող նավն ընկավ փոթորկի մեջ. ուժեղ քամին պոկել էր պարանասարքը, պատռել առագաստները: Նավը համարյա խորտակել էր: Նավաստիներին փրկության ոչ մի հույս չէր մնացել: Բայց, բարեբախտաբար, այդ պահին Նիկողայոս սրբազանին օգնության աղոթքներով դիմելու փրկարար միտք ծագեց. նրանք երբեք չէին տեսել նրան, բայց լսել էին, որ նա բուլոր դժբախտության մեջ գտնվողների համար շտապ օգնություն է: Աստծո ընտրյալի օգնությունը հուսախաբ չարեց նրանց: Նավավարների աղոթքից հետո սուրբ Նիկողայոսն անմիջապես հայտնվեց նավախելին և հետևյալ խոսքերով. «Դուք կանչել եք ինձ, և ես եկա ձեզ օգնության, այլևս մի վախեցեք», - կանգնեց դեկին: Աստծո ընտրյալի կամքով քամին խաղաղվեց և ծովի վրա անդորր տիրեց: Այնքան ուժեղ էր սուրբ Նիկողայոսի հավատը, այն հավատը, որի մասին Ինքը՝ Տերն է ասել. *ով հավատում է Ինձ, ինքն էլ կանի այն գործերը, որ ես եմ անում* (Յովհ. ԺԴ, 12). հավատով հրամայեց ծովին ու քամուն, և նրանք լսեցին նրան: Ալեկոծման հանդարտման հետ սուրբ Նիկողայոսի պատկերն անհետացավ: Թեթև համընթաց քամու շնորհիվ նավաստիները բարեհաջող հասան Միրի և, առաջնորդվելով սրբազանի հանդեպ խորին երախտագիտության զգացումով, որը փրկել էր նրանց անխուսափելի մահից, պարտք համարեցին անձամբ շնորհակալ լինել նրան այստեղ: Նրան հանդիպեցին եկեղեցու ճանապարհին, և, ընկնելով նրա ոտքերը, ամենաանկեղծ շնորհակալանքները հայտնեցին նրան:

Աստծո զարմանալի սպասավորը, փրկելով նրանց մարմնական դժբախտությունից ու մահից, ցանկացավ իր ողորմածությամբ ազատել նրանց նաև հոգևոր մահից. իր խորաթափանց ոգով նա մտավ նավաստիների հոգու մեջ և տեսավ, որ դրանք վարակված են նողկալի շնությամբ, որն այնպես հեռացնում է մարդուն Աստծուց և Նրա սուրբ պատվիրաններից: Այդ պատճառով սրբազանը հոգաց հայրական հորդորներով ետ պահել նրանց մեղքից և դրանով իսկ փրկել հավիտենական կործանումից: «Չետևեք ձեզ, - ասաց նրանց, - և ուղղեք ձեր սիրտն ու դիտավորությունները, որպեսզի գոհացնեք Աստծուն: Եթե նույնիսկ կարելի է ինչ-որ բան թաքցնել մարդկանցից ու եթե անգամ ծանր մեղքերը նրանց կարելի է

ներկայացնել որպես բարեգործություն, ապա Աստուծոց ոչինչ չի կարելի թաքցնել: Անհրաժեշտ է խստորեն պահպանել հոգու և մարմնի մաքրությունը, քանի որ, ըստ Պողոս առաքյալի ուսմունքի, *Աստծո տաճար եք*, և *Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ»* (Ա Կորնթ. Գ, 16) : Նավավարներին հոգեփրկիչ խորհուրդ տալով՝ այսուհետ խուսափել անոթալի մեղքից, Տիրոջ սուրբն օրհնությամբ նրանց տուն ճամփեց: Անհամար հրաշագործություններով սուրբ Նիկողայոսն ավելի ու ավելի մեծ ճանաչում էր ձեռք բերում. նրա անունը, ինչպես տեսանք, տալիս էին նրանից հեռու ապրողները, որ երբևէ չէին տեսել նրան, ընդ որում՝ ոչ միայն հավատացյալները, այլև անհավատները: Եվ սուրբ Նիկողայոսը միևնույն հրաշագործ օգնությամբ արձագանքում էր բոլորին, ովքեր փնտրում էին իրեն, միաժամանակ, մարմնական տարբեր դժբախտություններից ու ախտերից փրկվածների մեջ մեղքերի զղջման և կյանքը փոխելու ցանկություն էր արթնացնում: Այսպիսով, վկայում է սուրբ Անդրեյ Կրետացին, «դեռևս մարմնով կենդանի, նախքան Քրիստոսի մոտ գնալը, Նիկողայոս սրբազանը ծանրաբեռնված էր տարատեսակ դժբախտություններով, կարիքավորներին փութեռանդ օգնություն էր ցուցաբերում և զոհերին դուրս քաշում անգամ մահվան երախից»: Նրա խոսքը, որ զուտ հայրական սեր էր արտահայտում մերձավորի հանդեպ և միաժամանակ վերմարդկային իմաստություն, գործում էր անվրեպ. նա սովորեցնում էր ոչ այնքան խոսքերով, որքան գործերով, որոնք ասես Աստվածային ուժ և նշանակություն ունեին: Բարեպաշտ կյանքով փայլում էր նա Միրում, որպես վաղորդյան աստղն ամպերում, որպես լուսինն իր լրումի մեջ: Քրիստոսի Եկեղեցու համար նա պայծառորեն փայլող արեգակ էր, զարդարում էր այն, ինչպես շուշանն աղբյուրը, անուշաբույր աշխարհ էր նրա համար (Սիրաք. 8, 6-8):

ԱՍՏԾՈՒ ԸՆՏՐՅԱԼԻ ԵՐԱՆԵԼԻ ՎԱԽՃԱՆԸ

Մինչ խոր ծերության արժանացրեց Տերն ապրելու Իր մեծ սպասավոր Նիկողայոս սրբազանին: Բայց եկավ վերջապես ժամանակը, երբ նա էլ պետք է տար մարդկային բնության ընդհանուր պարտքը: Կարճատև հիվանդությունից հետո նա խաղաղ հանգավ, ուրախությամբ գնալով դեպի իրեն սպասվող երանելի կյանքը: Նրա հոգին, որպես Աստծո մեծ սպասավորի, սուրբ Հրեշտակները տարան Տիրոջ մոտ. նրա անբիծ մարմինն էլ, Լիկիա երկրի բազմաքանակ եպիսկոպոսների, վանական կղերականների և ժողովրդի ներկայությամբ հուղարկավորվեց դեկտեմբերի 6-ին Միրի մայր եկեղեցում: «Փառաբանում եմ քեզ, Լիկիայի թեմ, - VIII դարի սկզբին, Միրի քաղաքի մայր տաճարում, Նիկողայոս սրբազանի շիրմի մոտ ասում էր Կրետացի արքեպիսկոպոս սուրբ Անդրեյը: -Դու ձեռք ես բե-

րել որդեսեր հովիվ. գլխիդ թանկ և հավերժական պսակ ես դրել: Ո՞վ է նա: Նիկողայոսը, կարիքավորներին ձեռք մեկնողը երկնային սփոփանքներով, դառնացածների աներեր պաշտպանը, հրաշքների մեջ մեծը և ահեղը տեսիլքներում, անմեղներին կործանումից ազատողը, երազներով անօրեն գործերը քանդողը: Երանելի ես դու քաղաքների մեջ, Միրի: Դու տեղավորում ես քո մեջ այսքան մեծ բարեպաշտի (Եսայի, 2, 5)

Կյանքի ընթացքում սուրբ Նիկողայոսը մարդկային ցեղի բարերարն էր, չդադարեց այդպիսին լինել և մահից հետո: Տերը նրա անարատ մարմինն արժանացրել էր աննեխության և յուրահատուկ հրաշագործ ուժի: Նրա մասունքներն սկսեցին բխել անուշաբույր մեռնով՝ հրաշագործ շնորհներով օժտված: Աստծո սրբի հանդեպ հավատով օժվածները, հաղորդվելով մասունքներին, բուժվում էին ոչ միայն մարմնական, այլև հոգևոր բոլոր հիվանդություններից. նաև վտարելով չարամիտ դևերին, որոնց այնպես հաճախ հաղթում էր սրբազանը դեռ կենդանության օրոք:

Չրաշալի է Միրի քաղաքի և մայր տաճարի ճակատագիրը, որտեղ թաղված է Նիկողայոս սրբազանը:

Սարակինոսների հաճախակի արշավանքների հետևանքով, որ հատկապես սաստկացան XI դարում, երբ քրիստոնեական Արևելքի շատ քաղաքներ ամայացան հրով ու սրով, Միրին և նրա հետ Սիոնի տաճարը, որ Միրլիկիայի արքեպիսկոպոս Նիկողայոս սրբազանի մայր տաճարն էր, աստիճանաբար անկում էին ապրում:

Միրի և նրա տաճարի հետագա անկմանը նպաստեց նաև այն, որ XI դարի վերջում նրանց վեհագույն սրբությունը՝ սուրբ Նիկողայոս Սքանչելագործի մասունքները, տեղափոխվեցին իտալական Բարի քաղաք: 1850 թվականին Միրի եկեղեցի և սուրբ Նիկողայոս Սքանչելագործի շիրմին այցելեց Արևելքի սուրբ վայրերի հայտնի ճանապարհորդ Ա. Ն. Մուրավյովը:

Բերենք Միրլիկիայի եկեղեցու փլատակների նկարագրությունը այդ բարձրաստիճան ճանապարհորդի հիշողություններից՝ Միրի քաղաք այցելելու մասին նրա պատմվածքների առնչությամբ:

«Արդեն կեսգիշերն անց էր, երբ մենք՝ հետևելով մեր վայրի ուղեկցին (հովվին), ճանապարհ ընկանք գետակի ձախափնյա երկայնությամբ, ավերակների միջով անցնող մի ճամփով, որ փոքր-ինչ հարթված էր և անձրևներից հեղեղված:

Հարավային կողմից, վանական կացարանի նեղ դռների միջով, մտա եղեղեցու գավիթ, որ զարդարված էր ճերմակ և գորշ, մասամբ խոտով ծածկված մանրաքարերի խճանկարով: Նիկողայոս սրբազանի դամբարանի փոքրիկ եկեղեցին, որ նեղ էր ու ցածրանիստ, շարված կամարածև տաշածո քարերից և մասամբ հողի մեջ թաղված, աչքիս առաջինը ընկավ, իսկ նրա ետևում նոր Սիոնի՝ սքանչելագործի նախկին մայր տաճարի վեհաշուք ավերակներն էին: Եկեղեցու հարավային ցածրադիր դռների մարմարե սալիկին խաչ էր քանդակված՝ 1830 թվագրությամբ, այս դռնով ես մի քանի աստիճան իջա սրբավայրի խավար նախամուտքը, որ պատով բաժանված էր ներսի մասից. խորին մթություն էր իշխում տաճարի ներսում, և երբ մի փոքր վարժվեցին մեր աչքերը ու երեք խղճուկ կանթեղները վառվեցին սրբապատկերի առջև ու հենց դամբարանի վրա, մենք կարողացանք տեսնել ողջ թշվառությունը և միաժամանակ սույն եկեղեցու անգնահատելի գանձ լինելը: Սրբազանի ցածրադիր, քառանկյուն դամբարանը, ծայրերից երեսապատված էր մարմարով, լավ քանդակված, բայց մասամբ վնասված, ու մեջտեղից լայն բացվածք ուներ, քանի որ մի ժամանակ տապանը հափշտակված էր եղել, սակայն փրկվել մարդկանց և ժամանակի վայրագությունից: Նրա երկարությունը շուրջ ութ քառորդական էր և երեքից ոչ ավելի լայնություն ուներ, իսկ բարձրությունը՝ մեկ քառորդ. ներսից հողով լցված խոր փոս էր, որին, թեև դժվարությամբ, կարող էի հասնել ձեռքով: Ինչպես արդեն ասել եմ, դամբարանի վերին տախտակը պոկված էր թուրքերի կողմից և ջարդված էին նրան պահող փոքրիկ սյուները, բայց այս սյուներից մեկի հիմնամասից և դամբարանի մի մարմարի կտոր տանում եմ հետս հայրենիք, քանի որ, մինչ իմ գալը, վանահայր Պաիս Միրլիկիացին հանձնել էր ինձ այն հավատարմատարի միջոցով, որին ուղարկել էր Ռոդոսի մեր դեսպանը՝ Դուչին, տեղազննության համար. բացի այդ, ինձ մոտ է վանահոր նամակը, հաստատված երեք վկաների կողմից հենց տեղում, այս սուրբ մասունքների իսկության մասին: Դեռ չգիտեմ. մայրաքաղաքի ո՞ր եկեղեցուն հատկացնել սույն գանձերը:

Ծնկի իջնելով դամբարանի առջև, ես կարդացի սրբազանի «Հավատի վարքականոն և հեզության պատկեր» շարականը. և աղոթեցի, որ այն բարեխոս լինի մեր տերության կայսրի համար, նրա անվանակոչության, բարեպաշտ կայսրուհու և նրա ողջ օգոստոսափառ տան և իմ բոլոր մերձավորների համար, հատկապես նրանց, որ կրում են սրբազանի անունը. այնուհետև ուշադիր զննեցի եկեղեցին, և, խոստովանում եմ, ցավալի էր այն, ինչ տեսա. գրքակալը ուղիղ դամբարանի առջև էր, իսկ նրա վրա ընկած էր սրբազանի սրբապատկերը, բայց ոչ հինը, (ոչ մի հատ հին ես չգտա), և հենց այդտեղ կախված էր արծաթե բուրվառը, որ ողջ եկեղեցու միակ արժեքավոր իրն էր. կարծես ամեն ինչ կար աղոթքի համար, բայց չկար մեկը, որ ժամերգի: Պատկերակալը մի կերպ հավաքված է տախտակներից,

և նրա վրա հունական երեք սրբապատկեր կա. Փրկչի, Աստվածամոր և սրբազանի, ոչ այնքան վատ նկարված, բայց բոլորովին նոր. մյուսների պակասությունը լրացնում էին մի քանի ռուսական տպագիր պատկերներ, որ վաճառվում են Կրեմլի Սպասկու աշտարակի մոտ. երևում է, ոչ հարուստ երկրպագուն, զարտուղի ճանապարհով էր դրանք այստեղ բերել: Բեմը բոլորովին մերկ էր. մի քանի փոքրիկ սրբապատկերներ կային սեղանիկին՝ պատին հենված, ուր ամենօրյա պատարագ է կատարվում, երբ ներկա է լինում վանահայրը: Պիսիդոսի միտրոպոլիտն էլ, որ մեծ մասամբ լինում է Կաստել-Ռոսո կղզում, ծառայում է տարին միայն մեկ անգամ՝ Աստծո ծառայի օրը, և այդ ժամանակ ժողովրդի մեծ հոսք է լինում շրջակա բոլոր վայրերից և նույնիսկ տոնավաճառ՝ ամայացած Սիրիում ...

Երբ ևս մեկ անգամ խոնարհվեցի սրբազանի դամբարանին և դուրս եկա եկեղեցուց, Անտոնիոս անունով երիտասարդ մոնթը կամ սպասավորն ասաց ինձ. «Ինչ էլ որ տաք այս եկեղեցուն, մեր սրտին մոտ կլինի, եթե վերականգնեք մեզ համար սուրբ Սիոնի մայր տաճարը, և մի՞թե դուք, ռուսներդ, չեք անի դա»: Այնուհետև նա ինձ տարավ այդ նոր Սիոնի ավերակների մոտ, որ հյուսիսային կողմից հարակից էր դամբարանի եկեղեցուն, և, անցնելով կողային կցաշենքի կամարների տակով, մտանք մեծ սրբին արժանի վեհաշուք տաճար: Դեռևս պահպանվել էր նրա ստորին մասը, անգամ ծաղկե նրբագեղ քանդակներով մարմարե քիվը, որ բոլորում էր ողջ շենքը. բայց փայտամածը լցված էր հողով, և նրա միջից կիսով չափ բարձրանում էին դեռևս կանգուն երեք մարմարե սյուներ, երևի թե սրբապատկերների պատի համար, հավանաբար բաց, ինչպես Ցարգրադի սուրբ Սոֆիայինը. չորրորդ սյունն ընկած է տեղում, և մնացած չորս փոքրիկ սյուները կանգնած են սուրբ սեղանատանը, ասես միայն մարմարե սալաքարն է պակասում, որ ժամերգությունն սկսվի, որ ընդհատվել էր դարեր առաջ: Դեռևս անվնաս է նաև լեռնային տեղանքի կիսաբոլորը, հավանաբար, հողով լցված իր սեղանով ու ամբիոնով, և նույնիսկ այս մասում պահպանվել է բեմի կիսակամարը, որ նորոգման ենթակա չէ, և միայն քիվի ստորին մասը կարող է մնալ նախկին տեսքով: Մկրտության ավազանի հյուսիսային կողմից, կամ խորանի վերին մասը, նույնպես պահպանվել էին մասնակիորեն, և այստեղ տեղադրված էր սուրբ Գևորգի սեղանիկը, իսկ դրանցից ներքև սուրբ առաքյալների եկեղեցին էր. այդ նույն տաճարը, ինչպես և բոլոր այսպես կոչված Սիոնները Վրաստանում, տոնում էր Աստվածածնի Վերափոխումը, քանի որ այդ օրվան միանում էր Երուսաղեմի Սիոնի բոլոր առաքյալների տաճարը: Բայց խորանի ստորին մասը և արևմտյանը բոլորովին ավերվել էին, և, երբ եկեղեցու ներսից նայեցի վեր, տեսա, որ ամբողջ քիվի բոլորակը մարդիկ պղծել են. թուրքերն ու հույները, կանայք և երեխաները, բոլորը հավաքվել և լուռ նայում էին այցելուներին, ասես ինչ-որ անսպասելի ակնկալի-

Վերադառնալով հայրենիք, Ա. Ն. Մուրավյովը գործի դրեց բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի օժանդակի ավերված սրբատեղին վերականգնելուն: Սրբազնագույն Սինոդի գերագույն, բարեհաճ թույլտվությամբ նրան մատյան հատկացվեց՝ կամավոր նվիրաբերության համար. Կոստանդնուպոլսի մեր ներկայացուցչության միջնորդությամբ տրվեց սուլթանի հրովարտակը տաճարի նորոգման համար:

Պարոն Մուրավյովի ամենագործուն աշխատակիցը այդ գործուն Ռոդոսուն Ռուսաստանի փոխ-հյուպատոս պարոն Դուչին էր. նա ամենահարմար թեկնածուն էր աշխատանքների տնօրինման ու գումարի ծախսերը հանձնարարելու համար, սակայն դիմադրության հանդիպեց տեղի հոգևորականության կողմից: Պիսիդոսի միտրոպոլիտը պահանջեց, որ հավաքված բոլոր փողերը հանձնեն իրեն, Կոստանդնուպոլսի պատրիարքն էլ չէր ցանկանում, որ աշխատանքները կառավարի այլադավանը:

Սակայն մեր ներկայացուցչուները գործն այնպես կազմակերպեց, որ պարոն Դուչին տրվի գաղտնի հսկողություն և ծախսերի վերաբերյալ հաշվետվություն, իսկ տեղում աշխատանքները հսկելու համար ընտրվեցին Կաստել-Ռոսո կղզու բնակիչների ավագանուց: Հագիվ էին հասցրել նորոգել նոր եկեղեցու ներսը, որտեղ սրբազանի դամբարանն է, և նրա համար պատվիրել մարմարե հնաոճ զարդանախշեր, երբ ծագեց Արևելյան պատերազմը, և աշխատանքները դադարեցին: Միայն 1858 թվականին նորից խնդիրքով ստացվեց սուլթանի հրովարտակը և նոր մատյան տրվեց նվիրաբերությունների համար, իսկ պարոն Դուչին ձեռնարկեց ավագանու ընտրությունը և շինանյութի նախապատրաստությունը: Պատահաբար Պաղեստինից Ռոդոս եկավ ֆրանսիացի հայտնի ճարտարապետ և հնագետ Ջալցմանը: Պարոն Դուչին հրավիրեց նրան դիտելու Սիրիի տաճարի ավերակները. դա փրկեց դրանց վերջնական կործանումից: Ղեկավար չունենալով, ընտրված ավագանին, փոխանակ հողի տակից հանի հին եկեղեցին, ցանկանում էր ավերել նրա հիմքերը և մնացորդներից նորը կառուցել: Թեև այդ աշխատանքի համար արդեն ծախսվել էր գրեթե հազար ռուբլի, Ջալցմանը որոշեց կանգնեցնել այն և վեց շաբաթ մնաց Միրուն հին բազիլիկի բացումը հսկելու համար: Պարզվեց, որ բազիլիկը IV դարի եկեղեցական ճարտարապետության հոյակապ նմուշ է: Ջալցմանը ճշգրիտ պատճենահանեց ավերակներից հանված թանկարժեք որմ-

Նախագծում Միրլիկիայի եկեղեցին քառանկյան տեսք ունի, որի երկարությունը երեք անգամ մեծ է լայնությունից. ներսը պատերով բաժանված է երեք մասերի՝ լայն բացվածքներով դեպի կողային նավերը. այդ պատերը փոխարինում են հին բազիլիկների սյուների: Կողային նավերն ավարտվում են երկու գավիթներով և երկու ընթերասեղաններով՝ զարդարված IV դարի գեղանկարչությամբ. երեք նավերի առջև ընկած է ներքին գավիթը, որին նախորդում է բակը. վերջինիս կառույցը վերաբերում է VIII կամ IX դարերին. դրանց փոխարինում է հինավուրց նախագավիթը, որ ավերվել է հրդեհից: Այս դասավորությունը կրկնվում է և երկրորդ հարկի կողային ներքնասրահներում, ինչը շենքի չափազանց հին լինելու նոր վկայությունն է: Ֆրանսիացի հայտնի գիտնական և գրող, ճարտարապետության պատմության պրոֆեսոր Լենուարը համոզիչ ապացուցում է, որ երկհարկանի բազիլիկները ավելի հին են մյուսներից. իրենց դրվածքով դրանք մոտ են սինագոգերին և Հռոմի քաղաքացիական բազիլիկներին, ուր կանայք տեղավորվում էին երկրորդ հարկի բարձրադիր պատշգամբում, արհեստանոցում: Փայտամածը կազմված է գունավոր քարերից, եզրագարդված խճանկարի հետաքրքիր աշխատանքով. այս փայտամածը, բացառությամբ որոշ մասերի, որոնք ջարդվել են վերևից ընկած քարերից, պահպանվել է ամբողջությամբ. դա շարունակվում է այն մասից, որը բաժանում է նավը սրբատեղից: Սրբատեղին վեր է խոյանում շինության մյուս մասի վրա. հատակը նույն նյութից է, ինչպիսին գլխավոր նավում է, բայց ուրիշ նախագիծ ունի: Նավի և սրբատեղիի միջև տեղադրված է չորս սյուն. մեջտեղի երկուսը ավելի հաստ են և կողայիններից բարձր, միջանցքները մասամբ բաժանված են մարմարե ճաղաշարքով և ծածկված վարագույրներով: Սրբատեղում փոքրիկ սեղանն է՝ չորս սյուների վրա և գմբեթածև ծածկոցով: Շենքի կիսաշրջանածև ելուստում կան աստիճաններ, որոնց կենտրոնից բարձրանում է եպիսկոպոսի ամբիոնը: Աստիճանների տակ անցում կա, որն այժմ այնքան էլ բաց չէ և տանում է, հավանաբար, ստորգետնյա անձավ, որի գոյությունն, ի դեպ, դեռ ապացուցված չէ: Գլխավոր նավի կենտրոնում պատրաստված է բեմ Սբ. Գրքի ընթերցանության համար: Նախկինում ամբողջ շինությունը զարդարված էր որմնանկարներով, այժմ դրանք մնացել են միայն անկյուններում և երկու հովանիների վրա կամ նախասրահներում: Այս որմնանկարչությունը, թեև պատկանում է մշակույթի անկման շրջանին, սակայն խիստ հետաքրքիր է որպես այն ժամանակների գրեթե միակ նմուշ: Երկու նախասրահ, որոնց մասին ասվեց վերը, բացվեցին պարոն Զալցմանի ներկայությամբ: Դրանցից մեկը, որ տանում է գլխավոր նավ, բավականին լուսավորված էր, որպեսզի որմնանկարչությունը պատճենվի.

Մյուս կցաշենքում, աջից, որի վրա արված են որմնանկարները, շատ տեղերում պատից հեռացած են: Չնայած դրան, պատկերը լիովին հասկանալի է. այն ներկայացնում է քառասուն նահատակներին՝ մինչև գոտկատեղը լճի սառցաջրում:

Արտաքին կցաշենքը զարդարված է կրոնական բնույթի նկարներով, որոնք վերաբերում են VIII կամ IX դարերին:

Ներսից շենքը չափազանց պարզ է, բայց վեհաշուք. շարվածքը փոխառփոխ քարից ու աղյուսից է. լույսը ներս է թափանցում զանազան բացվածքներից, որ արված են պատուհանի քարե միջնորմներում, ինչը փոխարինում է ապակով շրջանակներին, որոնք այն ժամանակ դեռևս անհայտ էին:

Սկզբում աշխատանքներն ընթանում էին Կաստել-Ռոսոյի ավազանու ղեկավարությամբ և քարագործ-վարպետ Կառնավայի հսկողությամբ. դրանք կատարվում էին ոչ մեծ եկեղեցու շինության մեջ՝ հին շենքի պատերի վրա, որ չորս սաժեն խորությամբ ծածկված էր հողով: Հիմքի համար գլխավոր նավից բացվածք էր արված, քանդվել էին պատերն ու կամարները և դուրս էին բերվել սյուներն ու կամարները նոր եկեղեցու հատակի ամրացման համար:

Քանդման աշխատանքները շատ ծանր էին, ընթանում էին դանդաղ, քանի որ տաշածո քարի և աղյուսի հին շարվածքը՝ ամրացված ուժեղ ցեմենտով, ինչը բնիկներն անվանում են *դորոսան*, չափազանց պնդացել էր, և անհրաժեշտ էր դիմել վառողի օգնությանը՝ ոչնչացնելու համար թանկարժեք մնացորդները, որ խնայել էին ժամանակն ու մարդիկ:

Հասկանալի է այն տպավորությունը, որ թողնում էին այս աշխատանքները նկարիչ-ճարտարապետ պարոն Ջալցմանի վրա, որը կարճ ժամանակում նկատեց ու գնահատեց շենքի ողջ պատմական ու գեղարվեստական նշանակությունը, որ ավերել էին փոխարենը բավականին այլանդակ կառույց դնելու համար՝ տեղական ինչ-որ ճարտարապետի երևակայության պտուղը: Համաձայնեցնելով պարոն Դուչիի հետ, Ջալցմանը կասեցրեց աշխատանքները և զբաղվեց ավերակների պեղումով, որի արդյունքում բացվեցին վերը նկարագրված մասերը: Հրա-

Ժարվեցին հին շենքի մնացորդներով նոր եկեղեցի կառուցելու մտքից և որոշեցին նախնական տեսքով վերականգնել սուրբ Նիկողայոսի հին բազիլիկան: Աշխատանքների ղեկավարումը ստանձնեց պարոն Ջալցմանը: Սկզբում նա մտադրվել էր քանդել ողջ հին կառույցը, որպեսզի աշխատանքներն սկսի ըստ նրա դիրքի ու ձևի, սակայն ժամերգության ու բազմաքանակ աղոթարարների համար եկեղեցու բացման անհրաժեշտությունը շուտով ստիպեցին փոխել նախնական որոշումը. որոշվեց բացել գլխավոր նավը, գավիթներով երկու կողային սրահները և վերականգնել դրանք:

1859 թվականին թուրքերից հող ձեռք բերվեց, որը հարակից էր շինարարությանը, առանց որի հնարավոր չէր լինի փորված հողը տեղափոխելու խնդիրը: Այդ տեղանքը անկանոն քառանկյան տեսք ունի, մասամբ զբաղեցված շենքերով ու այգով, որ պատկանում են թուրք աղային. պարոն Ջալցմանը հույս ունի խաղաղությամբ համոզել նրան և այդպիսով ձեռք բերել ողջ տարածքը հին եկեղեցու սահմաններում:

Ժամատունը, ուր հիմա կատարվում է ժամերգությունը, և զոհասեղան ծառայող շիրմաքարը ստեղծվել են XVIII դարում բարեպաշտ աբեղայի կողմից. այն գտնվում է երկրորդ ձախ սրահում:

Կառույցի տակ՝ չորս սաժեն խորությամբ, հին մարմարե դամբարանն է, որն, ամենայն հավանականությամբ, մի ժամանակ իր մեջ ամփոփել է սրբազանի աճյունը: Թեև այն զարդարող հարթաքանդակներն, ակնհայտորեն, կրոնական բովանդակության չունեն, սակայն դա միանգամայն համահունչ է հին գերեզմաններում մահացածներին թաղելու այն ժամանակվա սովորություններին՝ օրինակ առնելով հեթանոսական գերեզմանոցներից. հայտնի է, որ շատ քրիստոնյաների այդպես էին թաղում նույնիսկ ավելի ուշ ժամանակներում:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ԼԻԿԻԱՅԻ ՄԻՐԻԻՑ՝ ԲԱՐԻ

Ավելի քան 1700 տարի է անցել Աստծո ընտրյալ Նիկողայոսի՝ Միրլիկիայի մեծ սքանչելագործի երանելի վախճանից: Նրա հայրենի Լիկիան սկսում է ենթարկվել սարակինոսների հաճախակի, ավերիչ արշավանքներին: XI դարի վերջում սարակինոսները սարսափելի ավերման ենթարկեցին Հռոմեական կայսրության արևելյան մարզերը. սկսելով Խերսոնից, ճիվաղներն հասան մինչև Անտիոք և Երուսաղեմ: Ճանապարհին ընկած բոլոր քաղաքները, գյուղերը, եկեղեցիներն ու մենաստանները մատնեցին հրի ու սրի. բնակիչներին գերի էին վերցնում, կոտո-

րուն ու հալածում էին, այնպես որ այն վայրերով, որտեղով նրանք անցնում էին, երկար ժամանակ վերածվում էր վայրի անապատի: Սարակինոսների ասպատակությունների հետևանքով հին Միրին ամայացավ. բնակիչների մնացած մասը տեղափոխվեց նախկին քաղաքից 13 ստադիա (0,5կմ) հեռավորության վրա, ուր, ի դեպ, դեռևս մնացել էր Սիրոնի տաճարը, իր մեջ թաքցնելով ջերմեռանդ պաշտպան և փութեռանդ օգնական Նիկողայոսի ազնիվ մասունքները, որ պահպանվում էին սակավաթիվ վանականների կողմից: «Մի՞թե,-հարցնում է մասունքների տեղափոխման ժամանակակից մի տարեգիր,-մեծ և սուրբ արքեպիսկոպոսը չէր կարող աղերսել Տիրոջը, որ նա չկործաներ Միրի քաղաքը և անապատ չդարձներ իր սպասավորի մասունքներով եկեղեցին»: «Իհարկե, կարող էր,-պատասխանում է նա:-Բայց այդ դժբախտությունը չի ուղարկվել մեզ մեր մեղքերի համար, որոնցով գրգռում ենք Աստծո մեծ համբերությունը, այլ պետք է ծառայի մեր իսկ ապաքինմանը»:

ՍՈՒՐԲ ԵՎ ԱՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԱԶՆԻՎ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈՒՄԸ

Բայց, ավերման ենթարկելով այն քաղաքը, որ հռչակվել էր Աստծո ընտրյալի մասունքներով, Տերը նախասահմանել էր դրանց տեղափոխումը մարդաշատ քաղաք Բարի: Տիրոջը հաճո էր մասունքների այդ տեղափոխությունը, սուրբ Դիմիտրի Ռոստովցու խոսքերով, այն բանի համար, «որպեսզի խաղաղության այդպիսի լուսատուի մասունքները, որի հոգին երկնքի պայծառության մեջ իրեն արժանի փառք կգտնի, և երկրի վրա ու գրվանում առանց հարգանքի չի մնա, և որպեսզի հրաշագործ ապաքինման առատ աղբյուրը զուր չցամաքի», և այն բանի համար, «որպեսզի Արևմուտքն էլ չզրկվի Աստծո բարերարություններից, որ ստացվում են շնորհիվ մեծ արքեպիսկոպոսի միջնորդության»: Մասունքների բուն տեղափոխությունը կատարվեց հետևյալ հանգամանքներում: 1087 թվականին, հունական թագավոր և Կոնստանդինի քաղաքի ինքնակալ Ալեքսի I Կոմնենի (1081-1118) և պատրիարք Նիկողայոս III Քերականի (1083-1111), Կիևի քրիստոսասեր և մեծ իշխան Վսևոլոդի և Չեռնիգովի նրա բարեպաշտ որդու՝ Վլադիմիրի օրոք (1078-1094), Քրիստոսի սուրբ Նիկողայոսը հայտնվեց Բարի քաղաքի մի ազնիվ ու բարեպաշտ քահանայի երագում, մի քաղաքի, որ երկու հարյուր տարի հունական իշխանության կենտրոնն էր Իտալիայում և միայն դրանից փոքր-ինչ առաջ ենթարկվում էր նորմաններին: «Գնա և ասա կղերին ու ժողովրդին,-կարգադրեց քահանային հայտնված սրբազանը,-որ նրանք վերցնեն իմ մասունքները

Լիկիայի Միրից և տեղափոխեն այս քաղաքը. քանի որ Տիրոջը հաճո չէ, որ ես մնամ անապատում»: Առավոտյան քահանան գնաց եկեղեցի և պատմեց տեսիլքի մասին եկեղեցական կղերին ու ժողովրդին: Վերջիններս, լսելով Տիրոջ և Նրա սպասավոր սուրբ Նիկողայոսի իրենց հանդեպ այդպիսի ողորմածության մասին, հույժ ուրախացան, ասելով. «Այժմ Տերն Իր բարեհաճությունն ուղարկել է մեր քաղաքին ու մարդկանց»: Ամմիջապես հանդերձեցին երեք նավ և նրանով ուղարկեցին քահանաներին, կղերին և այլ բարեպաշտ ու աստվածավախ մարդկանց սուրբ Նիկողայոսի մասունքները տեղափոխելու համար: Բոլորը, ովքեր ճանապարհվել էին Աստծո սպասավորի մասունքների ետևից, արևմտյան տարեգիր Սիգեբերտի խոսքերով, որ մասունքների տեղափոխման ժամանակակիցներից է, 47 հոգի էին (չհաշված ծառաներին ու նավաստիներին): Ուղարկվածները, զգուշանալով, որ հանկարծ որևէ ուրիշ մեկը իրենցից առաջ չօգտվի հրաշագործության թանկարժեք գանձից, որն Աստծո կամքով սահմանված էր իրենց համար, մտածեցին թաքցնել իրենց ճամփորդության նպատակը առևտրային ձեռնարկության տեսքով և դրա համար նավը բարձեցին ցորենով: Բարեհաջող հասան Անտիոք, ուր վաճառեցին ցորենը և այլ ապրանքներ գնեցին, իբրև թե մտադրված են շարունակել առևտուրը: Բայց այստեղ նրանք տհաճ լուր ստացան, որ վենետիկյան առևտրականները, որ այդ ժամանակ գտնվում էին Անտիոքում, նույնպես մտադիր են ուղևորվել Միրի սուրբ Նիկողայոսի մասունքները իրենց քաղաք տեղափոխելու համար: Որոշելով նախագգուշացնել վերջիններիս, բարեցիներն ամմիջապես հեռացան Անտիոքի ափերից, համընթաց քամու շնորհիվ բարեհաջող հասան Լիկիայի ափերը և կանգնեցին Անդրիաքեում՝ Միրի քաղաքի նավահանգստում:

Այստեղից նրանք նախ ափ ուղարկեցին երկու երուսաղեմցի ուխտավորի, որ վերցրել էին իրենց հետ Անտիոքից. մեկը՝ ծնունդով հույն էր, մյուսը՝ ֆրանսիացի, որպեսզի նրանք տեղեկանան, թե արդյոք սպասավորի մասունքների մոտակայքում թուրքեր չկա՞ն, որոնք կարող էին խանգարել իրենց: Ուղարկվածները քաղաքում չհանդիպելով ոչ մի կասկածելի բանի, այլ միայն չորս վանականի եկեղեցու մոտ, ուր հանգչում էր ցանկալի սրբությունը, վերադարձան նավ և բարեցիներին հայտնեցին, որ նրանք անարգել կարող են իրականացնել իրենց ցանկությունը: Այն ժամանակ 47 բարեցիները վերցնում են զենքերը և, նավաստիներին ու ծառաներին թողնելով հսկելու նավը, ուղևորվում են սուրբ Նիկողայոսի տաճար: Հասնելով տաճար, նրանք խաղաղությամբ ներս են մտնում և խոնարհվում սուրբ սեղանին: Սուրբ սպասավորի մասունքները պահպանում էին ընդամենը չորս պահակ-վանականներ, որոնց և ժամանած բարեցիները դիմեցին սուրբ սպասավորի մարմնի տեղը ցույց տալու խնդրանքով: Բարեցիները վանականներին հայտնում են իրենց մտադրությունը սքանչելագործի մասունքներն Ապուլեյ տեղափոխելու մասին և, որպեսզի շուտ ստանան նրանց համաձայնությունը, ա-

Այդ ժամանակ սուրբ Նիկողայոսի տաճարում գտնվող բարեցի երկու երեցներից մեկը, ում ձեռքին ապակե անոթ էր, որը նա լցրել էր սուրբ հեղուկով, ցանկացավ մասնակցել ընկերների բռնած գործին (պահակների հետ բանակցություններին) և անոթը դրեց բեմի նախամուտքի ոչ բարձր սյուներից մեկի գազաթին: Իսկական հրաշք կատարվեց. սրվակը հանկարծ ընկավ բարձունքից և ուժգին շաշունով հարվածեց մարմարին, որի տակից հոսում էր հեղուկը: Նրա անսովոր հարվածից մոտ վազեցին բոլոր ներկաները և, գտնելով սրվակը, որ այդպիսի բարձրությունից ընկել էր այդպիսի աղմուկով, միանգամայն անվնաս, զարմացան դրանից և փառաբանեցին Աստծուն: Այդ նշանի մեջ նրանք տեսան իր մասունքների անհապաղ տեղափոխման սուրբ սպասավորի կամքի արտահայտությունը: Այդ ժամանակ առավել համարձակ մի պատանի, Մատթեոս անունով, սկսեց մահով սպառնալ պահակին, եթե նա ցույց չտա մեծ սրբի աճյունի տեղը: Մյուս պահակը, ցանկանալով ընկերոջը փրկել մահից, մոլեգնած պատանուն ցույց տվեց մասունքների տեղը: Դրա հետ մեկտեղ ասաց, որ շատ փորձեր են արվել, նույնիսկ կայսրերի կողմից, սուրբ մասունքներն այստեղից տեղափոխելու, բայց բոլորն անարդյունք են եղել: Ակնհայտորեն, սրբին հաճո չէր թողնել Միրին: Միայն անցյալ տարի, պահակի խոսքերով, սուրբը հասկացրեց, որ շուտով կլինի իր տեղափոխումը Լիկիայի Միրից: Նա տեսիլքով հայտնվեց երեք մարդու, հրամայելով հայտնել Միրի քաղաքի բնակիչներին, որոնք թուրքերի ահից գնացել էին սար (այստեղից կես կիլոմետր հեռու), որպեսզի նրանք կամ վերադառնան ապրելու այստեղ և պահպանեն քաղաքը, կամ իմանան, որ նա կտեղափոխվի այլ տեղ, որն էլ նա, պահակի կարծիքով, իրականացնում է: Ոգևորվելով այդ պատմությանը, պատանի Մատթեոսը վերցրեց երկաթե մուրճը և ուժեղ հարվածեց տախտակամածի մարմարե սալիկին, որը հարվածից բաժանվեց մանր կտորների: Կոտրված սալիկը հանելով, Մատթեոսի ընկերներն սկսեցին փորել նրա տակի հողը և շուտով գտան սպիտակ տապանակը, որը ծածկված էր եռանկյունի քարե կափարիչով: Նրանք բոլորովին փորել-հանել էին այն, բայց վախենում էին հարվածել նրան, որպեսզի նրանց հետ ինչ-որ դժբախտություն չպատահի: Այդ ժամանակ խիզախ Մատթեոսը, այլևս չկարողանալով զսպել ոգու տաքարյունությունը, ուժեղ հարվածեց կափարիչին և փշրեց այն: Երբ բարձրացրեց կափարիչը, տեսավ, որ տապանակը լի էր սուրբ հեղուկով: Շուրջն այնպիսի անուշաբույր տարածվեց, որ բոլոր ներկաներին թվաց, թե իրենք գտնվում են դրախտում: Եվ

միայն տաճարում ներկաների համար չէ, որ զգալի էր այդ հրաշալի բույրը՝ բարենպաստ քանու շնորհիվ այն հասավ երեք մղոն հեռավորությամբ գտնվող ծովին. այստեղ այն զգացին նրանց մյուս ընկերները և լցվեցին ուրախությամբ. դրանում նրանք տեսան Աստծո սպասավորի համաձայնությունը իրենց ձեռնարկած գործի կատարմանը:

Քաջ պատանի Մատթեոսն իջնում է տապանակ և, ավերը լցնելով սուրբ հեղուկով, գտնում է լողացող և հրաշալի անուշաբույր արծակող սուրբ մասունքները: Պահակները, տեսնելով, որ սուրբ սպասավորն իր մասունքների տեղափոխման համաձայնություն է տալիս, դառնորեն վշտանում են: Այդ ընթացքում պատանին տապանակից վերցրեց սուրբ Նիկողայոսի մասունքները և փոխանցեց երեցին, որը ջանադրորեն փաթաթեց դրանք թղթ նոր հանդերձով: Մի քանի բարեցիներ ուզում էին տաճարից սուրբ Նիկողայոսի ևս մի հրաշագործ հին սրբապատկեր վերցնել, բայց դա չհաջողվեց նրանց, քանի որ սուրբ սպասավորը չէր ցանկանում բոլորովին թողնել Լիկիա երկիրը:

Ուրախ բարեցիները սուրբ Նիկողայոսի մասունքներով ուղևորվեցին դեպի իրենց նավերը, ուր նույն ուրախությամբ նրանց դիմավորեցին մնացած ընկերները. բոլորը միասին փառաբանեցին ամենակարող Աստծուն, որ իրենց ցանկությունը հաջողությամբ պսակեց:

Այդ ընթացքում Միրիի քաղաքացիները պահակներից իմացան սրբության տեղափոխումը բարեցիների կողմից իրենց նավ և, դրանում տեսնելով սուրբ սպասավորի կամքը, վիթխարի բազմությամբ հավաքվեցին բարեցիների նավերի մոտ և բարձր ողբով արտահայտեցին իրենց վիշտը: Չկարողանալով զսպել իրենց, նրանք հագուստով ու կոշիկներով մտան ծով և այստեղ կառչեցին նավերի ղեկերից ու թիակներից, ասելով. «Տվե՛ք մեր հորը և մեր տիրոջը, որ իր հովանավորությամբ փրկել է մեզ տեսանելի թշնամիներից: Եթե ոչ ամբողջը, ապա թեկուզ մի մասնիկը տվե՛ք մեզ, որպեսզի բոլորովին չզրկվենք այդպիսի հովանավորից»:

Բարեցիները մխիթարում են ողբացող միրեցիներին նրանով, որ նրանց է մնում սրբազանի շիրիմը՝ լի սուրբ հեղուկով, և նրա սրբապատկերը, որը բազմաթիվ բժշկումներ է անում, իսկ իրենք հապճեպ հեռանում են նավահանգստից: Բարեցիները հետագայում պատմում էին, որ գրեթե երկու մղոնի վրա լսվում էր ավին կանգնած միրեցիների ողբը, և կարեկցելով նրանց՝ քիչ չէին բարեցիներից նրանք, որ լաց չլինեին:

Բարեցիները Միրից դուրս եկան 1087 թվականի ապրիլին: Առաջին օրը տուն նավարկելուն նրանց օգնեց համընթաց քամին: Բայց հաջորդ օրը փչեց հյուսիսային քամին, և նրանց նավը շրջեց Պատարիի ուղղությամբ (սուրբ Նիկողայոսի հայրենիքը): Բարեցիները վախեցան, մտածելով, թե սպասավորը չի ցանկանում բաժանվել Լիկիայի ավերից. միաժամանակ նրանք երկյուղում էին հե-

տապանդումից, քանի որ Պատարին գտնվում էր Միրից ոչ հեռու: Ճանապարհից հոգնած, նրանք խարիսխ գցեցին Մակրիի նավահանգստում: Այստեղ նրանք սկսեցին մտածել, թե ինչու են այդքան քիչ ճանապարհ կտրել երեքօրյա ուղևորությամբ: Ոմանք հարցնում էին, թե արդյոք իսկապես դրանք սուրբ Նիկողայոսի մասունքներն են, մյուսները վախենում էին, թե զայրացրել են սրբին իրենց հանդուգն արարքով, երրորդները, վերջապես, մտածեցին, թե ընկերներից որևէ մեկը, ջերմեռանդության ու հավատի թելադրանքով, արդյոք, չի՞ վերցրել սուրբ սպասավորի մասունքից որևէ մասնիկ: Այդ ժամանակ կանգ առան այդ ենթադրության վրա, բերեցին Ավետարանը, և նավազներից յուրաքանչյուրը պետք է երդվեր, որ մասունքներից չի թռցրել ամենաչնչին իսկ մասնիկ: Հինգը խոստովանեցին իրենց արարքը և ետ տվեցին գողացած մասերը: Ծովը խաղաղվեց, և փչեց բարենպաստ քամի: Ծովայինները հասկացան, որ իրենց սուրբ պարտքը թանկարժեք գանձն անբողջությամբ Բարի հասցնելն է, և այնուհետև նրանց ճանապարհը շարունակվեց հաջողությամբ:

Երբ անցան Տրախեսայի ծոցը, մի ծովայինի խոր քնում հայտնվեց սուրբ Նիկողայոսը և ասաց. «Զվախենաք, ես ձեզ հետ եմ: 20 օրից մենք կհասնենք Բարի»: Արթնանալով, ծովայինն ընկերներին պատմեց այն, ինչ տեսել էր, և նրանք հույժ ուրախացան:

Ճանապարհին զարմանալի բան պատահեց: Սուրբ մարմինը տանող նավի աջ ղեկին ծիծեռնակ նստեց: Առանց որևէ ահի, կարծես նավի սովորական ուղևոր լիներ, նա լուռ թռավ ծովայիններից մեկի ձեռքին, որն այդ ժամանակ ղեկին էր: Այդտեղից թռավ այնտեղ, որտեղ հանգչում էր սուրբ մարմինը, և, ցածր երգելով, կտցեց անոթը, ուր ամփոփված էին սուրբ մասունքները: «Բարեհաճ եղբայրներ,- այս առիթով նկատում է իրադարձության ժամանակակից, արևմտյան գրող Նիկիֆորը, որ մեզ թողել է մասունքների տեղափոխման պատմությունը,-այնքան փառավոր է ամենակարող Աստված, որ իր սուրբ խոստովանորդու նկատմամբ գովասանք ու հարգանք է արթնացնում ոչ միայն ասունների, այլև անասունների մեջ: Քանի որ թռչնի երգը փառաբանություն է, իսկ կտցի հպումը համբույր՝ սուրբ մարմնին: Երգելով, թռչելով նա նավից նավ և մարդուց մարդ անցավ և տեսանելի եղավ բոլորին, երանելի փառաբանության արժանացնելով նրանց այն բանի համար, որ նրանք տանում էին վեհաշուք և հրաշալի հովվապետին: Կատարելով խոնարհության պարտքը, նա թռավ ու անհետացավ տեսադաշտից»:

Երկար ճանապարհորդությունից հետո բարեցիները մայիսի 8-ին վերջապես եկան սուրբ Գևորգի՝ Քրիստոսի նահատակի, Բարիից չորս մղոն հեռավորության վրա գտնվող նավահանգիստ: Այստեղից նրանք Բարիի բնակիչներին տեղեկացրին շուտով իրենց քաղաք Արևելքի նշանավոր հրաշագործի մասունքների տեղա-

փոխման մասին, իսկ իրենք զբաղվեցին փայտե տապանակի պատրաստությամբ, որի մեջ էլ ամփոփեցին սրբազանի մասունքները:

Մեծ հրաշագործի մասունքներով բարեցիների ժամանման մասին լուրը տարածվեց ողջ քաղաքով, և հաջորդ օրը, մայիսի 9-ին, ահագին բազմություն հավաքվեց այնքան հրաշալի և ցանկալի տեսարանը տեսնելու համար: Բարի հոգևորականությունը քահանայական հանդերձներով ընդառաջ ելավ սուրբ սպասավորի մարմինն ընդունելու: Ժամանողները տեղեկացրին համաքաղաքացիներին, որ երբ նրանք վերցնում էին սուրբ սպասավորի մարմինը, սրբազան ուխտ են արել հանուն նրա արժանավոր եկեղեցի կառուցել տերունական բակում, որ կոչվում է Կատապանի, և հիմա պնդում են իրենց ցանկության իրագործումը: Այդ առիթով մեծ տարածայնություն առաջացավ. ոմանք (մեծամասնությունը) հավանության արժանացրին նրանց ուխտը, մյուսներն էլ ուզում էին, որ Նիկողայոս սրբազանը թաղված լինի քաղաքային մայր տաճարում (եպիսկոպոսությունում):

Ցանկանալով խաղաղությամբ վճռել տարածայնությունը, Բենեդիկտյան մենաստանի վանահայրը, Եղիա անունով, հանոզեց վերադարձած ծովայիններին սպասավորի մարմինը տեղափոխել իր մենաստանի եկեղեցի, մինչև նորի կառուցումը: Վերջիններս համաձայնեցին, քանի որ Եղիան հայտնի էր իր բարեպաշտությամբ: Մենաստանի շուրջը կանգնեցին զինված նավաստիներ՝ զգուշանալով հակառակ կողմի վրեժից՝ անբավական նրանով, որ մայր տաճարի հոգևորականությունը չհասցրեց կանխել վանահայր Եղիային:

Ի ՊԱՏԻՎ ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԲԱՐԻՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Սուրբ մասունքները բերելու մասին տեղեկացրին Բարիի արքեպիսկոպոս Ուրսոնին, որն այդ ժամանակ քաղաքում չէր: Լսելով այդ մասին, նա անմիջապես ժամանեց Բարի և առաջին հերթին շտապեց խոնարհվել մեծ սպասավորի մասունքներին: Սակայն նա սկսեց համառորեն պահանջել մասունքները տեղափոխել տաճար և չէր ցանկանում թույլ տալ նոր տաճարի կառուցումը: Դրա հետևանքով երկու կողմերի միջև նորից ուժեղ թշնամանք բորբոքվեց, որն ավարտվեց զինված ընդհարումով և գետնամած եղան չորս հոգի: Այն ժամանակ, երբ Բենեդիկտյան մենաստանում արյունահեղ կռիվ էր, մի քանի նավաստի, հիշելով, որ Կատապանիայի բակը, որն այն ժամանակ արդեն պատկանում էր հերցոգ Ռոժերին, օգտվում է պատրոնատի իրավունքներից, ծովի կողմից բացեցին մենաստանի աննկատելի դուռը, դրանով դուրս բերեցին սպասավորի մասունքները և դրե-

ցին սուրբ նահատակ Եվստաքոսի եկեղեցուն, որը գտնվում էր կատապանյան ապարանքների շրջանում և կախված էր քաղաքացիական իշխանությունից:

Երբ երկպառակությունն ավարտվեց, արքեպիսկոպոսը թույլատրեց նոր եկեղեցու կառուցումը և, հանելով ոտնամանները, հանդիսավորապես քայլեց շատ եպիսկոպոսների, տաճարի բոլոր հոգևորականության և մեծ բազմության ուղեցությամբ մինչև նահատակ Եվստաքոսի եկեղեցի՝ խոնարհվելու համար սուրբ սպասավորի մասունքներին:

Հենց որ սուրբ սպասավորի աճյունը հասավ Բարի, նրանից բազմաթիվ ապաքինումներ եղան: Ամեն տեսակ տկարներ, կաղեր, կույրեր, խուլեր, դիվոտածներ՝ մասունքներին հպվելով, ապաքինվում էին: Իրադարձության ժամանակակցի՝ արևմտյան պատմաբան Նիկիֆորի խոսքերով, մասունքների ժամանման առաջին գիշերը և հաջորդ օրը բուժվեց երկու սեռերի և տարբեր հասակների 47 մարդ: Նրանց թվում էին. նշանավոր քաղաքացիներից մեկը և մի հայ, որի ձախ կողը բոլորովին սնքել էր, երեք լուսնոտ, մեկ խուլուհամր, երկու գոսաձեռ, երկու սապատավոր նորածին, երեք կույր, պիզացիների ցեղից ոմն գոսաձեռ և կաղ և շատ ուրիշներ՝ հարկ կլինի երկար թվարկել բոլորին: Երրորդ օրը բազմաքանակ ժողովրդից, որ գալիս էին ծայրամասային գյուղերից, ավաններից ու քաղաքներից, մեծաստանում ապաքինվեց ինը տկար: Նրանցից մեկը գոսաձեռ նորածին էր՝ աչքի սպիտակ հատով, մի խուլ աղքատ, մեկը՝ երկու ոտքից կաղ, դիվոտած նորածին, դիվոտած հայ աղջնակ, յուվենտացի մի կին բոլորովին սնքած, մի ուրիշ կին, որ տառապում էր ծանր հիվանդությամբ, մի տկար և լուսնոտ կին և մի ճանապարհորդ՝ գոսաձեռ և կույր: Նույն օրը, սուրբ մարմինը Կատապանյան արքունիք տեղափոխելուց հետո, բուժվեց ևս 14 հոգի: Չորրորդ օրը բուժվեց 29 հիվանդ. սկզբում՝ ոմն դիվոտուհի, բոլորովին սնքած, Տերցիլիոս գյուղից, մի օրիորդ Բիտունտո քաղաքից, Ասկուլո քաղաքից մի կին և մի դիվոտուհի Տարանտո քաղաքից, երեք լուսնոտ, երկու կույր, մի սապատավոր կին և մի ընկնավոր կին սուրբ Վիտի քաղաքից (Սկագիոզ սարին մերձ ամրոցի տակ), որն ամեն օր բազում անգամներ ծանրորեն ընկնավորում էր, մահու չափ տանջվելով: Տեսնելով, թե ինչքան առողջ է նա,- գրում է Նիկիֆորը, -ի պատասխան իմ եռանդագին հարցուփորձի, ասաց, որ իր վրա է նստել մի մեծ ճուռակ, թառել կրծքին և, թևերը լայն բացած, ծածկել իրեն: Երբ նա հեռացել է, հանկարծ այնպիսի դուրեկան բույր է տարածվել, որ կարծել է, թե գտնվում է դրախտում: Նույնը նշեցին և մյուս բուժվածները: Այստեղից, անկասկած, պետք է հավատալ, - ասում է Նիկիֆորը, - որ դա սուրբ խոստովանահոր Հրեշտակն է, որն ամեն օր հսկում է մարմինը: Այդպես Բարիից մի օրիորդ բուժվեց, որ տառապում էր ծնկների անասելի ցավից, և շատ ուրիշներ: Հինգերորդ օրը սուրբ Նիկողայոսը տեսիլքով հայտվեց մի պատ-

Սուրբ Նիկողայոսի մասունքներից այդպիսի հրաշքների առատությունը և նավաստիներին արդեն տրված խոստումը բարեցիներին տրամադրեցին սուրբ Նիկողայոսի պատվին նոր քարե եկեղեցի կառուցել: Աշխատանքներն սկսեցին այն շենքի վերակառուցումով, որն այդ ժամանակ նվիրաբերել էր հերցոգ Ռոժերը, որպեսզի այն վերածվի սուրբ Նիկողայոսի տաճարի: (Հավանաբար, վերակառուցման ժամանակ սուրբ Եվստաքոսի անվան հիշյալ եկեղեցին ոչնչացվել էր, քանի որ սուրբ Նիկողայոսի մասունքները տեղափոխվել էին ժամանակավոր մի եկեղեցի, ուր գտնվում էր առաջին նահատակ սուրբ Ստեփանոսի անվան սեղանը): Տաճարի կառուցումն ու նվիրատվությունների հավաքումը հսկելու համար ընտրվել էր Բենեդիկտյան մենաստանի վերոհիշյալ վանահայր Եղիան: 1089 թվականին տաճարի կառուցումն ավարտվեց: Այդ ընթացքում սրբի մասունքների համար պատրաստվեց արթածե տապանակ՝ զարդարված թանկարժեք քարերով:

Եկեղեցու կառուցումից հետո Բարիի կղերականությունն ու ժողովուրդը խնդրանք ուղարկեցին Հռոմի Ուրբանոս II պապին, որ նա իր սուրբ տաճարի հոգևորականներով գա Բարի, օրհնի սուրբ Նիկողայոսի անունով եկեղեցին և սուրբ ձեռքերով Աստծո սպասավորի ազնիվ մասունքները ամփոփի նոր տապանակի մեջ: Ուրբանոս II պապն ուրախությամբ համաձայնեց այդ բարեպաշտ խնդրանքի կատարմանը և հոգևորականներով անհապաղ ժամանեց Բարի: Այստեղ նա մասունքներն ամփոփեց նոր տապանակի մեջ, այն տեղափոխեց սուրբ Նիկողայոսի եկեղեցի և դրեց բեմում: Նոր եկեղեցուն դրվեց նաև դագաղը, որտեղ առաջ դրված էին սուրբ սպասավորի մասունքները և որում առանձնացված ու դրված էր մասունքների մի մասը: Այնուհետև օծեց բուն եկեղեցին ի պատիվ սուրբ Նիկողայոսի: Սրբագործումը կատարվեց հոկտեմբերի 1-ին, ընդ որում օրհնվեց եկեղեցու ներքնահարկը, որում մինչև հիմա էլ գտնվում են սուրբ սպասավորի մասունքները: Եկեղեցու վերնահարկը օրհնվեց ոչ վաղ, քան 1197 թվի հունիսի 22-ին եպիսկոպոս Վյուրցբուրգցի Կոնրադի կողմից և Ցելեստինոս III պապի(1196-1198) թույլտվությամբ:

Որոշ ժամանակ անց սուրբ Նիկողայոսը հայտնվում է մի բարեպաշտ վանականի երազում ու ասում նրան. «Ամենակարող Աստծու բարեհաճությամբ ես եկա ձեր Բարի քաղաքը. այժմ ես ուզում եմ, որ իմ մասունքները դրվեն բեմի սեղանի

տակ»: Սուրբ սպասավորի կամքն անհապաղ կատարվեց, և նրա մարմինը դրվեց բեմի սեղանի տակ, ուր և մինչ այժմ գտնվում է:

Ահա համառոտ պատմությունը նոր կառուցված եկեղեցու, որտեղ ամփոփված են և հիմա էլ հանգչում են սուրբ Նիկողայոսի մասունքները: Բարիի եկեղեցու արքեպիսկոպոս Ուրսունի մահից հետո, որ պատահեց սուրբ Նիկողայոսի եկեղեցու ներքնահարկի օծումից քիչ անց, ընդհանուրի ցանկությամբ և Ուրբանոս Երկրորդ պապի կողմից 1089 թվականի սեպտեմբերի 30-ին նրան ժառանգորդ կարգվեց վանահայր Եղիան, որին հենց նույն ժամանակ պապը տվեց «Բարիի արքեպիսկոպոս, սուրբ Նիկողայոսի վանահայր» պատվանունը: Նրա օրոք եկեղեցու կողքին աղքատ թափառաշրջիկների համար կառուցվեց հիվանդանոց կամ ապաստարան: Աղքատանոցը գոյություն ունի մինչև օրս: Օտարերկրացիներին այստեղ թույլատրվում էրեք օր անվճար մնալ, տեղացի ուխտավորներին՝ մեկ օր: Եղիան հաստատեց ամեն տարի մայիսի 9-ին քաղաքում խաչերով երթ կազմակերպելու կարգը:

Եղիայի մահից հետո, 1105 թվականին, սուրբ Նիկողայոսի տաճարի առաջնորդությունը ստանձնեց Եվստափիոսը, որը եկեղեցին մարմարապատեց և զարդարեց խճանկարով: Մահից հետո նրան փոխարինեց *Բոլոր Սրբերի* վանքի վանահայր *Մելոն*, և այդ ժամանակներից Նիկողայոս Սքանչելագործի տաճարի վանահայրերը անվանվում են պրիորաներ (gran priori), որ նշանակում է ավագերեց կամ վանքի վանահայր: Ուրբանոս Երկրորդ պապը՝ սուրբ Նիկողայոսի եկեղեցուն սրբի մասունքները ամփոփելուց անմիջապես հետո տեղական թեմի իշխանությունից անկախ դարձրեց և անմիջականորեն ենթարկեց պապական գահին, որը վերահաստատեց Պասխիալոս պապը (1099-1118):

Արևմուտքում քիչ եկեղեցիներ կան, որոնք այդպիսի մեծ և համընդհանուր պատվի արժանան, ինչպես Բարի քաղաքի սուրբ Նիկողայոս Սքանչելագործի եկեղեցին: Այստեղ, սուրբ Նիկողայոսի մասունքների առջև 1094 թվականին աղոթել է խաչակրաց արշավանքների նշանավոր քարոզիչ Պետրոս Անապատականը և հերցոգ Բոյենունդին հանդգել զենք վերցնել ու անհավատներից ազատագրել Տիրոջ գերեզմանը: Հենց այս տաճարում Ուրբանոս Երկրորդ պապը 1098 թվականի հոկտեմբեր ամսին Հարավային Իտալիայի կանչված հույն հոգևորականությանը հանդգեց ընդունել Սուրբ Հոգու ծագման Հռոմեական վարդապետությունը: Ե՛վ երևելի անձինք, և՛ հասարակ ժողովուրդը մրցակցում էին իրենց պատկառանքը առ Նիկողայոս Սքանչելագործը արտահայտելու համար: Բարի քաղաքի բնակիչները՝ հանձնվելով քաղաքը պաշարած զորքին, հաղթողների առաջ մշտապես պայման էին դնում, որ իրենց սրբի ու Հովանավոր սրբի մասունքները իրենց քաղաքում թողնեն: Հերցոգներ Ապուլեյ-Ռոբերտը, Ռոջերը, Բոյենունդը ընդունեցին սուրբ Նիկողայոսի եկեղեցու հովանավորի կոչումը: Կայսրերը, թագավորները,

հերցոգներն ու իշխանները, ինչպես նաև մասնավոր անձինք եկեղեցին հարստացրին առատաձեռն նվիրատվություններով և նվերներով: Սուրբ մասունքներին խոնարհվելու բարեպաշտ ուխտավորների մեծ հոսքը ցայժմ չի ընդհատվում:

Ռուսաստանի մեր ուխտագնացները նույնպես՝ այցելով Արևելքի սուրբ վայրերը, պարտք էին համարում հանուն տեղի սրբության այցելել նաև Արևմտյան Բարի և երբեմն թողել են արժեքավոր հուշագրություններ, թե ինչ են տեսել այնտեղ: Այսպես, նրանցից մեկը՝ Վասիլի Գրիգորևիչ Բարսկին, անցյալ դարի սկզբին շրջելով Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի սուրբ վայրերով, իր «ճամփորդություններում» բավականին մանրամասնորեն նկարագրում է Բարիում գտնվող այն եկեղեցին, որտեղ ամփոփված են սուրբ Նիկողայոս Սքանչելագործի մասունքները: Ռուս ուտագնացի այդ բավականին հասարակ, սակայն միաժամանակ չափազանց հետաքրքիր պատմությունը ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև՝ փոխելով միայն անցյալ դարի ռուսերենի գրաբարը:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ՝ ՄԻՐԼԻԿԻԱՅԻ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ԶՐԱՇՔՆԵՐԸ ՆՐԱ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԻՑ ԶԵՏՈ

Կյանքի օրոք Նիկողայոս սրբազանը մարդկային ցեղի բարեգործն էր: Չդադարեց այդպիսին լինել և մահվանից հետո, դժբախտության մեջ գտնվողների համար լինելով փութեռանդ պաշտպան, փրկելով ջրասույզ լինելուց և ծովի խորքից դուրս բերելով ցամաք, փախցնելով գերությունից և տուն բերելով, ազատելով սրով և այլ ձևերով մահապատժից, բժշկելով. կույրերին՝ տեսողություն, անդամալույծերին՝ քայլք, խուլերին՝ լսողություն, համրերին՝ ձայն: Շատերին նա հարստացրեց, երբ նրանք ծայրահեղ կարիքի ու աղքատության մեջ էին, սովյալներին կերակուր էր մատուցում և դժբախտության մեջ գտնվող յուրաքանչյուրի համար պատրաստակամ օգնական էր, եռանդուն պաշտպան և փութեռանդ հովանավոր ու պահապան: Եվ հիմա էլ է օգնում բոլորին և ազատում վերահաս դժբախտությունից: Զնարավոր չէ թվարկել կամ նկարագրել նրա բոլոր հրաշքները: Նիկողայոս մեծ սքանչելագործին ճանաչում են ողջ Արևելքն ու Արևմուտքը, երկրի բոլոր ծագերում հայտնի են նրա հրաշագործությունները (սուրբ Դիմիտրի Ռոստովցի):

Այդ պատճառով էլ եկեղեցին իր երգասացություններում փառաբանելով Աստծո ընտրյալ Միրլիկիայի հրաշագործ Նիկողայոսին, բոլորին հորդորում է խոնարհվել նրա առջև. *թագավորներն ու իշխանները թող հավաքվեն նրա շուրջը,*

հովիվներն ու ուսուցիչները թող փառաբանեն նրան որպես բարի հովիվ, որ հիվանդությունների բժիշկ է, դժբախտությունների մեջ՝ ազատարար, մեղավորներին՝ պաշտպան, աղքատներին՝ սնող, վշտի մեջ՝ սփոփիչ, ճանապարհորդների համար՝ ուղեկից, ծովում նավարկողներին՝ առաջնորդ, թող բոլորը փառաբանեն Նիկողայոս մեծ սրբին:

Արդեն իսկ Նիկողայոս սրբազանի հրաշագործությունների մասին ոչ այնքան բազմաքանակ պատմություններից, որ տեղ են գտել ստորև և վերցված են մեծ հրաշագործի ժամերգություններից, բարեպաշտ ընթերցողները կտեսնեն, թե որքան բազմազան էր մեծ սպասավորի օգնությունը իր կարիքն զգացողներին:

ՆԱՎԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՏԱԿՈՒՄԻՑ

Աստծու հանգուցյալ սպասավորի հրաշքների լույսն սկսեց փայլել նրա երանելի վախճանից շատ չանցած, երբ նրա ազնիվ մասունքներն սկսեցին անուշաբույր ու բուժիչ մյուռոն բխել, և շուտով հասավ ամենածայրամասերում ապրող քրիստոնյաներին: Այսպես այդ մասին իմացան Թանախ (այժմ՝ Դոն) գետի ափերին բնակվող հույները: Այնտեղ գտնվեցին բարեպաշտ մարդիկ, որ ցանկացան ուղևորվել Միրի, որպեսզի խոնարհվեն Աստծո մեծ սպասավորի մասունքներին: Նավը բարձելով ցորենով, նրանք ուղևորվեցին հեռավոր Լիկիա: Մարդկային ցեղի թշնամուն, որին այնքան հաճախ անարգում էր կյանքի օրոք Աստծո սուրբ սպասավորը, իհարկե, հաճելի չէր Նիկողայոս սրբազանի հիշատակի հանդեպ հարգանքի այդպիսի դրսևորումը, և նա մտադրվեց խափանել թանախացիների առաքինի ցանկությունը: Դրա համար նա կնոջ կերպարանք առավ և, նավարկելուց առաջ մոտենալով Միրի ճանապարհվող բարեպաշտ տղամարդկանց, մեկնեց նրանց ձիթայուղով լի անոթն ու դիմեց նրանց հետևյալ խոսքերով. «Ես ինքս կցանկանայի սուրբ Նիկողայոսի շիրմին տանել այս ձիթայուղը, սակայն վախենում եմ հեռավոր ծովային ճանապարհից, քանի որ ես թույլ և տկար կին եմ: Այդ պատճառով խնդրում եմ ձեզ վերցնել այս ձիթայուղով անոթն ու հասցնել Միրի, իսկ այնտեղ լցնել նրա շիրմինը լուսավորող կանթեղի մեջ»: Այսպես կնոջ կերպարանք առած նենգ դևը նրանց փոխանցեց ձիթայուղով լի անոթը, որ հետագայում պարզվեց դիվային կախարդանքով էր խառնված և կործանարար էր նավողների համար:

Չկասկածելով սատանայական խարդավանքներին, ընդհակառակը, կնոջ խնդրանքում տեսնելով բարեպաշտ մտադրություն, ճանապարհորդները վերցրին նրանից անոթը և ուղևորվեցին: Որոշ ժամանակ նավարկությունը բարեհաջող էր: Սակայն հետո ուժեղ քամի փչեց, և ծովն ալեկոծվեց, անհնար դարձնելով ուղևո-

րությունը հեռավոր Լիկիա: Այդ պատճառով թանախացիները որոշեցին վերադառնալ տուն՝ չիրականացնելով իրենց առաքինի ցանկությունը, և արդեն պատրաստվում էին ետ շրջել նավը: Բայց այդ պահին նրանց ընդառաջեց սուրբ Նիկողայոսը փոքրիկ նավակով: «Ո՞ւր եք նավարկում, բարի մարդիկ,-դիմեց նրանց:- Ինչո՞ւ եք ընդհատում ուղևորությունը և վերադառնում տուն: Ձեր ձեռքում է փոթորիկը խաղաղեցնող միջոցը և սկսած ճամփան անարգել շարունակելը: Իմացեք, որ ձեր նավի ընթացքին ընդդիմանում է սատանայի չարամտությունը, որը կնոջ կերպարով ձեզ տվեց ձիթայուղով լի անոթը. ծով նետեք այն և բարեհաջող շարունակեք ձեր ուղևորությունը»:

Ծովայինները լսեցին հրաշալի մարդուն և ձիթայուղով լի անոթը նետեցին ծով: Հանկարծակի այդտեղից սև ծուխ բարձրացավ, հուր և զազրելի գարշահոտություն. ծովը նստելով ճեղքվեց, և հատակից շառաչ բարձրացավ, ծովային կաթիլները վերածվեցին կրակե կայծերի: Սարսափը պատեց ծովայիններին և նրանք սկսեցին բղավել: Աստծո սպասավորն այս անգամ էլ նրանց մենակ չթողեց: Կրկին երևալով, խորհուրդ տվեց մոռանալ սարսափը և իր տիրական խոսքով դադարեցրեց դիվային ալեկոծումը: Նույն պահին մեղմ գեփյուռ փչեց, և օդում տարածվեց հրաշալի անուշահոտություն: Անարգել հասնելով Միրի, թանախացիները կատարեցին իրենց բարեպաշտ ցանկությունը՝ խոնարհվեցին սուրբ ընտրյալի մասունքներին: Այնուհետև բարեհաջող վերադարձան տուն և պատմեցին, թե ինչ արեց իրենց համար սուրբ Նիկողայոսը:

ԳՈՂԱՑՎԱԾ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՀՐԱՇՔՈՎ ԲԱՐԲԱՐՈՍԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կալաբրիայի վրա բարբարոսական արշավանքներից մեկի ժամանակ, երբ ամեն ինչ ավերվում և հրի էր մատնվում, բարբարոս-կողոպտիչը անհայտ քրիստոնյայի տանը գտնում է սուրբ Նիկողայոսի սրբապատկերը: Չհմանալով, թե ով է այնտեղ պատկերված, բարբարոսն, այնուամենայնիվ, վերցնում է իրեն դուր եկած պատկերը: Ճանապարհին գերի քրիստոնյաները բարբարոսին բացատրում են, թե դա քրիստոնյաների շրջանում փառաբանված սուրբ Նիկողայոս հրաշագործի պատկերն է: Վերադառնալով Աֆրիկա, նա սուրբ Նիկողայոսի սրբապատկերը դնում է տանը: Հետո, երբ նրան անհրաժեշտ էր ճանապարհ ընկնել, սուրբ Նիկողայոսի սրբապատկերին հանձնարարում է տանը եղած ողջ ունեցվածքը և դիմում նրան հետևյալ խոսքերով. «Ահա քեզ հանձնում եմ ողջ ունեցվածքս, որը դու պետք է պահպանես անբողջությամբ, քանի դեռ չեմ վերադարձել տուն. եթե իմ բացակայությամբ որևէ բան վնասվի իմ ունեցվածքից, ապա դրա համար դա-

ժանաբար վրեժխնդիր կլինեն քեզնից»։ Բարբարոսը ճանապարհ ընկավ։ Նրա բացակայությամբ գողեր մտան տուն, թալանեցին ողջ ունեցվածքը, բայց Նիկողայոս հրաշագործի սրբապատկերին ձեռք չտվեցին։ Վերադառնալով տուն և տեսնելով, որ ողջ ունեցվածքը կողոպտված է, բռի բարբարոսը չարությունը թափեց սուրբ Նիկողայոսի սրբապատկերի վրա։ «Ես քեզ չէի՞ ասել, - դիմեց նա սուրբ Նիկողայոսին, - որ դու իմ բացակայությամբ պահպանես ունեցվածքը։ Քանի որ դու չես արել դա, ապա գողերի փոխարեն ես քեզ կծեծեն»։ Այս խոսքերով նա խարազանման ենթարկեց սրբի ազնիվ պատկերը և նույնիսկ սպառնաց այրել նրան, եթե ունեցվածքը չգտնվի։

Երբ գողերը, որ թալանել էին բարբարոսի ունեցվածքը, սկսեցին իրար մեջ բաժանել այն, անսպասելիորեն նրանց երևաց Քրիստոսի սուրբ Նիկողայոսը և ահեղաբար ասաց. «Ի՞նչ արեցիք դուք։ Ինչո՞ւ գողացաք ունեցվածքը, որ հանձնարարված էր ինձ պահպանել։ Դուք մեղք գործեցիք, իսկ ես մեղավոր դուրս եկա։ Նայեք, թե ինչ դաժանաբար է ինձ ծեծել բարբարոսը, ինչ վերքեր է թողել մարմնիս և ինչպես է արնաշաղախ արել։ Անհապաղ վերադարձրեք թալանված ունեցվածքը բարբարոսին։ Եթե դուք դա չանեք, ապա խայտառակ մահապատժի կենթարկվեք»։ Նրա խոսքերից զարմացած, գողերն ասացին. «Ո՞վ ես դու և ի՞նչ իրավուքով ես այդպես խոսում»։ Նա պատասխանեց. «Ես Նիկողայոսն եմ, իմ Տեր Յիսուս Քրիստոսի ծառան»։ Լսելով Աստծո մեծ սպասավորի անունը, գողերը երկյուղեցին և անհապաղ վերադարձրին բարբարոսի ունեցվածքը։ Դրանից հետո նրանք դադարեցին գողություն անել և մինչև վերջ աստվածահաճո կյանք վարեցին, դառնորեն ապաշխարելով նախկին մեղքերը։ Բարբարոսն էլ, ապշած Աստծո սպասավորի փութեռանդ և հրաշագործ օգնությունից, ամբողջ տնով անվերապահ հավատաց Քրիստոսին, խաչակնքեց և հետո եկեղեցի կառուցեց ի պատիվ սուրբ Նիկողայոսի։ Այդ ժամանակվանից մեծ հրաշագործի անունը փառաբանվեց բարբարոսների շրջանում և հայտնի դարձավ Յյուսիսային Աֆրիկայում։

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԵՈՂՈՐՈՍԻՆ

Նիկիայի Երկրորդ Տիեզերաժողովի (787) Արձանագրերում պահպանվել է Քրիստոսի սուրբ Նիկողայոսի ժառանգորդներից մեկի պատմությունը հրաշքով օգնության մասին, որ ցույց է տրվել իրեն այդ մեծ սրբի կողմից։ Ժողովում, ինչպես հայտնի է, հավաքվել էին ճշմարիտ աստվածապաշտություն հաստատելու համար, որը սասանվել էր հերձվածողների պատկերամարտության պատճառով,

յուրաքանչյուր հոգևորականի իրավունք էր տրված բոլորի առջև հօգուտ պատկերապաշտության ասել այն ամենը, ինչ իրեն հայտնի է: Այսպես, ընթերցվեց սուրբ Նիլ Սինայցու նամակը ուղղված լռության ուխտ պահած Իլիոդորոսին սինայցի երկու ճգնավորներին՝ սուրբ նահատակ Պլատոնի երևալու մասին, ում նրանք ճանաչեցին այն սրբապատերներով, որ օգտագործվում էին իրենց հայրենիքում: Ընթերցումը լսելով, Սիրիի եպիսկոպոս Թեոդորոսը (որ սկզբում հերձվածող պատկերամարտների կողմնակիցն էր, բայց ժողովի առաջին նիստում ապաշխարեց և հրաժարվեց դրանից), ժողովի առջև ասաց.

«Ինչ-որ նման բան վիճակվեց և ինձ: Մի անգամ վիրավորանքի էի արժանացել կարևոր անձանց կողմից: Իմ ավագ սարկավագը, որ բարեպաշտ և աստվածավախ մարդ է, ասում է ինձ, որ երազում տեսել է մի պատրիարքի, որն իրեն ասել է. իբր, թող միտրոպոլիտը գա մեզ մոտ, և նրա գործերը հօգուտ իրեն կընթանան: Ես հարցրի ավագ սարկավագին. ի՞նչ տեսքով ու կերպարանքով հայտնվեց քեզ պատրիարքը: Նա պատասխանեց. դեմքով կարմիր և մազերով ճերմակ: Այդ ժամ ես ասացի նրան. այսպիսի տեսքով չէ՞ պատրիարքը. վարչամակի վրա (ծածկոցի կամ ընդհանրապես սուրբ հանդերձի) սուրբ Նիկողայոսի սրբապատկերն է, և, ինչպես դու ես պատմում, հենց այդպիսին է նա, ինչպիսին քեզ երևացել է: Նա պատասխանեց. այո՛, իսկապես այդպիսին էր ինձ հետ խոսողը: Սրբապատկերի հետ այդ նմանությունից ես հասկացա, որ նրան ոչ թե պատրիարք է երևացել, այլ սուրբ Նիկողայոսը: Այսպես, հավատալով ավագ սարկավագի խոսքերին, անմիջապես ուղևորվեցի Աստծո հովանավորյալ թագավորող քաղաքը, և իմ բոլոր գործերն ընթանում էին ի նպաստ իմ թեմի»:

ՈՍԿՈՒ ՎԵՐԱԴՂԱՐՁՆԵԼԸ ՀՐԵԱՅԻՆ

Մի քրիստոնյա հրեայից փոխարինաբար վերցրել էր մեծ քանակությամբ ոսկի: Քանի որ նա ոչ ոք չուներ, որ երաշխավորեր իր փոխարեն, ապա հրեայի առջև իրեն երաշխավոր դարձրեց սուրբ Նիկողայոսին: Դրա համար երկուսով գնացին սուրբ Նիկողայոսի եկեղեցի, ուր քրիստոնյան սրբազանի դամբարանի առջև երդվեց վերադարձնել պարտքը: Ահա և եկավ քրիստոնյայի կողմից պարտքը վերադարձնելու նախանշված ժամկետը: Հրեան եկավ նրա մոտ և խնդրեց վերադարձնել վերցրած ոսկին: Քրիստոնյան, որոշելով չտալ պարտքը, սկսեց երդումով հավատացնել հրեային, թե ինքն արդեն վերադարձրել է ոսկին: Այդ ժամանակ հրեան դիմեց դատավորներին գործը քննելու խնդրանքով: Վերջիններս, ո-

րևէ ապացույց չունենալով, որոշեցին գործը թողնել քրիստոնյայի խղճի դատաստանին: Նրանք կարգադրեցին նրան երդումով հաստատել, որ նա տվել է ողջ պարտքը և հրեային որևէ բանով պարտական չէ: Երդման ժամանակ էլ ընչասերը հանդգնեց, հուսալով խորամանկությամբ խուսափել երդմնազանցության համար պատժից: Նա ոսկին դրեց հաստ ձեռնափայտի մեջ, որը երդման ժամանակ տվեց հրեային բռնելու, ասելով. «Ես քեզ տվել եմ ավելին, քան պարտք էի», - երդումից անմիջապես հետո էլ վերցրեց այն: Բայց Աստծո դատաստանը չհապաղեց պատժել երդմնազանցին: Երբ նա երդմնազանցությունից հետո վերադառնում էր տուն, խոր քուն մտավ և գետին տապալվեց: Արագ ընթացող կառքը անցավ նրա վրայով և սպանեց նրան, իսկ ձեռնափայտը, որի մեջ թաքցված էր ոսկին, ընկավ, կոտրվեց, և նրա միջի ոսկին շաղ եկավ:

Իմանալով այդ մասին, հրեան սարսափեց և նույնիսկ չէր ուզում վերցնել իր ոսկին, որ առաջարկում էին նրան: Վերջապես նա ասաց. «Այնքան ժամանակ չեմ վերցնի ոսկին, քանի չեմ տեսել մեռնողին հարություն առած սուրբ Նիկողայոսի աղոթքներով: Երբ դա պատահի, ապա ես էլ քրիստոնյա կդառնամ»: Դա դեռ չասած, մեռնողը կենդանացավ: Ապշած այդպիսի մեծ հրաշքից, հրեան մկրտվեց ողջ ընտանիքով:

ՉՈՎՍԵՓ ՍԱՂՄՈՍԵՐԳԱԿԻ ԱԶԱՏՈՒՄԸ ԿԱՊԱՆՔՆԵՐԻՑ

IX դարում Աստծո սպասավոր Նիկողայոսը ետ մղեց մահմեդականներին Ռոդոս կղզուց, երբ նրանք ձեռք բարձրացրին քրիստոնեական տաճարների վրա, և հրաշքով իր հովանավորությունը ցույց տվեց հայր Չովսեփ Սաղմոսերգակին, որն անհողդողդ պատկերապաշտության համար բանտարկված էր Կրետե կղզում: Այնտեղ, բանտում, նա ամբողջ վեց տարի տանջվում էր մինչև պատկերամարտիկ Լևոն Չայի մահը: Նույն գիշեր և հենց նույն ժամին, երբ անհավատ հալածողն սպանվեց (820 թվականի դեկտեմբերի 24-ին), տեր հայրը կանգնած էր աղոթքի, ժամերգությամբ դիմավորելով Քրիստոսի Ծննդյան տոնը: Չանկարծակի բանտը լուսավորվեց, և բանտարկյալին հայտնվեց սրբազան հանդերձանքով փառահեղ մի տղամարդ՝ ճերմակահեր, պայծառադեմ, և ասաց. «Լիկիայի Միրից եկել եմ քեզ մոտ, Աստծո կողմից եկել եմ բարի լուր հաղորդելու. թշնամին, որ խռովություն էր գցել Եկեղեցուն և հալածել Քրիստոսի հոտը, զրկվեց իշխանությունից ու կյանքից, կանչվելով Աստծո դատաստանի: Այժմ դու պետք է վերադառնաս Կոստանդնուպոլիս, որպեսզի քո մեջ ապրող Սուրբ Չոզու բարեշնորհությունը հաստատես շատերի համար»: Այս ասելով, նրան մեկնեց ինչ-որ մագաղաթ և ավե-

լացրեց. «Ընդունիր այս գիրը և կեր»: Իսկ այնտեղ գրված էր. *փութա, շռայլդ, և ջանա, քանզի բարեգութ ես մեզ օգնելու, ինչպես որ կցանկաս:* Հովսեփն ընդունելով ու կարդալով մագաղաթը, ուրախությամբ կուլ տվեց այն և ասաց. «Բերանիս համար ի՛նչ քաղցր են այս խոսքերը»: Եվ հայտնվածը բանտարկյալին հրամայեց երգել դա: Հովսեփը երգեց, և կապանքներն ընկան նրա վրայից: Սուրբը նրան հրամայեց հետևել իրեն. բանտի դռներն իրենք իրեն բացվեցին նրանց առջև, և Հովսեփը հայտնվեց Կոստանդնուպոլիս տանող մեծ ճանապարհին: Բնակություն հաստատելով այնտեղ, հայր Հովսեփը եկեղեցի կառուցեց հանուն իր բարերար սուրբ Նիկողայոսի և փառաբանեց նրան շատ սաղմոսներում, որ մինչև հիմա էլ երգում են Ուղղափառ եկեղեցում:

ՋՐԱՀԵՂՁ ՊԱՏԱՆՈՒ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի բարեպաշտ մարդ եռանդագին խնդրում էր սուրբ Նիկողայոսին, որ նա բուժի կնոջ անպտղությունը և զավակ պարզևի, խոստանալով նրա ծնվելուց հետո ոսկյա թաս բերել սուրբ Նիկողայոսի տաճար: Նրա աղոթքները լսեց սուրբ Նիկողայոսը, և շուտով նրան որդի ծնվեց: Երդունը կատարելով, նա ոսկերչին շատ ոսկի տվեց և պատվիրեց դրանից թաս պատրաստել: Բայց երբ պատվերը կատարվեց, դա նրան շատ դուր եկավ, և նա ոսկերչին պատվիրեց ուրիշ թաս պատրաստել սուրբ Նիկողայոսի համար, իսկ առաջինը պահեց տնային գործածության համար: Երկրորդ թասի պատրաստվելուց հետո նա ծովով ուղևորվեց սուրբ Նիկողայոսի տաճար և հետը վերցրեց սուրբ Նիկողայոսին ուղղված աղոթքներով ծնված որդուն ու երկու թասերը: Նավարկության ժամանակ հայրը պատանուն պատվիրեց մի քիչ ջուր վերցնել առաջինը պատրաստված թասով: Հոր կամքը կատարելով, պատանին թասի հետ ընկավ ծովի խորխորատը և խեղդվեց:

Հայրը դառն արցունքներ թափելով որդու վաղաժամ մահվան համար, միայնակ շարունակեց ճանապարհը, ցանկանալով կատարել սրբին տրված խոստումը: Գալով սուրբ Նիկողայոսի տաճար, նա սրբապատկերի առջև դրեց երկրորդ թասը: Բայց թասն աներևույթ ուժով նետվեց եկեղեցու կենտրոն: Այդ ժամանակ նա երկրորդ անգամ այն դրեց սրբապատկերի առջև, սակայն նույն անհաջողությունը. թասը երկրորդ անգամ աներևույթ ուժով նետվեց եկեղեցու կենտրոն: Բոլոր ներկաներն ապշած էին դրանից, չհասկանալով, թե ինչ է նշանակում: Եվ ահա, հանկարծակի եկեղեցու կենտրոնում կանգնում է պատանին՝ ձեռքին առաջինը պատրաստված թասը, և բոլոր ներկաներին պատմում, որ ինքը փրկվեց ծովում խեղդվելուց Քրիստոսի սուրբ Նիկողայոսի շնորհիվ: Շնորհակալ լինելով Տիրոջը,

որ փառաբանվում է Իր սրբերով, հայրը տաճարում գործածելու համար թողեց երկու թասերն էլ և որդու հետ բարեհաջող վերադարձավ տուն:

ՊԵՏՐՈՍ ԶՈՐԱՊԵՏԻ (ԱՖՈՆԱՑՈՒ) ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԲԱՆՏԻՑ ՈՒ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քրիստոսի սուրբ Նիկողայոսը հրաշքով օգնություն է ցույց տալիս հույն զորահրամանատար Պետրոս Սխուլաստիկին: Մուսուլմանների դեմ պատերազմում նա գերի է ընկնում և բանտարկվում Սամարիի բանտում, որը Եփրատի ափին էր: Շղթայելով ծանր կապանքներով և ուժեղ հսկողության տակ նետելով մռայլ բանտը, թշնամիներն արգելել էին նրան որևէ տեսակցություն և դրանով իսկ զրկել ամեն տեսակ սփոփանքից: Այս անմխիթար վիճակում նա հիշեց իր նախկին բոլոր մեղքերը, անկեղծորեն ապաշխարեց և եռանդագին օգնություն խնդրեց սուրբ Նիկողայոսից, որին, նախքան այս, երբ կրկին գերության մեջ էր, աղոթքով շտապեց դիմել ազատվելու մասին, խոստանալով, գերությունից ազատվելուն պես, չվերադառնալ կնոջ և երեխաների մոտ Ցարգրադ, այլ գնալ ուղիղ Հռոմ և այնտեղ սուրբ Պետրոս առաքյալի մենաստանում կուսակրոն ձեռնադրվել. բայց, գերությունից ազատվելով, մոռացավ երդումը:

Այժմ, կրկին գերի ընկնելով, նորից դիմում է սուրբ Նիկողայոսին և անսասան երդում տալիս ազատվելուց հետո կուսակրոն ձեռնադրվել: Որպեսզի աղոթքը առավել մեծ հաջողություն ունենա, Պետրոսը խիստ պաս է սահմանում, ամբողջ շաբաթվա ընթացքում ոչինչ չի ուտում և ողբ ու կականով օգնություն աղերսում մեծ հրաշագործից: Վշտահարների մխիթարիչն ու դժբախտությունների մեջ գտնվողների անհապաղ ազատարարը ութերորդ գիշերը հայտնվում է բանտարկված Պետրոսին ու ասում նրան. «Ես լսեցի քո աղոթքը, բայց Աստծո ողորմածությունը դեռևս հապաղում է ազատել քեզ: Հիշիր Քրիստոսի խոսքերը. բախեցե՛ք և կբացվի ձեզ: Մի թող աղոթքներդ և հույսդ դիր Տիրոջ վրա»: Այս ասելով, սուրբ Նիկողայոսը պատվիրեց ուտել հացը ու այնուհետև հեռացավ:

Որոշ ժամանակ անց սուրբ Նիկողայոսը նորից երևաց բանտարկյալի երագում և զվարթ դեմքով ասաց. «Հավատա, Պետրոս, որ ես անդադար աղոթում եմ քեզ համար: Տերն ինձ դեռ չի արտահայտել Իր կամքը, բայց ես քեզ ուրիշ պաշտպան ցույց կտամ, որը կաղոթի քեզ համար ամենակարող Աստծուն»: «Բայց ո՛վ, առարկեց Պետրոսը, քեզնից լավ կաղոթի Աստծուն, երբ ողջ աշխարհն է դիմում քեզ, ու դու փրկում ես բոլորին»: Սուրբ Նիկողայոսը պատասխանեց նրան. «Գի-

տե՞ս, արդյոք Սիմեոն Ծերունուն, որն իր ձեռքերին ընդունեց քառասնօրյա Մանուկ Քրիստոսին»: «Գիտեմ, Աստժո սուրբ,-ասաց Պետրոսը,-նրա մասին ընթերցվում է և սուրբ Ավետարանում»: Սուրբ Նիկողայոսը շարունակեց. «Աղոթիր նրան, նա Տիրոջ մոտ մեծ շնորհ ունի, քանի որ կանգնած է Ամենափրկչի Գահի կողքին, Սուրբ Աստվածածնի և սուրբ Հովհաննես Մկրտչի հետ միասին»: Այդ ասելով, սուրբ Նիկողայոսը հեռացավ:

Արթնանալով, Պետրոսն սկսեց նախկինից էլ ջանադիր աղոթել, համառորեն օգնության կանչելով սուրբ Սիմեոն Ծերունուն սուրբ Նիկողայոսի հետ միասին: Դրանից հետո իր անկողնու մոտ տեսավ երկու պաշտպաններին էլ՝ սուրբ Նիկողայոսին և սուրբ Սիմեոնին, որոնցից վերջինը ձեռքին գավազան ուներ, և ասաց նրան. «Կկատարե՞ս, արդյոք, խոստումդ և կիրաժարվես աշխարհից: Տես, չստես, ինչպես ստեցիր սուրբ Նիկողայոսին»: «Ոչ, աստվածահաճո մարդ, անհապաղ կկատարեմ», -ասաց Պետրոսը: Այն ժամանակ սուրբ Սիմեոնն ասաց նրան. «Եթե դու իսկապես խոստանում ես կուսակրոն ձեռնադրվել, ապա բանտից առանց երկյուղի գնա այնտեղ, ուր ուզում ես»: Բայց Պետրոսն ասաց. «Ես չեմ կարող դուրս գալ, քանզի շղթայված եմ կապանքով»: Սուրբ Սիմեոնը գավազանով հավեց կապանքներին, որով շղթայել էին Պետրոսին, և դրանք նույն ակնթարթին ընկան նրա վրայից: Իսկ սուրբ Նիկողայոսն ասաց նրան. «Տերն ազատեց քեզ գերությունից, այժմ գնա Հռոմ և չմոռանաս կատարել երդումդ, որպեսզի քեզ հետ նոր դժբախտություն չպատահի»: Դրանից հետո երանելի հայրերը կալանավորին դուրս բերեցին բանտից, ուղեկցեցին մինչ անվտանգ ճանապարհ ու հետո անհետացան նրա տեսադաշտից:

Նույն գիշեր սուրբ Նիկողայոսը հայտնվեց պապի երազում, կապանքներից ազատագրված Պետրոսի ձեռքը բռնած, և ասաց նրան. «Ահա այս մարդուն՝ Պետրոսին, Սիմեոն Ծերունու հետ ազատեցինք Սամարիի բանտային կապանքներից. հանձնարարում եմ քեզ կուսակրոն ձեռնադրել նրան և կանգնեցնել փրկության ուղու վրա: Դու նրան կտեսնես վաղը եկեղեցում առավոտյան ժամերգությանը և արա այն, ինչ ասացի քեզ»: Այդ խոսքերից հետո սուրբ Նիկողայոսն աներևութացավ:

Այդ ընթացքում Պետրոսը, սուրբ հայրեր Սիմեոնի և Նիկողայոսի աջակցությամբ ազատագրված, ժամանեց Հռոմ, եկավ սուրբ Պետրոսի տաճար և, իր ազատության համար ուրախությունից լաց լինելով, աղոթքով ծնկի իջավ առաքյալներ սուրբ Պողոսի ու Պետրոսի և իր ազատարարներ սուրբ Սիմեոնի ու սուրբ Նիկողայոսի առջև: Պապը ճանաչեց նրան և նույն օրը կուսակրոն ձեռնադրեց: Պետրոսն իր կյանքի մնացած օրերն անցկացրեց Աֆոն լեռան վրա՝ բարեպաշտական

գործերով: Ուղղափառ եկեղեցին նրան դասեց սրբերի շարքը և հունիսի 12-րդ օրը նշում է հայր Պետրոս Աֆոնացու հիշատակի տոնը:

ԱԳՐԻԿՈՍԻ ՈՐՂՈՒ՝ ՎԱՍԻԼԻՍԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Անտիոք երկրում, որ հաճախ ենթարկվում էր սարակիճոսների արշավանքներին, ապրում էր Ագրիկ անունով մի հարուստ ու բարեպաշտ մարդ: Մեծ հավատ ունենալով հայր սուրբ Նիկողայոսի հանդեպ, նա ըստ սովորության ամեն տարի, նրա հիշատակի օրը, աղոթքի էր գնում եկեղեցի, որը կրում էր Աստծո սույն սպասավորի անունը (որը Ագրիկոլի բնակավայրից գտնվում էր հինգ ստադիա՝ գրեթե մեկ վերստ հեռավորության վրա), իսկ հետո հյուրասիրություն էր կազմակերպում բոլոր հարազատների ու ծանոթների և բազմաթիվ աղքատների համար: Մի անգամ, եկավ Քրիստոսի սրբի հիշատակի օրը, Ագրիկն ասաց իր տասնվեցամյա որդի Վասիլիսին. «Գնա սուրբ Նիկողայոսի եկեղեցի, աղոթիր Աստծո մեծ սպասավորին և, լսելով իրիկնային, առավոտյան ժամերգություններն ու պատարագը, արի տուն. իսկ մենք մորդ հետ ամեն ինչ կպատրաստենք աղքատներին հյուրասիրելու համար»: Պատանին ուրախությամբ գնաց կատարելու հոր ցանկությունը: Առավոտյան ժամերգության ժամանակ հանկարծակի սուրբ Նիկողայոսի եկեղեցիներիսլեցին սարակիճոսները, բոլորին, ովքեր այնտեղ էին, գերի վերցրին, այդ թվում և Վասիլիսին՝ Ագրիկի որդուն, որին տարան Կրետե կղզի և այստեղ գերության տվեցին սարակիճոսների իշխան Ամիրային: Անսովոր գեղեցկության համար իշխան Ամիրան Վասիլիսին դարձրեց իր մատռվակը: Իմանալով որդու գերության մասին, վշտահար ծնողները տրվեցին անմխիթար տրտմության և ամբողջ երկու տարի անցկացրին որդու զոհվելու համար սգալով և նույնիսկ չէին տոնում սուրբ Նիկողայոսի հիշատակի օրը: «Ավելի լավ կլիներ, մեր սիրելի որդի,-դառն արցունքներ հեղելով, ասում էին նրանք,-եթե մենք քեզ տեսնեինք մահճում և ծանր հիվանդությամբ բռնված, քանի որ այդ ժամանակ զոհե կկարողանայինք թեկուզ մի քիչ թեթևացնել քո ցավը. նույնիսկ այդքան չէին տառապի մեր սիրտն ու հոգին, եթե դու հանդիպեիր մահվան, և ինքներս քեզ հողին հանձնեինք»: Տեսնելով ծնողների անմխիթար վիշտը, հարևաններն սկսեցին սփոփել նրանց, խորհուրդ տալով հույսը դնել բոլոր դժբախտությունների մեջ փութեռանդ հովանավոր սուրբ Նիկողայոսի վրա:

Ագրիկը, փոքր-ինչ հանգստանալով, ասաց կնոջը. «Ի՞նչ օգուտ ունենք լաց ու կականից: Ահա երեք տարի է տխրում ու տրտմում ենք, մոռանում ենք նույնիսկ Աստծո մեծ սպասավորին և չենք գնում նրա տոներին: Վաղը նրա հիշատակի օրն է: Արի նրա տաճար տանենք ձիթայուղ, խունկ ու մոմեր. աղոթենք նրան, գուցե նա մեզ մխիթարություն ուղարկի. գուցե վերադարձնի մեր զոհված որդուն, կամ, ծայրահեղ դեպքում, իմաց տա՝ ո՞րչ է, թե՛ մեռած»: Կինը լիովին հավանություն տվեց նրա մտադրությանը, և նրանք ուրախությամբ շտապեցին սուրբ Նիկողայոսի եկեղեցի, ուր, ինչպես հարկն է, հարգեցին նրա հիշատակը և, վերադառնալով տուն, ինչպես և նախկինում, հացկերույթ կազմակերպեցին և հրավիրեցին հարազատներին, ծանոթներին ու աղքատներին:

Հացկերույթի ժամանակ բակում հանկարծ հաչեցին շները: Ագրիկը ծառաներին ուղարկեց իմանալու, թե ինչու հաչեցին շները: Ծառաները, վերադառնալով, ասացին, թե բակում ոչինչ և ոչ ոք չկա: Հաչոցը, սակայն, շարունակվում և ուժեղանում էր: Ագրիկն ինքը դուրս եկավ տեսնելու և սկզբում վախեցավ, իր առջև տեսնելով սարակինոսյան հագուստով պատանուն՝ գինու թասը ձեռքին: Բայց, մոտենալով, ճանաչեց որդուն և ուրախությունից բացականչեց. «Մի՞թե դու ես, որդիս, թե՞ աչքերս ինձ խաբում են»: «Այո, ես եմ, հայրիկ,-պատասխանեց պատանին:-Բայց ինչպես հայտնվեցի այստեղ, չգիտեմ: Կարծես, հենց նոր սպասարկում էի սարակինոսյան իշխանին և հենց այս թասից գինի էի լցնում գավաթի մեջ: Եվ ահա մի ակնթարթում ինչ-որ մեկը ուժեղ բռնեց ձեռքս, թոցրեց մորիկի պես, դրեց ինձ այստեղ, և ես նրա մեջ ճանաչեցի սուրբ Նիկողայոսին»: Կարելի է պատկերացնել ծնողների անսահման ուրախությունն ու խորին երախտագիտությունը Աստծո սպասավորի հանդեպ, որ արդեն կորցրել էին որդու վերադարձի հույսը և կրկին գտել նրան ողջ և առողջ:

ՍԱՐԱՑԻՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԲԱՆՏԻՑ

Ծովափին գտնվում էր հունական Սպոլիտիս քաղաքը, որի դիմաց, նեղուցի մյուս կողմում, սարակինոսների քաղաքն էր: Մի անգամ մի հարուստ սարացին՝ Սպոլիտիս քաղաքից, ծովում զբոսնելիս, անսպասելիորեն բռնվում է հույների կողմից և նետվում բանտ, ուր շատ հանցագործներ կային: Բանտային կապանքների մեջ նա մնում է ողջ տարի և այստեղ հունարեն սովորում: Հաճախ լսելով, որ բանտային ընկերներն աղոթքով դիմում են սուրբ Նիկողայոսին, ցանկանում է իմանալ, թե ով է քրիստոնյաների կողմից կանչված սուրբ Նիկողայոսը: Բանտարկյալներից մեկը պատմում է մարդկային ցեղին արված սուրբ Նիկողայոսի մեծ բա-

րեգործությունների մասին և միաժամանակ տեղեկացնում քրիստոնեական հավատի հիմնական ճշմարտությունները: Անհավատ սարացինը խորապես ազդված էր քրիստոնյայի պատմությունից և, սպասելով գիշերվան, սրտի միամիտ աղոթքով դիմեց ճշմարիտ Աստծուն. «Տե՛ր, եթե Դու իսկապես իջել ես երկիր և մարմնավորվել մեր փրկության համար, ապա ինձ օգնության ուղարկիր Քո սպասավոր սուրբ Նիկողայոսին: Թող նա ազատի ինձ գերությունից, և ես ամբողջ ընտանիքով քրիստոնեություն կընդունեմ»: Այսպես աղոթելով, սարացինը քնեց և երագում տեսավ սուրբ Նիկողայոսին, որը ազատեց նրան կապանքներից և ասաց նրան. «Ազատում է քեզ Քրիստոս իմ միջոցով, Իր ծառայի. գնա, բայց չմոռանաս խոստումդ, այլապես քեզ վատ բան կպատահի»: Այս ասելով, սուրբն աներևութացավ: Սարացինն արթնացավ և, ի զարմանս իրեն, հայտնվեց տանը՝ իր անկողնում, ուր անտեսանելիորեն փոխադրվել էր Աստծո սպասավորի կամքով: Կնոջ և երեխաների հետ շնորհակալ եղավ Աստծուն իր անըմբռնելի փրկության համար և իր հետ պատահած հրաշքի պատմությամբ շատերին դարձրեց քրիստոնեական հավատի:

Հաջորդ գիշեր սուրբը կրկին հայտնվեց սարացինի երագում և ասաց նրան. «Անմիջապես նավակ նստիր, շտապիր հունական ափ և պատմիր, թե ինչպես ազատեցի քեզ բանտից: Հույները կարծում են, թե դու կաշառել ես պահակներին, և նրանց ուզում են մահվան դատապարտել: Քեզ համար չվախենաս. ես քեզ հետ եմ, և ոչ ոք քեզ չի դիպչի»: Սարացինը պատմեց երագը կնոջը, որն ամեն կերպ ջանաց ետ պահել նրան սրբի տված հրամանը կատարելուց: Բայց նրա բոլոր հորդորներին և արտասվաթոր թախանձանքներին նա հաստատակամորեն պատասխանեց. «Սուրբ Նիկողայոսը այնքան զորավոր է, որ ուրիշ անգամ ևս վտանգից կփրկի»: Նա նավակ նստեց իր մի քանի ծառաների հետ, որոնց չթույլատրեց անգամ զենք վերցնել, ընդհուպ մոտեցավ թշնամական քաղաքի պարիսպներին և մոտ վազած ժողովրդին բարձր ձայնով պատմեց իր հետ պատահած հրաշքի մասին: Ջուր էին հունական մակույկները հետապնդում նրան. նա բարեհաջող վերադարձավ տուն:

Շուտով դրանից հետո նա իր ողջ ընտանիքով ու ծառաներով ուղևորվեց Երուսաղեմ և այնտեղ բոլորի հետ միասին արժանացավ պատրիարքից մկրտվելուն:

ՍՈՒՐԲ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ ՍՐԻ ՀԱՐՎԱԾԻՑ

Քրիստափոր անունով միտիլենցի մի քահանա, մեծ համակրանք տածելով սուրբ Նիկողայոսի հանդեպ, ամեն տարի գնում էր Միրի՝ խոնարհվելու սուրբ Նիկողայոսի մյուռոնաբուխ մասունքների: Եվ օրինանքի համար մյուռոն վերցնելով, սովորաբար վերադառնում էր տուն: Մի անգամ Միրի գնալով 30 երկրպագուների հետ, նա գերի ընկավ արաբներին: Գերիներին տուն բերելով, արաբները նրանց բաժանեցին երեք մասի. մի մասին որոշեցին վաճառել, մյուսին՝ բանտարկել, իսկ երրորդներին՝ սպանել: Քրիստափոր քահանան դատապարտված էր սրով գլխատման: Նրան դժբախտ ուղեկիցների հետ արդեն տարել էին պատժավայր: Տեսնելով, թե ինչպես են կտրում ընկերների գլուխները, և սարսափելով իր հերթից, Քրիստափորը ողջ սրտով սկսեց աղոթել փութեռանդ պաշտպան սուրբ Նիկողայոսին: «Քրիստոսի սուրբ Նիկողայոս,-դիմեց նրան,-օգնիր ինձ՝ մեծ դժբախտության մեջ ընկածիս, փրկիր ինձ սուրսայր սրից, ազատիր անիմաստ մահից»: Սուրբ Նիկողայոսն անհապաղ երևաց նրան և ասաց. «Մի վախեցի՛ր, եղբայր, Քրիստոսի երեց. ես քեզ հետ եմ»: Ահա արդեն մոտեցավ դահիճը, Քրիստափորին կարգադրեց խոնարհել գլուխը և սուրը բարձրացրեց հարվածելու: Բայց սուրբ Նիկողայոսը, բարբարոսի ձեռքից խլելով սուրը, շարտեց հեռու: «Ո՞ւր է սուրը»,-հարցրեց զարմացած դահիճը Քրիստափորին: «Սուրբ Նիկողայոսը վերցրեց»,-պատասխանեց նա: Դահիճը գնաց և ուրիշ սուր բերեց, ցանկանալով կտրել Քրիստափորի գլուխը: Սուրբ Նիկողայոսը կրկին փրկեց երեցին և դահիճից խլեց սուրը: «Ո՞վ ես դու, որ այդպիսի կախարդություններ ես անում»,-հարցրեց գերուն անհաջողությունից բորբոքված դահիճը: «Ոչ, տե՛ր,-պատասխանեց նրան Քրիստափորը,-ես ոչ մի կախարդություն չգիտեմ, բայց սուրբ Նիկողայոսն է քեզնից վերցնում սուրը»: Դահիճը շուրջը նայեց և, ոչ ոքի չտեսնելով, առարկեց. «Չկա այստեղ այն մարդը, որի մասին դու ասում ես»,-և գնաց երրորդ սրի ետևից: Բայց սուրբ Նիկողայոսը երրորդ անգամ էլ խլեց նրա ձեռքից սուրը, երբ նա բարձրացրեց Քրիստափորի գլխին: Այդ ժամանակ սարսափով բռնված դահիճը հարցրեց քահանային. «Ասա ինձ, ո՞վ է այդ Նիկողայոսը, որի մասին ասում ես»: Քրիստափորը մանրամասն պատմեց Աստծո սպասավորի և այն մասին, թե ինչպես է նա հրաշքներ գործում: Լսելով դա, արաբը խոստովանեց, որ առաջ էլ էր լսել սուրբ Նիկողայոսի սրբազնության և մեծության մասին, և ավարտեց. «Այլևս չեմ ուզում նրան ընդդեմ որևէ բան անել»: Քրիստափորին և նրա երեք ուղեկիցներին, որոնց պատրաստվում էր մահվան դատապարտել նրանից հետո, ազատեց կապանքներից և նույնիսկ ճանապարհեց տուն, մրմնջալով. «Գնացեք խաղաղությամբ»: Սուրբ Նիկողայոսի օգնությամբ ազատվելով մահից, Քրիստափորն ու իր ուղեկիցները բարեհաջող վերադարձան տուն և բոլորի առջև փառաբանեցին իրենց ազատարարին:

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԸ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՆՈՒՄ Է ԾՈՎԻ ԽՈՐՔԻՑ

Լեոնտիոս կայսեր թագավորության օրոք Կոստանդնուպոլսում ապրում էր Թեոփանես անունով շատ բարեպաշտ մի մարդ, որն աչքի էր ընկնում ասպնջականությանը և աղքատասիրությանը: Մի անգամ նա երազում տեսնում է սուրբ Նիկողայոսին, որն ասում է նրան, որ նա երեք սրբապատկեր պատվիրի նկարել՝ Փրկչին, Աստվածամորը և հրաշագործ Նիկողայոսին, և երբ դրանք պատրաստ լինեն, ցույց տա պատրիարքին: Կատարելով Աստծո սուրբ սպասավորի հրամանը, Թեոփանեսն անմիջապես պատվիրեց ժամանակի նշանավոր սրբապատկերագիր Ագեյոսին այդ պատկերները և, երբ ստացավ դրանք, պատրիարքին իր ժողովականներով հրավիրեց պատվել դրանք փառաբանության աղոթքներով: Մտնելով սենյակ, ուր սրբապատկերներն էին, ու նախ դիմելով Փրկչի պատկերին, պատրիարքն ասաց. «Փա՛ռք Քեզ, մեր Աստված, Փրկիչ, որ ստեղծել ես բոլոր արարածներին: Հետո, նայելով Աստվածամոր պատկերին, ավելացրեց. «Նկարիչը լավ է նկարել և Անարատ Աստվածամոր պատկերը, որ մեզ համար ծնեց Մարդասեր Աստծուն»: Այնուհետև, տեսնելով սուրբ Նիկողայոսի պատկերը, դժգոհությանը ասաց. «Ինչի՞ համար է այստեղ Միրլիկիայի եպիսկոպոս Նիկողայոսի պատկերը: Նա ստորագրի (ցածր խավի) էր, և նրա պատկերը պատշած չէ դնել այս երկու սրբապատկերների կողքին»: Հակառակ տանտիրոջ ցանկության, պատրիարքը հրամայեց սուրբ Նիկողայոսի պատկերը դուրս հանել սենյակից, արգելեց նկարչին նկարել նրա սրբապատկերները և, օրհներգելով Փրկչին ու Աստվածամորը, կղերականների հետ նստեց ճաշերույթի: Հյուրասիրության ժամանակ Թեոփանեսը նկատեց, որ գինին գրեթե վերջացել է և, քանի որ արդեն ուշ էր և հնարավոր չէր որևէ տեղից ճարել, գնաց հեռավոր սենյակը, ուր սուրբ Նիկողայոսի պատկերն էր, որ պատրիարքի կամքով դուրս էր բերվել ընդունարանից: Թեոփանեսն սկսեց սրբի պատկերի առջև եռանդագին խնդրել, որ Աստծո սպասավորը շատացնի իր տան գինին: Աղոթքն ավարտելով, Թեոփանեսը դուրս եկավ այդ սենյակից և տեսավ թասերը, որոնց մեջ արդեն գինի չկար, հրաշքով լցված նոր, ավելի լավ գինով, որը պատրիարքին չափազանց համեղ թվաց:

Հաջորդ օրը պատրիարքը հրավիրված էր մոտակա Գերդալ կղզի՝ Ավետարան կարդալու մի մեծատոհմիկ մարդու աղջկա վրա, որը բռնված էր չար ոգով: Վերադարձին ուժեղ փոթորիկ բարձրացավ. ալիքներն ամեն վայրկյան սպառնում էին կուլ տալ նավը, և դրանցից մեկը, նավակողից թափանցելով ներս, պատրիարքին քաշեց ծովի խորքը: Խեղդվելով, նա հիշեց վերջերս գործած մեղքը Աստծո սպասավորի հանդեպ և բացականչեց. «Մեղք եմ գործել քո հանդեպ,

Եվ պատրիարքը հանկարծ հայտնվեց նավում իր տեղը նստած: Նրա վերադարձից զարմացած ուղեկիցները հարցրին նրան. «Այդ ինչպե՞ս, տե՛ր, ծովի խորքերից դու վերադարձար նավ»: Ուշքի եկած պատրիարքը պատմեց նրանց իր հրաշագործ ազատարարի մասին, և բոլորը փառաբանեցին Աստծուն ու Նրա սուրբ սպասավոր Նիկողայոսին: Վերադառնալով տուն, պատրիարքը կանչեց Թեոփանեսին, խնդրեց հրաշագործի ազնիվ սրբապատկերը և, օրհնելով, դրեց այն Սոֆիայի տաճարում: Շուտով նա մենաստան ու եկեղեցի կառուցեց ի պատիվ սուրբ Նիկողայոսի և այնտեղ տեղափոխեց նրա հրաշագործ սրբապատկերը:

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԸ ՓՐԿՈՒՄ Է ՋՐԱՍՈՒՅՁ ԼԻՆԵԼՈՒՑ

Դիմիտրի անունով մի բարեպաշտ մարդ, որ ապրում էր Կոստանդնուպոլսում, սովորություն ուներ ուխտի գնալ սուրբ Նիկողայոսի եկեղեցի, որը գտնվում էր Անֆիրիտե քաղաքում, Կոստանդնուպոլսից 10 ստադիա հեռավորության վրա: Մի անգամ, երբ նա գիշերով գնում էր այնտեղ մի քանի ընկերների հետ, հետն ունենալով մոմեր, յուղ, խունկ և ժամերգության համար անհրաժեշտ այլ բաներ, բարձրացավ ուժեղ փոթորիկ, որը շրջեց նրանց նավը: Ուժասպառ լինելով և սուզվելով անդունդ՝ մինչև ծովի հատակը, Դիմիտրին անընդհատ կանչում էր. «Սուրբ Նիկողայոս, օգնի՛ր ինձ»: Տնեցիներն ու հարևանները արթնացան այդ անսովոր կանչից և, մտածելով, թե գող է մտել սենյակ, ջահը ձեռքներին մտան սենյակ: Նրանք չափազանց զարմացան, փակ սենյակում գտնելով Դիմիտրիին, ամբողջովին թաց՝ գլխից, մորուքից ու հագուստից ծովաջուր էր կաթում: Միայն լիովին ուշքի գալուց հետո, Դիմիտրին պատմեց նրանց, թե ինչ էր պատահել իրենց հետ ծովում, և ում էր կանչում նա, սուզվելով ծովը: Բոլորը հասկացան, որ նրան

փրկել էր սուրբ Նիկողայոսը, և շնորհակալ եղան դժբախտությունների մեջ անհապաղ օգնողին:

Նույն ձևով սուրբ Նիկողայոսը փրկեց մի այլ կոստանդնուպոլսեցու, որը հավատարիմ էր Տեր Հիսուսին և սիրով պատվում էր Քրիստոսի սպասավորի հիշատակը: Այս մարդը, պատրաստվելով գործերով մեկնել ուրիշ երկիր, գնաց սուրբ հրաշագործի եկեղեցի, այնտեղ աղոթեց նրան և, նրանից օրհնանք խնդրելով, ճանապարհ ընկավ: Գիշերվա իննին քամի բարձրացավ, և նավաստիներն սկսեցին բարձրացնել առագաստները: Խոսակցություններից ու աղմուկից արթնանալով, այդ մարդը վեր կացավ և քայլեց նավով, բայց, մթան մեջ սայթաքելով, ընկավ ծովը: Մութ գիշերով ուժեղ քամու ժամանակ հնարավոր չէր նրան անհապաղ օգնություն ցույց տալ: Մարդկանցից օգնություն չակնկալելով և սուզվելով ծովի խորքը, մարդն սկսեց դիմել մեծ հրաշագործին. «Սուրբ Նիկողայոս, օգնի՛ր ինձ»: Եվ հանկարծ նա հայտնվեց սենյակի կենտրոնում, շարունակելով կարծել, թե ծովի անդունդում է: Միայն երբ հարևանները եկան ու բացատրեցին, թե որտեղ է նա, խեղդվողը հասկացավ, որ ինքը փրկվել է սուրբ Նիկողայոսի շնորհիվ, և շնորհակալ եղավ իր ազատարարին:

Ծեր ճգնավոր Սիմեոնը, որ կյանքն անցկացրել էր պահքի, առանձնության և աղոթքների մեջ և հռչակվել հրաշագործության շնորհով, մի արեղա ուներ՝ Նիկողայոս անունով. մի անգամ Սիմեոնը արեղային ուղարկեց հեռավոր Կատավալյան երկիրը: Ճանապարհն անցնում էր ծովով: Ցերեկը լավ եղանակ էր, և ճանապարհորդներն ուրախ նավարկում էին հանդարտ և լուսաճաճանչ ծովով: Գիշերը, ափից հեռանալով, նրանք շեղվեցին ուղիղ ճանապարհից: Ի դժբախտություն նրանց, փոթորիկ բարձրացավ: Ծովը մոլեգնեց, և ալիքները, մե՛րթ բարձրացնելով, մե՛րթ ցած նետելով նավը, քշեցին բաց ծով. թիակներն ընկան թիավարների ձեռքից, առագաստը պատռվեց: Կասկածելով իրենց փրկության վրա, հուսահատված թիավարները վախից ընկան նավի հատակին և սուզ ու շիվանով աղերսում էին ծովագնացների պաշտպանին. «Սուրբ Նիկողայոս, օգնի՛ր մեզ և փրկի՛ր դժբախտությունից»: Նիկողայոս արեղան բարձրացրեց գլուխը, որ ծովը տեսնի, և նավի մոտ տեսավ սուրբ Նիկողայոսին ճերմակ շուրջառով, որ քայլում էր ծովի վրայով, ինչպես ցամաքի: «Վե՛ր կաց, եղբայր,-ասաց սուրբը արեղային:-Եվ մի՛ ննջիր:-Այնուհետև մտնելով նավ, ավելացրեց.-Ուրախությամբ գնա քեզ հանձնարարված գործին, այսուհետև ես քեզ հետ եմ, որին դու հավատով դիմեցիր: Այժմ

խաղաղություն քեզ և օրհնություն»: Շուտով փոթորիկը հանդարտվեց. թիավարները, աշխուժացած սպասավորի խոսքերից, նորից վերցրին թիակները, և նրա աղոթքների օգնությամբ այն տարածությունը, որ սովորաբար անցնում էին երկու շաբաթում, հաղթահարեցին մեկ ժամում: Ուրախ նավորդները փառաբանեցին Աստծուն և Աստծու սպասավոր Նիկողայոսին, ասելով. «Հիրավի, հրաշագործ է Աստված Իր սրբերի հետ, իսրայելցիների Աստված»:

ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԸ ՀՐԱՇՔՈՎ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՎԱՃԱՌՎԱԾ ԳՈՐԳԸ

Կոստանդնուպոլսում Նիկողայոս անունով մի արհեստավոր էր ապրում, որը հատկապես պատվում էր սուրբ Նիկողայոս Աքանջելագործին և ամեն տարի տոնում էր նրա հիշատակի օրը: Այսպես նա հասավ խոր ծերության և, այլևս ուժ չունենալով աշխատելու, ընկավ աղքատության մեջ: Մոտենում էր Նիկողայոսի օրը, և ծերունին սկսեց խորհել, թե ինչպես տոնի այդ օրը, բայց ելք չէր գտնում: Տոնակատարության նախօրեին նա ասաց կնոջը. «Ահա, կին, մոտենում է մեր սիրելի հովանավոր սուրբ Նիկողայոսի տոնը, իսկ մենք ոչինչ չունենք այն նշելու»: «Գիտե՞ս, տեր իմ,-ասաց բարեպաշտ կինը,-երկար կյանք չի մնացել այս աշխարհում, երեխաներ չունենք, ում համար պահենք ժառանգությունը: Արի վաճառենք վերջին եղածը Աստծո սպասավորի և մեծ հրաշագործի համար: Ահա մեզ մնացել է մի գորգ. գնա վաճառիր այն և անհրաժեշտ ամեն բան գնիր վաղվա տոնակատարության համար»: Ծերունին լսեց կնոջը, վերցրեց գորգը և տարավ վաճառելու: Ճանապարհին, երբ նա անցնում էր հրապարակով, ուր կանգնած էր Կոնստանդինոս Մեծի սյունը, և արդեն անցել էր սուրբ Պլատոնի մենաստանը, նրան հանդիպեց աստվածակերպ մի վանական և հարցրեց նրան. «Ո՞ր ես գնում, սիրելի բարեկամ»: «Գնում եմ վաճառատուն՝ գորգը վաճառելու», -պատասխանեց ծեր արհեստավորը: «Լավ, բարեկամ,-պատասխանեց վանականը,-բայց ասա ինձ, ինչքա՞ն ես ուզում քո գորգի համար: Ես կուզենայի գնել այն»: «Սկզբում նրա համար վճարված է ութ ոսկեդրամ, իսկ հիմա կվերցնեն այնքան, ինչքան որ կտաս»: «Կվերցնե՞ս վեց ոսկեդրամ»: «Ուրախությամբ կվերցնեն», -պատասխանեց արհեստավորը: Վանականն անմիջապես տվեց նրան վեց ոսկեդրամ, վերցրեց գորգն ու գնաց: Վաճառատանը գտնվող մարդիկ շրջապատեցին ծեր արհեստավորին և հարցրին նրան. «Այդ ի՞նչ է, դու ինքդ քեզ հե՞տ ես խոսում: Հո՞ աչքիդ բան չի երևում»: Նրանք տեսնում և լսում էին միայն նրան, և չէին տեսել սրբին ու լսել նրա բառերը:

Այդ ընթացքում սուրբ Նիկողայոսը հայտնվեց ծերունու կնոջը և, վերադարձնելով նրան գորգը, ասաց. «Քո ամուսինը իմ հին բարեկամն է. այսօր նա հանդիպեց ինձ վաճառատանը և խնդրեց այս գորգը քեզ բերել»: Այս խոսքերի հետ սուրբն անհետացավ, ծեր կնոջը թողնելով վշտահար և վիրավորված ամուսնուց այն բանի համար, որ նա ավստսել է գորգը վաճառել:

Գորգի վաճառքից գոհ արհեստավորը տոնակատարության համար գնեց ամեն անհրաժեշտ բան և վերադարձավ տուն: Բայց կինը նրան հեղեղեց նախատինքներով. «Ես չեմ ուզում ապրել քեզ հետ, դու խաբել ես սուրբ Նիկողայոսին: Լավ է խոսք չտալ, քան դրժել տրված խոսքը: Ահա քո գորգը, իսկ ինձ այլևս չես տեսնի, քանի որ քո այժմյան խաբեությամբ դու մրոտեցիր քո ապրած ողջ ազնիվ կյանքը»:

Արհեստավորը զարմացավ, լսելով կնոջ նախատինքները և տանը կրկին տեսնելով վաճառված գորգը: Նա հարցրեց կնոջը, թե որտեղի՞ց հայտնվեց գորգը: Նա պատմեց, որ նրա գնալուց հետո մի շատ հարգելի վանական եկավ, տվեց գորգն ու շտապ հեռացավ: Լսելով այդ պատմությունը, արհեստավորը գլխի ընկավ, թե ով էր իրենից գորգ գնողը և ուրախությամբ լի սրտով բացականչեց. «Փա՛ռք Քեզ, Քրիստոս Աստված, որ հրաշքներ ես գործում Քո հրաշալի սպասավոր սուրբ Նիկողայոսի միջոցով»: Այնուհետև նա կնոջը պատմեց, թե ինչպես Աստծո սպասավորը պատկառելի վանականի կերպ առած հանդիպեց նրան ճանապարհին և գնեց գորգը, իսկ վերջում կնոջը ցույց տվեց տոնակատարության համար ուտելիքի պաշարներն ու գինին, նշխարքն ու մոմերը: Այդ ժամանակ ամուսինները միասին փառաբանեցին Աստծուն և Նրա սպասավոր մեծ հրաշագործին: Անհապաղ շտապեցին սուրբ Նիկողայոսի եկեղեցի և պատմեցին բոլորին, ովքեր հավաքվել էին ժամերգության, թե ինչպիսի հրաշալի օգնություն էին ստացել աղքատների փութեռանդ հովանավորից: Բոլոր լսողները նույնպես փառաբանեցին Աստծուն և սուրբ Նիկողայոսին: Երբ այս հրաշքի մասին հայտնեցին պատրիարքին, նա կարգադրեց մինչև կյանքի վերջը կերակրել ծեր արհեստավորին և նրա կնոջը Սոֆիայի տաճարի հասույթներից:

ԱՆՄԵՂ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոստանդնուպոլսում ապրում էր Եպիփանես անունով հարուստ և հրաշալի մի այր, որը բարձր պաշտոնյա էր Կոնստանդինոս թագավորի մոտ: Շատ ծառաներ ունենալով, նա ևս մեկին ցանկացավ գնել: Դեկտեմբերի 3-ին, շատ ոսկի վերցնելով, ձիով գնաց վաճառատեղի, ուր ռուս վաճառականները ստրուկներ էին

վաճառում: Սակայն նա չհասցրեց ստրուկ գնել և, վերադառնալով տուն, վերցրած ոսկին դրեց մի տեղ ու մոռացավ այդ մասին: Հաջորդ օրը սատանայի դրդմամբ նա սկսեց ոսկին պահանջել ծառայող մի պատանուց, որին, նրան թվում էր, թե նախօրեին տվել է ոսկին: Եպիփանեսը, զայրացած նրա ուրացումից, կշտամբեց նրան ստելու համար, և հետո, հավատ չընծայելով նրա երդումներին, հրամայեց նրան դաժանաբար ծեծել և շղթայակապ փակել տան սենյակներից մեկում, ասելով. «Կմտածեմ նրա մասին, երբ կգա սուրբ Նիկողայոսի տոնակատարության օրը»:

Ծեծված, շղթայված և բանտված ծառան սկսեց արտասվաթոր աղերսել Աստծուն, որ Նա ազատի իրեն անարգումներից: Արցունքն արցունքին, աղոթքն աղոթքին խառնելով, նա դիմեց սուրբ Նիկողայոսին հետևյալ խնդրանքով. «Ազնիվ հայր, սուրբ Նիկողայոս, ազատիր ինձ այս դժբախտությունից: Դու գիտես, որ մեղավոր չեմ այն բանում, ինչ իմ մասին ասում են: Վաղը քո տոնն է, իսկ ես այստեղ մեծ փորձանքի մեջ եմ...»: Աղոթքի պահին եկավ գիշերը, և նա դառնացած քուն մտավ: Երազում հայտնվեց հավատով սուրբ Նիկողայոսին դիմողներին մշտապես անհապաղ օգնության հասնողը: «Մի՛ տրտմիր,-ասաց սուրբը,- փրկում է քեզ Քրիստոս իմ միջոցով, Իր ծառայի»: Եվ տեղնուտեղը երկաթե շղթաներն ընկնում են բանտարկյալի ոտքերից, և նա, արթնանալով, փառաբանում է Աստծուն և սուրբ Նիկողայոսին: Նույն գիշեր սուրբ Նիկողայոսը հայտնվում է և նրա տիրոջ երազում ու ահեղասաստ ասում նրան. «Ինչո՞ւ ես դու անտեղի մեղադրում քո ծառային, Եպիփանես: Դու ինքդ ես մեղավոր. ինքդ թաքցրել ես ոսկին, իսկ տանջում ես քո հավատարիմ ծառային: Բայց քանի որ դու ոչ թե սրտի թելադրանքով, այլ թշնամու դրդմամբ ես այդպես վարվել, դրա համար էլ հայտնվել եմ քեզ, որ չցամաքի քո սերը Աստծո հանդեպ: Վեր կա՛ց և ազատ արձակիր քո անմեղ ծառային: Եթե չանես, ապա ինքդ կընկնես մեծ դժբախտության մեջ:-Եվ մատով ցույց տալով տեղը, ուր դրել էր ոսկին, ավելացրեց.-Վերցրու՛ քո ոսկին, ծառային էլ բաց թող»:

Արթնանալով, Եպիփանեսը ցույց տված տեղում անմիջապես փնտրեց-գտավ ոսկին, շնորհակալ եղավ Մարդասեր Տիրոջը և սուրբ Նիկողայոսին: Այնուհետև գնաց կալանված ծառայի մոտ, խոնարհաբար ներում խնդրեց կատարած մեղքի համար, ազատեց կալանքից և կարգադրեց տալ նրան ամեն անհրաժեշտ բան, իսկ ինքը մնացած գիշերն անցկացրեց աղոթքով: Լսելով առավոտյան ժամերգության կոչնակը, Եպիփանեսը, վերցնելով ոսկին, ծառայի հետ գնաց սուրբ Նիկողայոսի եկեղեցի, ուր ժամերգությունից հետո բոլոր աղոթարարներին պատմեց, թե ինչ է պատահել իր հետ և ինչպիսի ողորմածություն է ցույց տվել իրեն Աստված Իր սպասավորի միջոցով. հետո, դիմելով ծառային, ավելացրեց. «Ձավակս, ոչ թե ես, մեղավորս եմ, այլ Աստված, երկրի և երկնքի Արարիչը, և Նրա

սպասավոր Նիկողայոսն են ազատում քեզ աշխատանքից: Ների՛ր ինձ, անտեղի քեզ մեղադրողին»: Դրա հետ Եպիփանեսը չարաբաստինկ ոսկին բաժանեց երեք մասի, որից մեկը տվեց սուրբ Նիկողայոսի եկեղեցուն, մյուսը բաժանեց աղքատներին, իսկ երրորդը տվեց ազատագրված ստրուկին հետևյալ բառերով. «Վերցրու՛ այս ոսկին, զավա՛կս, որպեսզի այսօրվանից չծառայես ոչ մեկի, բացի սուրբ Նիկողայոսից. իսկ ես կհոգամ քո մարմնական կարիքների մասին»: Եվ բոլորն ուրախությամբ նշեցին սուրբ Նիկողայոսի տոնը:

ԱՆԿՅԱԼ ՊԱՏԱՆՈՒ ԱՊԱՔԻՆՈՒՄԸ

Նիկողայոս անունով պատանին տառապում էր դիվային ուժգին ցավերով. վիթխարի կրակն այրում էր ներսը, այնպես որ մարմնի բոլոր անդամները ցամաքել էին, իսկ մարմինը՝ թուլացել, և տառապյալը չէր կարող ոչ քայլել, ոչ կանգնել, ոչ ձգվել, այլ միայն, կռանալով՝ սողալ: Սկզբում բուժվում էր բժիշկների մոտ և ողջ ունեցվածքը ծախսեց դրա վրա ու ընկավ ծայր աղքատության մեջ: Մի անգամ, սուրբ Նիկողայոսի տոնի օրը, հիվանդ պատանին տեսավ մարդկանց, որոնք մոմներով գնում էին սուրբ Նիկողայոսի եկեղեցի պատարագի: Նրանց օրինակով, չնայած աղքատությանը, նա էլ մոմ գնեց և սողալով հասավ սուրբ Նիկողայոսի եկեղեցի: Երբ նա սողում էր, նրան հայտնվեց դժբախտությունների մեջ փութեռանդ օգնական սուրբ Նիկողայոսը և հարցրեց, թե ո՛վ է նա, որտեղի՞ց և ու՛ր է գնում, ի՞նչ դժբախտություն է իր հետ պատահել և ի՞նչ է ուզում: Տառապյալը, ճանապարհից հոգնած և վախով բռնված, նստեց և պատմեց իր դժբախտության մասին: «Եթե ուզում ես առողջ լինել,-ասաց նրան հայտնված վանականը,-ապա արի՛ իմ ետևից»: Առաջնորդելով դեպի իր եկեղեցի, սուրբն աներևութացավ:

Հիվանդը, իր առջև չտեսնելով առաջնորդին, վառեց մոմը, սողալով մտավ եկեղեցի և, հասնելով սրբի պատկերին, նրանով ճանաչեց վանականին, որն իրեն առաջնորդել էր եկեղեցի: Այդ ժամանակ բացականչեց. «Սուրբ Նիկողայոս, դու ինձ թանկ բան ասացիր. «Եթե ուզում ես առողջ լինել, ապա արի իմ ետևից»,-և ինքդ բերեցիր ինձ այստեղ: Դե ողորմա՛ ինձ և բժշկի՛ր: Դու պարտք ես ինձ, դե տո՛ւր ինձ քո պարտքը»:

Երկար էր աղոթում ուժասպառը: Վերջապես սկսեց թախանձագին խնդրել շրջապատողներին, որ բարձրացնեն իրեն և թույլ տան համբուրել հրաշագործ սրբապատկերը: Երբ նրա ցանկությունը կատարվեց, նա երկու ձեռքով ամուր գրկեց սրբապատկերը և համբուրեց հետևյալ խոսքերով. «Ձերն պաշտպան, ողորմա՛ ինձ»: Եվ ահա մարմնի կոնդացած անդամներն սկսեցին ճկվել, նա ուղղ-

վեց, իր ձեռքով երեք անգամ խաչակնքեց ողջ մարմինը և յուզով օծեց սրբի կանթեղից: Դիվային տառապանքներից ապաքինվելով, միանգամայն առողջ, նա կրկին գրկեց իր փութեռանդ օգնականի արդար պատկերը և կրկին համբուրեց նրան: Բոլոր վկաները փառաբանեցին Աստծուն և Նրա սուրբ սպասավոր Նիկողայոսին:

ՍԵՐԲ ԱՐՔԱՅԱԶՆ ՍՏԵՓԱՆԻ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ

Իլուտիներ, սերբական չորրորդ արքան Սիմեոն Մեծից հետո, որը Սերբական պետության հիմնադիրն էր, ուներ որդի՝ արքայազն Ստեփանը, որը դեռ պատանեկությունից աչքի էր ընկնում աստվածավախությամբ, հեզությամբ, խաղաղությամբ, բարեհամբուրությամբ և կարոտյալների հանդեպ կարեկցանքով: Մարդկային ցեղի թշնամին, որ միշտ ատում է բարեպաշտ մարդկանց, մտածեց կործանել արքայազնին: Դրա համար նա չարությամբ լցրեց արքայազնի խորթ մոր սիրտը նրա հանդեպ. սա զրպարտեց որդուն հոր առջև, վերջինիս հավատացնելով, թե Ստեփանը ուզում է զրկել նրան կյանքից և տիրանալ գահին: Չարախոսություններով կինը վերջապես հասավ իր նպատակին, մինչև թուլական Իլուտիներ, որ նախկինում ծնողական սրտի ողջ քնքշությամբ սիրում էր որդուն, այժմ սկսեց սարսափելի ատել նրան: Չնայած արքայազնը գիտեր խորթ մոր խարդավանքների մասին, չնայած, որ շատ իշխանազուհեներ համոզում էին փախչել և պատրաստական էին նրան աջակցել իրենց զորքերով, զենքով պաշտպանել վտանգից, բարեպաշտ արքայազնը սրտմտելով՝ մերժեց հանցավոր խորհուրդները և, հույսը դնելով Աստծո վրա, աղոթքով օգնություն էր փնտրում բոլոր դժբախտների և անմեղների պաշտպանից: Չար խորթ մայրը դժբախտ հորը մղեց սարսափելի չարագործության՝ կուրացնել ոչ մի մեղք չունեցող որդուն, որն էլ իրագործվեց սուրբ Նիկողայոսի եկեղեցու մոտ:

Երկար մնաց պառկած Ստեփանը, տառապելով ծանր տանջանքներից, բայց վերջապես ընկավ մոռացության մեջ, և այն ժամանակ նրա առջև կանգնեց սուրբ Նիկողայոսը, որը ձեռքում պահել էր տանջարարների կողմից Ստեփանի հանված աչքերը, ասաց նրան. «Մի՛ վախեցիր, Ստեփան, քո աչքերն իմ ձեռքում են»: Արթնանալով, Ստեփանն զգաց, որ աչքերի ցավն զգալիորեն մեղմվել է:

Դաժանասիրտ հայրը չսահմանափակվեց անմեղ որդու կուրացմամբ. նենգադավ կողակցի խորհրդով արքայազնին երեխաների հետ ուղարկեց իր աներոջ՝ Արևելյան կայսր Անդրոնիկոս Պալեոլոգի մոտ, խնդրելով նրան որդուն պահել խիստ հսկողության տակ: Կոստանդնուպոլսում Ստեփանը բանտարկվեց

Պանտոկրատորի (Ամենակալ) մենաստանում, որտեղ հեզաբարո և աստվածավախ արքայազնը բարեհաճության արժանացավ ոչ միայն արեղաների, այլև հենց կայսեր կողմից. լսելով արքայազնի ճգնավորական ու բարեպաշտական կյանքի մասին, Անդրոնիկոսը հարգանքով լցվեց նրա հանդեպ, հաճախ այցելում էր նրան և զրուցում հետը, խորհրդակցում պետական գործերի մասին: Հայրենիքից հեռու արքայազնը չդադարեց հոգալ Ուղղափառության ծաղկման մասին և, օգտվելով կայսեր համակրանքից, համոզեց նրան արմատախիլ անել հերետիկոսներին իր ուղղափառ պետությունից:

Հինգ տարի անցկացրեց արքայազնը մենաստանի խաղաղ առանձնության մեջ: Վեցերորդ տարին, սուրբ Նիկողայոսի տոնի օրը, նա մյուս արեղաների հետ եկավ եկեղեցի առավոտյան ժամերգության և, լսելով մեծ սրբի կյանքի ու հրաշագործությունների մասին, ննջեց և երագում տեսավ սուրբ Նիկողայոսին, որը հարցրեց նրան. «Հիշո՞ւմ ես, արդյոք, թե քեզ ինչ ասացի հինգ տարի առաջ»: Երբ Ստեփանն ասաց, թե արդեն մոռացել է, հրաշագործն ասաց նրան. «Այն ժամանակ ես ասացի, որ քո աչքերն իմ ձեռքում են: Այժմ ես ուղարկված եմ, որ դրանք քեզ վերադարձնեմ»: Այդ խոսքերով սուրբն օրհնեց Ստեփանին, ձեռքով հպվեց մթազնած աչքերին և ասաց. «Մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ ապաքինում է կույր ծնվածին, վերականգնում է քո տեսողությունը»: Երբ արքայազնը ուշքի եկավ, ապա, բացելով աչքերն ու տեսնելով իրեն շրջապատող առարկաները, երկար ժամանակ չգիտեր ինչ անել զարմանքից ու ուրախությունից և առաջին հերթին շնորհակալ եղավ Տիրոջը Նրա անասելի ողորմածության համար. բայց, վախենալով չարամիտ խորթ մորից, ոչ մեկի չասաց հրաշագործ ապաքինման մասին և շարունակեց աչքերը կապած պահել:

Այդ ընթացքում Անդրոնիկոս Պալեոլոգ կայսրին թշնամիների հետ պատերազմում օգնության կարիք եղավ, և դրա համար նա մարդ ուղարկեց փեսայի՝ սերբերի արքա Իլուտիհի ետևից: Ուղարկվածների թվում էր և այն մենաստանի վանահայրը, որտեղ ապրում էր կուրացած արքայազնը: Նրանից լսելով որդու, որի հետ այնպես դաժան էր վարվել, հրաշագործ բարերարի մասին, տանջվելով խղճի խայթից, հայրը վերադարձրեց անմեղորեն տառապած որդուն: Ծերացած հայրը զղջման արցունքն աչքերին խոնարհությամբ Ստեփանից ներում էր խնդրում անարդարության համար: Անչար արքայազնը լալիս էր ուրախությունից և, մխիթարելով ծեր հորը, ասում. «Դու ոչնչով մեղավոր չես իմ առջև, տիրակալ և ծնող իմ: Տերը քո միջոցով ցանկացավ պատժել ինձ իմ մեղքերի համար: Նրա Հայրական Նախախնամությունը մեզանից յուրաքանչյուրի համար կանխանշել է իր ուղին. քեզ՝ փրկել հոգին անխոնջ հոգատարությամբ քեզ վստահված տերության հանդեպ, իսկ ինձ՝ կուրության ու տառապանքների մեջ կյանքիս մեղքերը քավել համբերությամբ: Եվ այսպես, թո՛ղ օրհնյալ լինի Նրա սուրբ անունը»:

Հաշտվելով որդու ու իր խղճի հետ, Իլուտինը շուտով վախճանվեց: Գահի ժառանգորդը դարձավ արքայազն Ստեփանը, որը, հողին հանձնելով ծնողի մարմինը, արձակեց աչքերի կապը և, հուրախություն ու ի զարմանս համայն Սերբիայի, բուրդին տեղեկացրեց հրաշքով վերականգնված իր տեսողության մասին:

Ստեփանի թագավորությունը նշանավորվեց արդարադատությամբ ու ողորմածությամբ, հաղթական պատերազմներով և Ուղղափառության ամրապնդմամբ: Փոքր եղբայր Կոնստանդինը որոշեց հայրական գահը խլել եղբորից և կռվով հարձակվեց նրա վրա՝ առաջարկելով կանովին հրաժարվել գահից: Ստեփանը սկզբում երկար համոզում էր Կոնստանդինին ետ կանգնել արյունահեղությունից և երկու կողմերի համար էլ կործանարար պատերազմից, առաջարկելով նրան լինել իր առաջին խորհրդականը: Բայց վերջինս հրաժարվեց, և նրանց միջև արյունահեղ կռիվ եղավ, որի ժամանակ Կոնստանդինը զոհվեց, իսկ նրա զորքը պարտվեց ու անցավ Ստեփանի կողմը: Այսպիսով, ամուր հենվելով Տիրոջ օգնությանը, նա ետ մղեց բուլղարների անթիվ-անհամար բազմությունները, որ սպառնում էին Սերբիայի կործանմամբ ու ամայացմամբ:

Վերջապես եկավ բարեպաշտ արքայի վախճանի ժամանակը: Գիշերը նրան երևաց սուրբ Նիկողայոսը և ուրախ ծայնով ասաց. «Ստեփան, պատրաստվիր հեռանալ այս կյանքից»: Անկողնուց ելնելով, Սպեփանը ուրախության արցունքներն աչքերին շնորհակալ եղավ գթառատ Տիրոջը այդ ավետման համար: Բայց արդար մարդու խաղաղ ուրախությունը վրդովվեց ապստամբության մասին վշտալի լուրով, որը բարձրացրել էր նրա դեմ որդին, որին նույնպես Ստեփան էին կոչում, և նրա տխուր մահվան լուրով: Ջուր էր բարեհոգի ծնողը համոզում անազնիվ որդուն թողնել հանցավոր դիտավորությունը, խոստանալով նրա հետ կիսել արքայական իշխանությունը. չարագործ-որդին այլազգի բազմաքանակ զորքերով հարձակվեց հոր վրա, գահընկեց արեց և աքսորեց Ջվյաչին քաղաք, որտեղ և շուտով չարանենգ որդու հրամանով խեղդամահ արվեց:

Յոթ տարիների ընթացքում թագավոր-նահատակի անեղծ մասունքները հրաշագործության անսպառ աղբյուր էին. կույրերն ու կաղերը, տկարներն ու անկյալները, հավատով փութալով Ստեփանի շիրմին, ապաքինվում էին և շնորհակալ լինում Աստծուն, որ հրաշալիորեն փառաբանում էր Իր ծառաներին:

Շատ ուրիշ հրաշքներ էլ գործեց Արևելքում բուրդ դժբախտների հովանավոր, մեծ սքանչելագործ, սուրբ Նիկողայոսը: Եկեղեցական երգի խոսքերով՝ *ոչ ոք չի կարող կարդալ, եթե անգամ շատ լեզուներ իմանայի և խոսել կամենայի (Ակափ. կոմդ., 4)*:

Թե որքան տարածված էր սուրբ Նիկողայոսի հրաշագործությունների փառքը արդեն Քրիստոսի ծննդից 9-րդ դարում, այդ մասին վկայում է Նեապոլիտենի սարկավագ Յովհաննեսը (առաջնորդվելով պատրիարք Միֆոդիի երկերով, սուրբ Նիկողայոսի վարքը նա գրել է մոտ 860 թվականին): «Երկրի վրա, -գրում է նա,- չկա այնպիսի հեռավոր, այնպիսի խուլ, փակ և անայի մի տեղ, որտեղ չփայլեն առաքինագույն Նիկողայոս խոստովանողի խոսքերն ու հրաշագործությունները: Դրա վկայությունն են ոչ միայն Հունաստանի բոլոր անկյունները, որտեղից այն ծագեց, այլև Արևելքի բոլոր թագավորությունները: Այդ են վկայում նաև բարբարոսական տարբեր ցեղեր, որոնք խոսում են տարբեր լեզուներով և բնակեցրել են գրեթե ողջ Աֆրիկան, որոնք նրա հանդեպ ցուցաբերում են բարեպաշտ հավատավորի հնազանդություն: Իսկ Իտալիայի բնակիչները, թեպետ և մեր ժամանակներում են սկսել բարեպաշտորեն և հանդիսավորությամբ փառաբանել նրա գործերը, այնուամենայնիվ, հոժարությամբ սովորել են ուրախանալ նրա հրաշքներով, Աստծո օգնությամբ, ջանրադրաբար ի պատիվ նրա կառուցում են բազմաթիվ եկեղեցիներ և նրան ընդունում են որպես իրենց հովանավոր և աղոթարար, իսկ աշխարհի Արարչի առջև որպես ապագայի երաշխավոր»:

**ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ
ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ
ՓԱՌՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ**

Տեղյա՞կ ես, որ Ռուսի Աստված մեծ հրաշքներ է գործում, և ոչ միայն Ինքը, այլև Նրա սպասավորները: Երբ դժբախտություն է գալիս մեզնից նրանց վրա, ապա ասում են. մեր մեղքերի համար Աստված մեզ չի օգնում, քանի որ եթե Նա խրախուսեր մեր մեղքերը, ապա ոչ ոք չէր մնա («Հրաշք Պոլովչինայի մասին», «Սուրբ Նիկողայոսի հրաշքների և վարքի մասին» գրքի Նախաբանից):

**ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈՂՈՒՄ
ԸՆԴԴԵՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ**

Այժմ պատմենք այն մասին, թե սկսած քրիստոնեության առաջին դարերից, ինչպես է պահպանվել Միրլիկիայի սուրբ, հրաշագործ Նիկողայոսի հիշատակը Ռուսաստանում՝ հնագույն ուղղափառ ազգի մեջ: Դրանք ռուսական հնագույն ժամանակների փառապանծ դարերն էին, առաքելահավասար իշխան Վլադիմիրի, Յարոսլավ Իմաստունի և Վլադիմիր Մոնոմախի դարերը: Այս մեծ մարդիկ կա-

րողանում էին կառավարել Ռուսական հողը, խաղաղեցնել և պաշտպանել թշնամիներից: Բայց նրանցից հետո ծանր ժամանակներ սկսվեցին Ռուսիայի համար: Ռուսիան ինքն էր իրեն կործանում: Բաժան-բաժան եղավ այն՝ մեծ նախնի-իշխանների այդ կուռ ամբողջական ժառանգությունը, նրանց բազմաքանակ ժառանգորդ-իշխանների միջև, անհետացան նրա ամրակուռությունն ու կարգուկանոնը: Ռուսիո երկրում կառավարողների միջև սկսվեցին գժտություններն ու երկպառակությունները. երկիրը չունեւ տիրական ու փորձառու նավավար, և, քայքայվելով ներքին անհամաձայնություններից ու պատերազմներից, կորցնում էր ուժերը և ուժասպառվում ներքին տկարություններից: Օգտվելով դրանից, պոլովեցյան հորդաները հաճախ էին առավելություն ձեռք բերում ռուս իշխանների պառակտված ջոկատների հանդեպ: Անայացնող արշավանքները իշխաններին հիշեցնում էին Ռուսական երկրի հանդեպ իրենց դավաճանության կործանարարության մասին, սակայն, այնուամենայնիվ, նրանք շարունակում էին խռովությունները: Այդ ժամանակ Աստված Իր ահեղ պատիժն ուղարկեց ասիական ուրիշ բռնակալների՝ մոնղոլների ձեռքով, և իշխանների վրա քշեց անհամար ու վայրագ թաթարական հորդաներին: Երկար ժամանակ նրանք Ռուսիան պահեցին ստրկական լծի տակ և զցեցին աներևակայելի տանջանքների քուրան: «Մեր մեղքերի համար Աստված մեզ պատժում է թշնամիներով», -նման դեպքերում միշտ ասում էր Ռուսիան, և դժբախտությունից անմիջապես հետո դիմում դեպի իր ներսը, ստուգում իրեն և մաքրվում ներքին ախտերից: Եվ հիմա պետք էր ապաշխարել, համբերել և հուսալ:

Բարեպաշտ ավանդույթները ի խրատ մեզ և սուրբ Նիկողայոսի փառքի համար պատմում են ծանր տարիներին ռուս մարդկանց նկատմամբ Միրլիկիայի սրբի գթառատ հրաշքների մասին :

Առաջին հրաշքը եղավ դեռևս նրա թշնամիների՝ պոլովցիների դեմ Ռուսիայի կռիվների ժամանակ: Կիևում, Պոդոլի վրա, կա ոչ մեծ քարե եկեղեցի, որ կոչվում է Բարի (Դոբրի) Նիկողայոս: Ոմանք ասում են, որ այն այդպես է կոչվում, քանի որ նրան կից հնուց ի վեր գոյություն ունի ընդարձակ ասպնջատուն և պարզվում է անվճար հյուրընկալ ապաստան է հարյուրավոր, իսկ ամռանը գրեթե հազար ուխտավորների համար: Գուցե թե այդպես է: Բայց այդ անվանումը ուրիշ բացատրություն էլ ունի՝ կապված հնագույն ավանդույթների հետ: Ըստ կիևյան հնագույն ավանդազրույցների, այդ եկեղեցու տեղում տաճարը, «լեռան տակ, հոսքի վրա», գոյություն է ունեցել մինչև թաթարական արշավանքը: Այդ տաճարում էր, որ հեռավոր ժամանակներում բարեպաշտ մի կիևցի Դոբրիկ անունով, մեծ սեր ու հավատ ունենալով Նիկողայոս Սքանչելագործի հանդեպ, իր գերյալ-պոլովցուն բերեց սրբի պատկերի մոտ: Պոլովցին Դոբրիկի գերին էր արդեն մի ամբողջ տարի: Դոբրիկն այժմ նրան ազատություն էր առաջարկում, եթե նա փրկագին վճարեր:

Քանի որ պոլովցին ոչինչ չուներ և խոստացավ փրկագինն ուղարկել տուն վերադառնալուց հետո, ապա Դոբրինն այստեղ, սրբապատկերի առջև, առաջարկեց Քրիստոսի հովվապետ Նիկողայոսի երաշխավորությունը: Պոլովցին ուրախությամբ ընդունեց սրբի այդ երաշխավորությունը և այդ եկեղեցում երդվեց նրա պատկերի առջև, որ խոստացած ամեն բան կկատարի: Այդ ժամանակ Դոբրինը, հույսը դնելով սուրբ Նիկողայոսի վրա, գերուն ճանապարհի համար ապահովեց հագուստով, զենքով, նստեցրեց ձիուն և բաց թողեց խաղաղությամբ: Հրաժեշտ տալով, վերջին անգամ հիշեցրեց խոստման և երաշխավորի մասին, իսկ պոլովցին կրկին ասաց, որ ամեն ինչ կկատարի: Սակայն հեթանոսը դեռ եկեղեցում սրբի պատկերի մոտ որոշեց, որ ոչինչ չի անի, քանի որ չէր հավատում ռուսների Աստծուն և Նրա սրբերին: Նա հոգում ծիծաղում էր իր տիրոջ և սուրբ Նիկողայոսի վրա, ինքն իրեն մտածելով. «Այս ռուսը խելք չունի. ինձ համար երաշխավոր դարձրեց ինչ-որ Նիկողայոսի պատկեր... Ի՞նչ կարող է անել ինձ այդ Նիկողայոսը: Այժմ եկեղեցում ես նայում եմ նրան, իսկ քաղաքից դուրս գալով, ոչ նա ինձ կտեսնի, ոչ ես՝ իրեն: Ես նրան փրկագին չեմ բերի և չեմ վախենում նրա երաշխիքից»: Այս խոսքերով անհավատը գնաց իր Պոլովցյան երկիրը:

Իսկ սուրբն ի՞նչ արեց: Արդարացրե՞ց, արդյոք, իր հանդեպ ուղղափառի խոր հավատը: Շուտով, պոլովցու տուն վերադառնալուց հետո, սուրբ Նիկողայոսը հայտնվեց նրան և հիշեցրեց խոստումը: «Արդյոք ե՞ս չեմ երաշխիք տվել քեզ, - ասաց սուրբը, - ի՞նչ փրկագին ես բերելու: Ինչո՞ւ ես դանդաղում: Ասում եմ քեզ. գնա Ռուսիա և տուր փրկագինը, եթե չես ուզում, որ գլխիդ դժբախտություն բերեն»: Պոլովցին զարմացավ տեսիլքից, բայց մեծ նշանակություն չտվեց դրան, իսկ շուտով բոլորովին մոռացավ: Մի քանի օր հետո ձի նստեց և գնաց դաշտ: Ահա այդ ժամանակ սուրբը նրան երևաց երկրորդ անգամ: Այժմ Աստծո սպասավորը ձիուց վար գցեց նրան և ցնցեց, ահեղորեն ասելով. «Ես քեզ չպատվիրեցի՞ գնալ Ռուսիա և փրկագինը տալ աստվածասեր մարդուն: Իսկ դու մոռացել ես իմ խոսքերը: Կրկին ասում եմ քեզ. խղճա ինքդ քեզ, տուր փրկագինը. եթե նորից մոռանաս, կտեսնես, թե ինչ կանեն քեզ»: Կատարվածից և հրաշագործի այդ սպառնալիքից վախեցած պոլովցին տուն վերադարձավ արդեն փրկագինն ուղարկելու հաստատ որոշմամբ. բայց իր վատաբարո կյանքի համաձայն շուտով կրկին դադարեց մտածել խոստման մասին, նորից որոշելով, որ դա անցյալ է, և այլևս իրեն ոչինչ չի լինի:

Մի անգամ ինչ-որ առիթով հավաքվել էին պոլովցյան շատ իշխաններ: Նրանց հավաքին եկել էր և այդ պոլովցին: Եվ ահա այստեղ, երբ նա իր ջոկատի մեջ ձիու վրա էր, բոլորի աչքի առջև, ի զարմանս ամենքի, հանկարծ ինչ-որ աներևույթ ուժ ցած նետեց նրան ձիուց և սկսեց անասելիորեն կուչուծի՞ գանել: «Չհրամայեցի՞ քեզ, - կրկին վախեցրեց հրաշագործը անհավատին, - փրկագինը

տանել, որ քեզ համար վատ չլինի: Այն քրիստոնյան ջերմ հավատով դիմեց ինձ և ողջ հույսը կապեց ինձ հետ, իսկ դու, անմիտ բարբարոս, գոռոզացար և չվախեցա՞ր Աստծո դատաստանից»: Սարսափելի էր տեսնել պոլովցու տանջանքները. կան գլխին էր խփում, կան գետնից բարձրացնում և գետնով էր տալիս, կան գլուխն էր մոտեցնում ոտքերին, ու դրա հետ մեկտեղ աներևույթ, կարծես փայտերով, հարվածում էր նրան Աստծո զորությունը: Նրան շրջապատողները սարսափից փախան, և նա մնաց մենակ, անշունչ, մինչև կատարվածին տեղեկացած հարազատները տուն տարան: Երկար ժամանակ դրանից հետո նա չկարողացավ դուրս գալ անկողնուց և ի վիճակի չէր բառ իսկ ասել: Վերջապես ասես քնից արթնացավ և կազդուրված զգաց իրեն: Այդ ժամանակ էլ հարազատներին կարգով պատմեց այն ամենն, ինչ պատահել էր իր հետ. երաշխիքի, հրաշագործի հայտնության և պատժի մասին: Հարազատները սարսափեցին. նրանք այդ մասին ոչինչ չգիտեին և այժմ զայրույթով պատասխանեցին նրան. «Ուրիշ էլ ո՞վ կարող է այդքան խելացնոր լինել, ինչպես դու: Տեսար առաջին և երկրորդ հայտնվելը և չվախեցա՞ր: Անմտորեն չէ, որ դու տրվել ես երաշխիքի ռուսների Աստծուն»: «Ոչ թե հենց Աստծուն, այլ սուրբ Նիկողայոսին», - նկատեց պոլովցին: «Իսկ դա ո՞ւմ է, եթե ոչ Աստծուն, - պատասխանեցին հարազատները: - Թե՞ դու չգիտես, որ ռուսների Աստված ոչ միայն Ինքն է հրաշքեր գործում, այլև Իր սրբերի միջոցով է անում: Երբ ռուսներին մեր պատճառով ինչ-որ դժբախտություն է պատահում, ապա նրանք ասում են. «Մեր մեղքերի համար Աստված մեզ չի օգնում. իսկ եթե Նա օգներ, ապա նրանցից ոչ մեկը չէր մնա»: Եվ դու, անմիտ, չվախեցար կենդանի Աստծուց, ինչի՞ հասար դրանով: Եթե դու հիմա չգնաս Ռուսաստան և չտաս քո փրկագինը, ապա հեռացիր մեզանից և կործանվիր մենակ, որպեսզի մենք էլ քեզ հետ չպատժվենք»: Բայց հիմա հարկ չկար ստիպել պոլովցուն: Ոչ մի վայրկյան չհապաղելով, կարգադրեց, բացի տիրոջ պարտքից, իր վիթխարի հոտից ևս մի մաս առանձնացնել սուրբ Նիկողայոսին նվիրելու համար և փրկագնով ու նվերներով ուղևորվեց Կիև: Տեղ հասնելով, պոլովցին նախ և առաջ գնաց եկեղեցի, ուր երաշխիք էր տրվել սուրբ Նիկողայոսին: Նրանից հեռու իջավ ձիուց և գնաց ոտքով, առջևից քշելով հոտը և աղոթելով հրաշագործին: «Մի՛ տանջիր ինձ, տեր իմ, - ասում էր սրբին, - ահա իմ խոստացած ողջ փրկագինը, իսկ սա էլ քեզ նվեր. ուզում էի խաբել, բայց ավելի վատ բան պատահեց ինձ»: Այնուհետև գնաց նախկին տիրոջ մոտ և տվեց փրկագինը, միաժամանակ պատմելով ամեն ինչ, ինչ իր հետ արել էր սուրբը: Կարելի՞ է, արդյոք, պատկերացնել այն սուրբ երկյուղը, որ պատեց կիևցու հոգուն բարբարոսի պատմությունից: Դոբրիկն շտապեց հրաշագործի եկեղեցի և նրա պատկերի առջև արցունքն աչքերին փառաբանեց ու շնորհակալ եղավ նրան: Այնուհետև քաղաքում բոլորին հայտնեց սրբի հրաշքի մասին, շնորհակալական և փառաբանման տոն կազմակերպեց սրբին, և բոլոր ռուս մար-

դիկ փառաբանեցին Աստծուն, Իր սրբերի մեջ հրաշալիին: Այստեղից էլ, ըստ ավանդության, Դոբրիկի հիշատակին կամ նրա նկատմամբ սրբի բարության հիշատակին, հրաշագործի տաճարը՝ «Լեռան տակ, հոսքի վրա», կոչվում է Բարի Նիկողայոսի: Մինչ այժմ էլ այդ եկեղեցուն գոյություն ունի հրաշագործի հին սրբապատկերը, որի առջև, ասում են, պոլովցին երդվել է Դոբրիկին: Ջարդանախշված արծաթե ոսկեզօծ մակադրվագով, այն երկու արշին բարձրություն ունի և մեկ արշին տասներկու վերշոկ լայնություն և այժմ տեղավորված է տաճարի հյուսիսային որմի քանդակագարդ ոսկեզօծ տապանակում, պատուհանի մոտ:

Ըստ մեկ այլ ավանդության, հրաշագործի իսկական, հնագույն սրբապատկերը ունի հետևյալ մակագրությունը. «Այս սրբապատկերի առջև Կիևում երդվել է պոլովցին գերությունից ազատվելու համար փրկագին տալու մասին». պահպանվում է Նովոսիլսկյան գավառի Տուլայի նահանգի Սուրբ-Յոզի կոչվող արական մենաստանում, Սուրբ-Յոզի եկեղեցում: Այդ մենաստանը գոյություն ունի XVII դարի սկզբից, գուցե և՛ XVI դարի վերջից, իսկ Սուրբ Յոզի տաճարը՝ 1771 թվականից: Ըստ ավանդության, սրբապատկերը մենաստանին նվիրել է Ալեքսեյ Միխայլովիչ ցարը: Բայց պարզ չէ, թե ինչ ծագում ունի այդ ավանդույթը, ինչպե՛ս, ե՛րբ և ո՛ւմ միջոցով է Կիևից այդ փառավոր պատկերը հասել ցարին, որ այժմ այստեղ բոլորի կողմից այնքան մեծարվում է որպես հրաշագործ և ամեն տարի այն տանում են Նովոսիլսկյան գավառի տարբեր գյուղեր:

Այսպիսին է սրբի հովանավորության հնագույն հրաշքը ռուս մարդկանց նկատմամբ իրենց թշնամիների հետ բախումներում: Այն ցույց է տալիս, որ Աստծո աջը և Աստծո սպասավորների օգնությունը կփրկեր Ռուսիային իր թշնամիներից, եթե բոլոր ռուսներն այնպիսի հավատ ունենային Տիրոջ և Նրա սրբերի հովանավորության հանդեպ, ինչպես Դոբրիկը, ու եթե նրանք էլ այնքան բարեպաշտ և այնքան գթառատ լինեին միմյանց հանդեպ, ինչպես այդ կիևցին իր թշնամի պոլովցու հանդեպ: Սակայն պարզ է, որ Ռուսիայում այլևս անկեղծ բարեպաշտություն չկա, քանի որ բռնությունը, խարդավանքը, եղբայրասպանությունն ավելի ու ավելի էին ուժեղանում իշխանների և բնակչության տարբեր շերտերի միջև: Եվ առաջին որոտը ճայթեց մոռացկոտ մեղավորների գլխին՝ Կալկա գետի վրա կործանարար մարտում, որտեղ բզկտված ռուսական ջոկատները գրեթե բոլորն ընկան իրենց իշխանների հետ թաթարների դեմ առաջին մարտում: Քիչ ժամանակ անցավ. անդորր էր տիրում, ինչպես փոթորկից առաջ, ճիշտ և ճիշտ ապաշխարության ժամ էր, բայց Ռուսիան սարսափից չկարկանեց այդ խաղաղության ժամանակ, չապաշխարեց, և ներխուժեց Բատայն իր վայրագ գնդերով, ու ռուսական հողը մինչև վերջ խմեց տառապանքների բաժակը:

Երբեք Ռուսական հողն ու ռուս ժողովուրդն այդքան սարսափներ, բռնություններ ու տառապանքներ չէր զգացել և չէր ենթարկվել այդքան մեծ կողոպուտ-

ների, անայացման ու ստրկության, ինչքան այդ վայրի ու դաժան ասիացիների արշավանքների և մոնղոլ բռնակալ-խաների տիրապետության ժամանակ: Որպեսզի ռուս ժողովրդի դժբախտությունների այդ բաժակը վերջնականապես չլցվեր և չհասցներ նրան հիասթափության ու կործանման, Տիրոջն հաճո էր այդ ընթացքում նոր սփոփանք պատրաստել Ռուսիայի համար այդ նույն սրբի կողմից, բոլոր դժբախտությունների ժամանակ փութեռանդ հասնողից, հրաշագործ Նիկողայոսից: Եվ ահա սպասավորի կամքով 1225 թվականին կորսունցի երեց Եվստափիոսը Ռյազանի մարզի Ջարայսկ քաղաք է բերում սրբի պատկերը:

Վայրագ գիշատիչների չարագործություններից սարսափած ուղղափառները անօրինակ հավատով ու ջանադրությամբ դիմեցին սուրբ Նիկողայոսին և սրտակտոր ընկան նրա հրաշագործ պատկերի առջև, թեթևություն ու սփոփանք փնտրելով սրբին ուղղված աղոթքներում: «Եվ մեծ ներում եղավ, և ապաքինվեցին (շատերը) սուրբ Նիկողայոս Սքանչելագործի կողմից», - տեղեկացնում է ռյազանյան հին գրությունը Բատայի արշավանքների բերած դժբախտությունների մասին. ի պատասխան ռուս ժողովրդի թառանջանքների, ստորջանքների ու աղոթքների, մեծ հրաշագործը Աստծո ներման ու գթառատության շատ նշաններ ցույց տվեց նրան իր պատկերով հրաշագործ բուժման միջոցով, որով և շատ վշտակյացների սփոփեց ու սրտապնդեց:

Այդ հրաշագործ պատկերի ողջ պատմությունը տրված է բացառիկ հին ավանդագրույցում: Վերնագրերի ու բովանդակության ոչ մեծ տարբերությամբ այդ ավանդագրույցը մեզ է հասել շատ ձեռագրերում: Ո՞վ է այն կազմել և որտեղի՞ց է փոխառվել գրիչների կողմից, անհայտ է: Ամեն դեպքում, այն շատ հին է ու, թեև կազմված է, անկասկած, ավելի ուշ փոխանցված իրադարձություններից, ավանդությունը պարունակում է առավել հին, ժամանակակից կամ շատ մոտ իրադարձություններ, քանի որ դրանց շատ հետքեր Ջարայսկում պահպանվել են մինչ օրս: Ահա թե ինչ է պատմում մեզ այդ ավանդագրույցը:

Առաջներում, մինչև 1225 թվականը, սուրբ Նիկողայոս Սքանչելագործի այդ պատկերը հույների սեփականությունն էր և գտնվում էր Կորսուն քաղաքում...

1225 թվականի հուլիսի 29-ին, Կալինինիկ նահատակի հիշատակի օրը, մեծ իշխան Գեորգի Իգորի Ռյազանսկու օրոք, այդ հրաշագործ պատկերը սուրբ առաքյալ Ջակոբի եկեղեցու երեց Եվստափիոսի միջոցով Կորսուն քաղաքից բերվեց Ռուսիայի երկիր, Ռյազանի տարածք, բարեպաշտ իշխան Ֆեոդոր Գեորգիի Ռյազանսկուն պատկանող մարզ՝ հրաշքով լի հետևյալ հանգամանքներում: 1224 թվականին Եվստափիոսի երազում տեսիլքով հայտնվում է հովվապետ Նիկողայոսը և պատվիրում նրան իր հրաշագործ պատկերը վերցնել Կորսունից և դրա հետ գնալ Ռուսիայի երկիր, Ռյազանի մարզ, «քանի որ, -ասաց սուրբը,-ին այս պատկերով ուզում են այնտեղ լինել, և հրաշքեր գործել, և փառավորել այդ վայ-

րը»: Սուրբը Եվստափիոսին պատվիրեց տանել և կնոջը՝ Թեոդոսիային, Եվստափիոս որդու հետ: Երկար զմայլվեց այդ հրաշք տեսիլքից Եվստափիոսը, արթնանալով, սակայն, մոռացավ այն: Քիչ ժամանակ անց կրկին երևաց սուրբը և նույնը ասաց նրան: Եվստափիոսը մեծ սարսափով բռնվեց և սկսեց խորհրդածել, մտովի դիմելով սպասավորին. «Ինչպես է նա, մեծ սուրբը, պատվիրում իրեն գնալ, երբ ինքը բոլորովին չգիտի ճանապարհը և երբեք չի լսել Ռյազանի երկրի և այն մասին, թե որ կողմում է այն գտնվում. արևելքում, արդյոք, արևմուտքում, հյուսիսում, թե՞ հարավում»: Եվ կրկին մոռացավ Եվստափիոսը հրաշագործի հրամանը: Երրորդ անգամ հայտնվեց երեցին հրաշագործը և կարգադրեց անհապաղ գնալ Ռյազանի երկիր դեպի արևելք, խոստանալով ցույց տալ ճանապարհը: Տագնապով արթնացավ այդ տեսիլքից Եվստափիոսը, չհասկանալով. «Տեսնե՞ս ինչ կլինի»: Այնուհետև սկսեց մտածել և տխրել առ այն, թե ինչպես բաժանվի հայրենիքից, հայրենի քաղաքից, հիասքանչ Կորսունից, և գնա հեռավոր ու անհայտ երկիր, և կրկին չցանկացավ գնալ: Այդ ժամանակ նրան գլխացավ բռնեց, որից կուրացավ, կարծես աչքերը փակեց եղջերաթեփը: Միայն այժմ Եվստափիոսն ընկավ հրաշագործի պատկերի առջև արցունքախառն աղոթքով ու ապաշավանքով: «Այժմ, ինչպես ուզում ես, այնպես էլ թող լինի,-ասաց Եվստափիոսը,-այլևս զանց չեմ առնի քո հրամանները»: Այդ խոստումից հետո միանգամից առողջացավ և սկսեց տեսնել, ինչպես միշտ:

Որոշելով իսկույն մեկնել Ռյազանի երկիր, որ ցույց էր տվել հրաշագործը, Եվստափիոսը սկզբում Ռյազանի ճանապարհն ընտրեց դեպի արևելք՝ անհավատ պոլովցիների երկրի միջով: «Աստված և մեծ հրաշագործ Նիկողայոսը ճանապարհորդության ընթացքում կպահպանեն ինձ թշնամիներից», -խորհրդածում էր ինքնիրեն: Սակայն սուրբը կրկին հայտնվեց նրան և պատվիրեց չգնալ այդ ճանապարհով, այլ ուղղվել դեպի Դնեպրի գետաբերան, այնտեղից՝ Պոնտոսի ծով (որը կոչվում է Ռուսական, հետո՝ Սև) և Վարյագի ծով (Բալթիկ), դեպի Գերմանական մարզերը. դրանց միջով ցամաքային ճանապարհով դեպի մեծ Ռուսիա՝ մինչև Մեծ Նովգորոդ և արդեն այստեղից մինչև Ռյազանի երկիր: Ոգևորված այս տեսիլքով, երեցն ակնածանքով վերցրեց սրբի պատկերը և Թեոդոսիա կնոջ ու Եվստափիոս որդու ու կղերականներից մեկի հետ թողեց Կորսունը: Բարեհաջող հասավ Դնեպրի գետաբերան, այնտեղից մինչև Պոնտական ծով և այստեղ նստեց նավ ու Պոնտական ծովով լողաց Վարյագի ծով, Վարյագի ծովից էլ՝ Գերմանական երկիր: Փոքր-ինչ մնալով այստեղ, ցամաքային ճանապարհով Գերմանական երկրից, Աստծո կամքով, Եվստափիոս երեցը վերջապես հասավ Ռուսական երկիր, Մեծ Նովգորոդ, մեծ իշխան Վսևոլոդի որդի Յարոսլավի և նրա որդի բարեպաշտ Ալեքսանդր Նևսկու օրոք: Այդ ճանապարհորդության ընթացքում սրբի պատկերն ամենուրեք բազմաթիվ մեծ հրաշքներ գործեց: Ընդ որում, այստեղ, Մեծ Նովգորոդում,

Աստծո հրաշագործը հետևյալ առիթով նոր հրաշք գործեց հենց Եվստափիոսի ընտանիքի վրա:

Նրա Թեոդոսիա կնոջը այնքան դուր եկավ Մեծ Նովգորոդը, որ այլևս չցանկացավ գնալ ամուսնու հետ, մտածեց ընդմիշտ մնալ այստեղ և թաքնվեց ամուսնուց: Բայց հրաշագործը դաժանորեն պատժեց Թեոդոսիային: Նրա անդամները լիովին թուլացան, և, բոլորին անծանոթ, նա երկար ժամանակ պառկած էր օտար մարդկանց մեջ որպես մեռյալ, մինչև ինչ-որ մեկը նրա ամուսնուն չասաց, թե որտեղ է նա և ինչ է պատահել: Եվստափիոսն արցունքախառն աղոթքով դիմեց սրբի հրաշագործ պատկերին, և հրաշագործն ապաքինում ուղարկեց Թեոդոսիային, նորից առողջացավ նա, ասես երբեք էլ չէր հիվանդացել: Դրանից հետո արդեն առանց որևէ դժվարության Եվստափիոսը շարունակեց ճանապարհը Ռյազանի երկիր և շուտով տեղ հասավ:

Կրկին սկսեց Եվստափիոսը միտք անել. «Ահա Ռյազանի երկիրը: Ես որտե՞ղ հանգիստ գտնեմ և ո՞ւր դնեմ գլուխս: Չէ՞ որ ինձ հետ են կինս ու որդիս ու կղերը, իսկ երկիրն այս օտար է ինձ և մարդիկ՝ անծանոթ»: Մոռացավ սրբի փառավոր պատկերի նախկին շատ բարեգործություններ. բայց մեծ սպասավորը չմոռացավ նրա մասին: Այդ նույն ժամանակ հրաշագործը հայտնվեց մեծ իշխան Ֆյոդոր Գեորգիի Ռյազանսկու երազում և տեղեկացրեց Կորսունից իր երկիր փառավոր պատկերի ժամանման մասին: «Գնա՛, իշխան՝, -ասում է նրան սուրբը, - Կորսունի իմ հրաշագործ պատկերին ընդառաջ: Ես ուզում եմ այստեղ լինել իմ այս պատկերով, և հրաշքներ գործել, և փառավորել այս վայրը: Իսկ քո մասին, իշխան, կաղոթեմ ամենաողորմած և մարդասեր մեր Քրիստոս Աստծուն, որպեսզի Նա քեզ, և քո կնոջը, և քո որդուն անթառամ պսակներ պարգևի Իր Երկնային Թագավորությունում»: Այս խոսքերից իշխան Ֆյոդորն արթնացավ. նա երկյուղած և սարսափած էր տեսիլքից, բայց այդ մասին ոչ ոքի ոչինչ չասաց: Հետո արդեն մտածեց. «Իբր ի՞նչ ասաց Նիկողայոս մեծ սուրբը: Որ կաղոթի ամենաողորմած և մարդասեր Աստծուն այն մասին, որ Նա Իր Թագավորությունում ինձ, ինչպես և իմ կնոջն ու որդուն պսակ կպարգևի, իսկ ես դեռ ամուսնացած էլ չեմ, և որդի էլ չունեմ...»

Սակայն մեծ իշխանն անսաց սրբի հրամանին և սուրբ ժողովականների հետ քաղաքից դուրս եկավ հրաշագործ պատկերին ընդառաջ: Իսկապես, դեռ հեռվից ճանապարհին տեսավ հրաշագործ սրբապատկերը Եվստափիոս երեցի ձեռքին: Այն ճառագում էր անասելի լույսով և փայլում, ինչպես արևի շողը: Մեծ ակնածանքով և ուրախությամբ իշխանն ընդունեց պատկերը Եվստափիոսից և հանդիսավորությամբ բերեց քաղաք, որն այն ժամանակ կոչվում էր Կրասնի: Միանգամից շատ հրաշքներ ու ապաքինումներ եղան հիանալի պատկերից:

Դրանից անմիջապես հետո բարեպաշտ իշխան Ֆյոդորը սուրհանդակ է ուղարկում Ռյազան՝ հորը, Իգորի որդի մեծ իշխան Գեորգիին, գրավոր վկայելով

հրաշալի պատկերի ժամանան մասին: Այդ ժամանակ մեծ իշխանն իր եպիսկոպոս Եփրոսի Սվյատագորցու հետ նույնպես գալիս է քաղաք Կրասնի և ուրախության արցունքներով ու խանդաղատանքով ծնկի իջնում պատկերի առջև: Լսելով հիասքանչ հրաշքների մասին, Իգորի որդի մեծ իշխան Գեորգին պատվիրում է Կրասնի քաղաքում տաճար կառուցել ի պատիվ սուրբ Նիկողայոսի և, երբ շուտով տաճարը պատրաստ է լինում և եպիսկոպոս Եփրոսին օրհնում է այն, այստեղ և մեծ ակնածանքով դնում է Կորսունի փառավոր սրբի պատկերը:

Սրանից անմիջապես հետո բարեպաշտ իշխան Գեորգիի որդի Ֆյոդորը միություն կազմեց օրինական ամուսնությամբ՝ ցարական տոհմից կին ընտրելով գեղեցիկ և բարեպաշտ Եպրաքսիային: Եվ նա նրան որդի ծնեց, և նրան տվեցին Յովհաննես անունը՝ ի պատիվ ծոմապահ Յովհաննեսի: Այսպես կատարվեց մեծ սուրբ Նիկողայոս Սքանչելագործի մի գուշակությունը, և այսպես է վերջանում հրաշագործ պատկերի մասին հին ավանդազրույցի առաջին մասը:

Երկրորդ մասում նկարագրվում է հրաշագործի գուշակության երկրորդ մասի իրականացումը Գեորգիի որդի բարեպաշտ իշխան Ֆյոդորի մասին սրբի պատկերի հետ հանդիպումից հետո և նրա կնոջ ու որդու ճակատագրի մասին: Ըստ պատմիչի, դա տեղի ունեցավ Բատայի առաջին արշավանքի ժամանակ և հետևյալ կերպ:

6745(1237)-ի ամռանը, 12-րդ տարում Կորսունից հրաշագործի պատկերի գալուց սկսած, Աստծո թողտվությամբ, մեր մեղքերի պատճառով, անաստված թագավոր Բատայը եկավ Ռուսական երկիր բազմաքանակ թաթարական զորքերով, կանգնեց Վորոնեժ գետի վրա և անպատկառ դեսպաններ ուղարկեց Ռյազան՝ Ռյազանի մեծ իշխան Իգորի որդի Գեորգիին, տասանորդ պահանջելով ամեն ինչից՝ իշխաններից, մարդկանցից և ձիերից: Սարսափից մեծ իշխանը նվերներով և մեծամեծ թախանձանքներով Բատայի մոտ ուղարկեց իր որդի Ֆյոդորին և այլ իշխանների, որ Բատայը չգրավի Ռյազանի հողը: Խարդախ ու դաժանասիրտ անաստված Բատայն էլ, ընդունելով նվերները, լցվեց նենգ գոռոզամտությամբ Ռյազանի հողը չգրավելու խնդրանքից և սկսեց ծաղրել Ռյազանի իշխաններին և անարգելու համար նրանցից պահանջել նրանց քույրերին ու աղջիկներին: Ռյազանցի ազնվատոհմիկ մի դավաճանից լսելով, որ իշխան Ֆյոդորը երիտասարդ գեղեցիկ կին ունի, նա դիմեց իշխանին հետևյալ խոսքերով. «Թույլ տուր ինձ, իշխան, վայելել քո կնոջ գեղեցկությունը»: Չհանդուրժեց իշխանը և Բատային պատասխանեց քամահրական չարախնդությամբ. «Մեզ՝ քրիստոնյաներիս համար լավ չէ պիղծ և անաստված թագավորի մոտ բերել մեր կանանց: Երբ կհաղթես, այն ժամանակ էլ կտիրանաս թե՛ մեր կանանց, թե՛ մեզ»: Բարեպաշտ իշխանի այդ պատասխանից գազազեց Բատայը և անմիջապես հրամայեց սպանել նրան, իսկ մարմինը զցել գազաններին ու թռչուններին՝ հոշոտելու. սպանեց և մյուս դեսպա-

նորդ իշխաններին: Դառը լաց եղավ իշխանի ուղեկիցներից Ապանիցա անունով մեկը տիրոջ անկենդան մարմնի վրա և, տեսնելով, որ ոչ ոք չի հսկում, վերցրեց և ծածկեց նրան որոշ ժամանակով, իսկ ինքը շտապեց բարեպաշտ իշխանուհի Եպրաքսիայի մոտ և հայտնեց իշխանի մահվան գույժը: Բարեպաշտ իշխանուհին, որ երեխան գրկին այդ ժամանակ բարձր աշտարակում էր, ապշահար գույժից և անտանելի վշտից նույն պահին բարձր աշտարակից որդու հետ նետվեց ցած և նրա հետ «վարակվեց» (սպանվեց) մահով: Այդ ժամանակից, ըստ ծերունիների պատմածի, քաղաքն էլ, ուր պատահեց այդ դեպքը, սկսեց կոչվել Ջարայսկ (Վարակիչ), իսկ առաջ կոչվում էր Կրասնի, հետագայում՝ Ջարայսկ:

Որոշ ժամանակ անց Իգորի որդի մեծ իշխան Իգորը գնաց Վորոնեժ գետ, ուր սպանվել էր երանելի իշխան Ֆյոդոր Գեորգիի Ռյազանսկին: Վերցնելով նրա մարմինը, Իգորի որդի Իգորը երկար լաց եղավ նրա վրա և նրան բերեց մարզ՝ մեծ հրաշագործ Նիկողայոս Կորսունցու մոտ, և նրա մարմինը բարեպաշտ Եպրաքսիայի ու նրանց որդու՝ Իվանի մարմինների հետ դրեց մեծ հրաշագործի մոտ Ջարայսկ քաղաքում, ուր և մենք մինչ այժմ տեսնում ենք երեք քարե խաչ նրանց վրա՝ Քրիստոսի Նախակարապետ Հովհաննեսի եկեղեցու մոտ: Այս դեպքից հետո էլ Կորսունցի հրաշագործն անվանվեց Ջարայսկ (Ջարայսկի):

Այսպիսին են Ջարայսկի սրբի հրաշագործ պատկերի հայտնության ու փառքի առաջին հանգամանքները:

Վերջապես, ավանդության երրորդ մասը մեզ տեղեկացնում է ևս մի կարճատև, բայց և պատկերի պատմության մեջ նույնքան հրաշալի շրջանի՝ մինչև Ջարայսկ վերադառնալը ժամանակավորապես Կոլոմնա քաղաք նրա տեղափոխման մասին:

7021(1513)-ի ամռանը,-պատմում է ավանդությունը, երբ Ղրիմի թաթարներն արշավեցին Ռյազան, Ջարայսկի քահանաները վերցրին սուրբ Նիկողայոսի հրաշագործ պատկերը և նրա հետ թշնամիներից հեռացան Կոլոմնա: Կոլոմնայի եպիսկոպոս Միտրոֆանը մեծ պատկառանքով ընդունեց հրաշագործ պատկերը, ողջ քաղաքով դուրս եկավ նրան դիմավորելու և դրեց սքանչելագործ Պետրոսի եկեղեցում, որտեղ մեծ սուրբը մեծ գթառատություն ցուցաբերեց քաղաքի հանդեպ, բուժեց շատ տկարների և շատ ուրիշ փառավոր հրաշքներ գործեց: Այդ ժամանակ եպիսկոպոս Միտրոֆանը լուր ուղարկեց Մոսկվայի մեծ իշխան Իվանի որդի Վասիլին հրաշագործ պատկերի գալստյան մասին՝ սուրբ Նիկողայոս Ջարայսկու այդ փառավոր պատկերի բոլոր հիանալի նշանների նկարագրությամբ: Մեծ իշխան Իվանի որդի Վասիլին ուրախությամբ կարդաց այդ գրությունը և իսկույն իր ուխտավոր եպիսկոպոս Միտրոֆանին կարգադրեց Կոլոմնայի հրապարակում քարե եկեղեցի կառուցել ի պատիվ Ջարայսկի հրաշագործի և այնտեղ

դնել հրաշագործ պատկերը, իսկ կրկնօրինակը ուղարկել Ջարայսկ: Այդ պատվերն ստանալով, եպիսկոպոս Միտրոֆանը բազում քարտաշներ հրավիրեց և կարգադրեց եկեղեցի կառուցել ի պատիվ հրաշագործի, և նրանք դա կառուցեցին մեկ տարում: Օրհնելով այն և այնտեղ դնելով հրաշագործ պատկերը, եպիսկոպոսը կարգադրեց այնտեղ ծառայել երկու քահանայի և մեկ սարկավագի, իսկ մյուս երկու քահանաներին ու սարկավագին ուղարկեց Ռյազան, Ջարայսկ քաղաք, նախկին տաճար՝ պատկերի կրկնօրինակով, և Ջարայսկի քահանաները, իմանալով մեծ իշխանի կամքը, վերցրին այդ կրկնօրինակը ու դրեցին եկեղեցու բեմի հին գահավորակի մոտ: Եվ այդպես ծառայեցին քահանաները Կոլոմնայում հրաշագործի պատկերի մոտ երկու տարի և տասնհինգ շաբաթ: Այդ ընթացքում մարդկային ցեղն ատող դևը թունավորեց Կոզլոկ անունով մի արծաթագործի սիրտը՝ նրան դրդելով սուրբ Նիկողայոս Ջարայսկու եկեղեցին թալանելու միտքը, և ահա նա մի գիշեր եկավ և պոկեց հրաշագործ պատկերի ողջ մետաղադրվագը: Այդ մասին իմանալով, եպիսկոպոս Միտրոֆանը և ողջ ժողովուրդը վշտացան ու շվարեցին. «Ի՞նչ հանդուգն չարամիտ է հայտնվել,-ասում էին նրանք,-և ինչպե՞ս է համարձակվել դիպչել հրաշագործ պատկերին: Ինչպե՞ս չչորացավ նրա ձեռքը, և ինչպե՞ս չթուլացան մարմնի անդամները»: Դրանից հետո հինգ ամիսների ընթացքում հրաշագործ պատկերի մետաղադրվագների մասին որևէ տեղեկություն չեղավ. բայց դրանից հետո մեծ հրաշագործ Նիկողայոսը հայտնվեց Սոզոնտ անունով և Կիսելյով ազգանունով մի բարեպաշտ մարդու, որ անկողնում պառկած էր ութ տարի և ձեռքն ու ոտքը չէր կարողանում շարժել ու ծալել որևէ հող, և սուրբը պատվիրեց նրան գնալ եպիսկոպոս Միտրոֆանի մոտ և հայտնել նրան հրաշագործ պատկերի մետաղադրվագի մասին, որ այն գողացել է Կոզլոկը, արծաթագործ վարպետը, որի տունը Կոլոմնայի մյուս ափին է, լճի ետում, ուր և նա կարասի մեջ, հողի տակ թաքցրել է մետաղադրվագը: Սոզոնտն սկսեց հրաժարվել սրբի այդ հրամանը կատարելուց: «Ինչպե՞ս ես պատվիրում ինձ, Աստծո սուրբ, գնալ եպիսկոպոսի մոտ,-ասում էր նա.- Չէ՞ որ ես իմ հիվանդությամբ ո՛չ ոտքերս եմ կարողանում շարժել, ո՛չ ձեռքերս»: Ի պատասխան՝ հրաշագործ Նիկողայոսը վերցրեց և անկողնուց բարձրացրեց Սոզոնտին, և իսկույն նա առողջացավ: Ջգալով ապաքինումը, Սոզոնտը անհապաղ շտապեց եպիսկոպոսի մոտ և կարգով պատմեց այն ամենը, ինչպես պատվիրել էր սուրբը: Եպիսկոպոս Միտրոֆանը, այդ փառավոր հրաշքը տեսնելով, հրամայեց երկար հնչեցնել զանգերը: Սովար բազմություն հավաքվեց մեծ հրաշագործ Նիկողայոս Ջարայսկու եկեղեցու մոտ: Տեսնելով ապաքինված մարդուն, որ ողջ-առողջ կանգնել էր հրաշագործ պատկերի առջև, բոլորը հիացան և փառաբանեցին Աստծուն և Նրա սպասավոր Նիկողայոս Սքանչելագործին: Այդ ընթացքում եպիսկոպոս Միտրոֆանը և ողջ քահանա-

յությունը շուրջառներ հազան և, վերցնելով հետները սրբի հրաշագործ պատկերը, ճանապարհվեցին գետի մյուս ափը՝ Կոզլուկի մոտ: Ոչ ոք չգիտեր, թե ուր է գնում եպիսկոպոսը հրաշագործ պատկերի հետ, բացի իրենից և ապաքինված Սոզոնտից: Ու հասան նրանք Կոզլուկի տան մոտ, ուր դարպասների առջև նրանց դիմավորեց գողը և, առանց հարցուփորձի ու քննության, եպիսկոպոսին խոստովանեց ամեն բան, ինչ արել էր, և տվեց նրան մետաղադրվագը, զոջալով մեղքի համար: Ուրախացան սրբի այս հրաշքից: Այստեղից վերադառնալով, ողջ կղերն ու ժողովուրդը հրաշագործ պատկերի հետ հասան Իվանովսկ կոչվող քաղաքի դարպասներին: Նրանց առջև նստած էր աղքատ, ի ծնե խուլ ու համր Կլիմենտ անունով մեկը, որ շարժումներով ողորմություն էր խնդրում ներս մտնողներից: Հայացքը հառելով հրաշագործ պատկերին, նա աղոթեց սրբին և տեղնուտեղն սկսեց խոսել և լսել: Սարսռացին եպիսկոպոսն ու ժողովուրդը ազնիվ պատկերի այդ նոր հրաշալի ապաքինումից և շնորհակալ եղան Աստծուն ու Նրա սպասավոր սուրբ Նիկողայոս Աքանչելագործին: Երկրորդ անգամ եպիսկոպոսը լուր ուղարկեց Մոսկվայի մեծ իշխան Իվանի որդի Վասիլիին սուրբ Նիկողայոս Ջարայսկու հրաշագործ պատկերի նոր, մեծ ու փառավոր հրաշքների մասին. ինչպես նա անկյալին առողջացրեց, ինչպես գտավ իր մետաղադրվագը և ինչպես բուժեց խուլուհամրին և շատ ուրիշ հրաշքների մասին: Լսելով այդ մասին էլ ավելի ուրախացավ մեծ իշխանը, փառաբանեց Աստծուն և Նրա Անարատ Մորը և մեծ հրաշագործ Նիկողայոսին և պատվիրեց տարին երեք անգամ պատկերի սուրբ ջրով գալ իր մոտ՝ Մոսկվա:

Որոշ ժամանակ անց, հրաշագործի կամքով, նրա հրաշագործ պատկերի կրկնօրինակը Ջարայսկից տեղափոխվեց Կոլոմնա, իսկ Կոլոմնայում եղած սուրբ Նիկողայոս Ջարայսկու հրաշագործ պատկերը, որ բերվել էր Կորսունից, այստեղից տեղափոխվեց Ջարայսկ: Մինչև օրս էլ այն գտնվում է Ջարայսկի մայր տաճարում, գթառատություն և առողջություն պարգևելով հավատով իրեն դիմողներին: Այսպես է ավարտվում պատումը սրբի փառավոր հին պատկերի մասին:

Պատկերի փառքը, ինչպես երևում է այս ավանդությունից, չդադարեց Ռուսիայի դժբախտ ժամանակների անցնելուն հետ, ընդհակառակը, այն ավելի մեծացավ. Ռյազանի մարզից այն անցավ Մոսկվայի մարզ, իսկ դա նշանակում է ողջ Ռուսիայով մեկ: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա ոչ միայն բարեպաշտ ժողովուրդն է գնում նրա մոտ իր կարիքներով ու վշտերով, այլև թագակիրներն իրենք էին իրենց մեծությամբ խոնարհվում մեծ սրբի առջև: Արդեն հիշատակված Մոսկվայի մեծ իշխան Իվանի որդի Վասիլին, մեծարելով սրբին Կոլոմնայի տաճարով, լսելով հրաշագործի վեհության ու ողորմածության հրաշալի նշանների մասին, չկարողացավ հագեցնել հիացմունիքի, շնորհակալանքի և երկյուղածության իր զգացումները սրբի հանդեպ, քան անձամբ դիտել նրա հիանալի պատկեր-

րը, և ահա 1533 թվականին նա ժամանում է Ջարայսկ՝ հատկապես այդ նպատակով: Այդ նույն մղումով նրանից հետո 1566 թվականին այստեղ աղոթքի է ճանապարհվում նրա որդի Իվան Վասիլիի Գրոզնին՝ արքային Իվանի հետ:

Պատկերի մյուս փառքի մասին վկայում է նրա թանկարժեք, անգին քարերով զարդարված՝ հիմնականում ոսկուց մակադրվագը: Ոսկեդրվագի ներքևի փոքրիկ պիտակի գրությունը հայտնում է. «Համայն Ռուսիայի բարեպաշտ մեծ տիրակալ, թագավոր և Իվանի որդի մեծ իշխան Վասիլիի պատվերով արվել է սույն ոսկեդրվագը մեծ հրաշագործ Նիկողայոս Ջարայսկու պատկերով, նրա թագավորության երկրորդ տարում, 7116 (1068)-ի ամռանը, ավագերեցի խնդրանքով ու աղոթքներով»: Շույսկի ցարի այդ ոսկեդրվագը ծածկում է ողջ պատկերը՝ ներառյալ հագուստները. ամբողջ շուրջառը հագուկապով արված է հետագայում: Գործքի մեջ ցարի կողմից արված էր միայն սրբերի դեմքի լուսապսակը և ոսկե սալիկները և, բացի այդ, արծաթե շրջանակ՝ ողջ պատկերի շուրջը: Շույսկու այդ արծաթե դրվագում արծաթագօծ սալիկների վրա գործքի շուրջը ևս ինը պատկեր կա. Անձեռակերտ Սպասի, Աստվածամոր, Միքայել և Գաբրիել Հրեշտակապետերի, Հովհաննես Նախակարապետի, Վասիլի Մեծի, Դիմիտրի արքայազնի, մեծ նահատակ Դիմիտրիի և սուրբ Դիմիտրի Պրիլուցկու: Ենթադրում են, որ այդ պատկերներում ներկայացված են Վասիլի ցարի, իշխաններ Դիմիտրի Պոժարսկու, Միխայիլ Սկոպիոն-Շույսկու և ավագերեց Դիմիտրի Ջարայսկու պահապան Հրեշտակները: Առաջին երեք այրերի փառավոր գործերը գահաթափուրության ժամանակներից մեզ հայտնի են: Ինչ վերաբերում է վերջինին, ավագերեց Ջարայսկուն, ապա նրա անունն էլ պատմության մեջ փառավոր կլինի, քանի որ նա հայրենիքն ազատագրելու գործում իր հորդորներով գոտեպնդում էր Պոժարսկուն և հետո, որպես Ջարայսկի պատվիրակ, մասնակցեց Ֆյոդորի որդի Միխայիլին ցար ընտրելու գործում: Այսպիսով, մեղալյոնների պատկերները մեզ հիշեցնում են արժանահիշատակ ժամանակաշրջանի և մեծ մարդկանց մասին, որոնցից, ի նշան շնորհակալության մեծ դժբախտություններից ազատվելու, այս մետաղադրվագը նվիրաբերվել է սրբին և նրա հետ Երկնային Ուժերով Ռուսիայի համար պայքարողներին:

Ոչ պակաս խոսում է այդ նույն ցարի հարգանքը Ջարայսկու պատկերի նկատմամբ նրա զարդակախոցներից մեկի՝ ոսկե պիտակի հետևյալ գրությամբ, առ այն, որ՝ «7118 (1610) թվականի հունվարին Համայն Ռուսիայի ցար և Իվանի որդի մեծ իշխան Վասիլին ավելացրեց մեծ հրաշագործ Նիկողայոս Ջարայսկու պատկերին, երբ Աստված նրա հրաշագործ աղոթքներով ազատագրեց իր քաղաքը բարբարոսներից, և գլուխ խոնարհեցին թագավորին»: Միաժամանակ դա վկայում է սրբի կողմից Ռուսական հողի հովանավորության նոր շրջանի մասին:

Այժմյան քարե տաճարը ի պատիվ սպասավորի, որտեղ պահպանվում է նրա պատկերը, կառուցված է մեկ այլ բարեպաշտ ցարի՝ Յովհաննի որդի Ֆյոդորի հատուկ հրովարտակով:

Ամենաառաջին, պատկերի հայտնվելուն ժամանակակից, և նույնիսկ երկրորդ՝ քարե տաճարի մասին, որը կառուցվեց առաջինի տեղում դեռևս 1625 թվականին, մենք ոչինչ չգիտենք. դե, նույնիսկ սա էլ չափազանց փոփոխված է և գանազան նոր կառույցներից ու վերափոխումներից գրեթե կորցրել է հին հուշարձանի յուրահատկությունները: Այն այժմ երկարավուն քառանկյան ձև ունի, հինգ գմբեթով և դրանց վրա ութաձայր ներթափանց խաչերով, վերևում՝ թագով, իսկ ներքևում՝ կիսալուսնով:

Եվ բուն պատկերն էլ մեզ չի հասել իր նախաստեղծ ամբողջությամբ: Դատելով վրայի գրությունից. «Այս հրաշագործ պատկերը նորոգեց մոսկվացի վաճառական Նիկիտա Լեոնտևը 1797 թվականին», -այն նորոգվել է, հնարավոր է, ոչ մեկ անգամ: Անհայտ է, թե ինչպիսին է այն եղել մինչև նորոգումը. կարելի է կարծել՝ գրեթե նույնը, քանի որ վերականգնողը հազիվ թե համարձակվեր նրա հետ ինչոր բան անել, քան ներկերը թարմացնելը: Ասվածին ավելացնենք հետևյալը: Պատկերի երկարությունը $25\frac{1}{2}$ վերշոկ է, իսկ լայնքը՝ $20\frac{1}{4}$: Շուրջառի ոսկին ավելի քան 7 ֆունտ է, արծաթը՝ մոտ 6 ֆունտ, և, բացի այդ, այն զարդարում են 133 գունագեղ քարեր, 3 խոշոր մարգարիտ և ավելի քան 1600 միջին մեծության մարգարիտներ: Տաճարում այն պահվում է սովորաբար հնագույն հատուկ, նույնպես առատորեն զարդարված քարերով ու մարգարտով, տապանակում, որը ներսից պատված է մորեգույն թավիշով, իսկ դրսից պաստառված՝ Աստվածամորը և սպասավորներին պատկերող ոսկեզօծ, թերթավոր արծաթով:

Այսպիսին է մեծ սուրբ և հրաշագործ Նիկողայոսի հրաշալի նշանների աղբյուրի հիանալի անցյալը: Հին ռուսական քաղաք Ջարայսկում մինչև հիմա էլ շատ բաներ ուխտավորներին հիշեցնում են հրաշագործի այդ պատկերի հնագույն պատմության վշտալի սարսափների և փառավոր ողորմությունների մասին: Այսպես, հնուց և մինչև հիմա Ջարայսկի փողոցներից մեկը կոչվում է Կորսունսկի, որ լիովին համապատասխանում է Կորսունի սրբի պատկերը բերող քահանայի՝ Կորսունից այստեղ գալու մասին ավանդությանը: Ըստ տեղի քաղաքային գրառումների, դեռ XVII դարում այստեղի հոգևորականության շրջանում գոյություն ուներ Կորսունի տոհմը, ակներևաբար, փառավոր Եվստափիոսի սերունդներից:

Ավանդության համաձայն, քաղաքի բուն անվանումը՝ Ջարայսկ (հինը՝ Ջարագսկ), որ նրա մի տեղի անվանումն է՝ Ջարագ, և Նիկոլսկի տաճարից ոչ հեռու, Նախակարապետի եկեղեցուն կից գտնվող երեք խաչերը, Գեորգի որդի իշխան Ֆյոդորի, նրա կնոջ՝ Եպրաքսիայի և նրանց որդու մարմինների վրա, հիշեցնում են առաջին իշխանական տոհմի չափազանց վշտալի ճակատագրի մասին, այն իշ-

Վերջապես, Ջարայսկից ոչ հեռու գյուղի անվանումը՝ Ապանիչիչի, ավանդությամբ հիմնավորելով մանրամասները նահատակ-իշխանի հավատարիմ դայակ Ապանիցեի մասին, նույնպես նպաստում է այդ պատկերի հրաշալի անցյալի պատմության վերաբերյալ ժամանակակից պատկերացումների կենսականությանն ու լիարժեքությանը, պատկեր, որ իր ճակատագիրն այնպես ամուր կապել է Ռյազան երկրի ճակատագրի հետ:

Գիտակցելով այդ պատկերի պատմական նշանակությունը՝ Ռուսական երկրին մխիթարելը թաթարական լծի ծանր տարիներին, Ջարայսկն էլ տոնում է սրբի հիշատակի օրերը և հատկապես ավագերեց Եվստափիոսի միջոցով Կորսունից նրա հրաշագործ պատկերը բերելու օրը՝ 30 հուլիսի, համաձայն ավանդության: Այդ օրվա նախօրեին (29 հուլիսի) արարողությունն այստեղ սկսվում է փոքր ժամերգության կեսօրվա երկուսին. այնուհետև՝ մաղթանքներ սրբին և հետո հոգեհանգիստ ննջեցյալ իշխաններին, Ֆյոդորին, Եպրաքսիային և նորածին Յովհաննին, խնկարկումներով նրանց աճյունների, երեք խաչերի և Եվստափիոս երեցի մոտ: Երեկոյան ժամասացությանը կատարվում է հիշյալ ավանդության ընթերցումը: Այն ուղղակիորեն իր ունկնդիրներին, ովքեր մտահայում են սրբի այդ նույն պատկերը, տեղափոխում է այն հին ժամանակները: Իրադրաձության բուն օրը, հուլիսի 30-ին, սրբին ուղղված մաղթանքներով հանդիսավոր պատարագից հետո, ողջ քաղաքի շուրջը իրականացվում է եկեղեցական խաչերթը:

Սրբի միայն զարայսկյան պատկերը չէ, որ Ռուսական հողի մխիթարանքի աղբյուր էր թաթարական արշավանքի ծանր ժամանակներում, ինչպես որ միայն Ռյազանի հողը չէր, թեև ամենից շատը բարբարոսներից տուժած, սփոփանքի կարոտ, և հրաշագործի մոտ գալիս էին ոչ միայն ճնշվածները: Տարեգրությունները, թե՛ բարեպաշտ ավանդությունը, թե՛ հենց հիմնավուրց սուրբ հուշարձանները մեզ

համար հիշատակ են պահպանել Ռուսիայի և ուրիշ տեղերում եղած սրբի այլ հրաշագործ պատկերների մասին, որոնք նույնպես փառաբանված են այն ժամանակներից Միրլիկիայի սրբի բարեգործություններով: Այսպես, Իպատիկյան տարեգրությունը մոտ 1227 թվականին (այսինքն՝ Ռուսիայի վրա հենց մոնղոլների արշավանքի ժամանակ), պատմում է սուրբ Նիկողայոսի ժողիչկյան հրաշագործ պատկերի և նրա հանդեպ ոչ միայն ժողովրդի, այլև իշխանների երկյուղածության մասին: «Գնում է Դանիելը (իշխան Գալիցկին),-ասում է այն,-ժողիչին՝ խոնարհվելու և աղոթելու սուրբ Նիկողայոսին, իսկ նա կանչել է Յարոսլավին Լուչեսկու մոտ և ասում են նրան բոյարները. ընդունիր Լուչեսկուն, և նրան պատասխանում են, որ գա այստեղ և աղոթք անի»: Այստեղից երևում է, թե ինչպես սրբի և նրա հրաշալի ազնվագույն փառավոր պատկերների հանդեպ ակնածանքը ավելորդ անգամ զսպում էր իշխաններին իրենց կործանարար երկպառակություններից: Այդ նույն սուրբը հազվադեպ չէ, որ ապավեն, հույսերի և սփոփանքի աղբյուր էր լինում այդ խռովություններից տուժած կողմերի համար: «Ուղարկում է Միխայիլին ու Իգյասլավին, սպառնալով. տուր մեր եղբայրներին, այլապես կռվով կգանք քեզ վրա: Դանիլովներն էլ աղոթում են Աստծուն և սուրբ Նիկողայոսին, որ ցույց տա իր հրաշքը», -մի այլ տեղ ասում է այդ նույն պատկերի մասին տարեգրությունը:

Չեռնիգովյան հողում թաթարական ջարդերի տխուր հետևանքների և մեծ հովանավորի ծածկի տակ մխիթարության վկան մինչև այժմ էլ կանգուն Կրուպիցկայի սրբի մենաստանն է՝ հովանավորի հրաշագործ վաղեմի սրբապատկերով: Մենաստանը գտնվում է Կոնոտոպից 30, Բատուրիինից՝ 7 և Չեռնիգովից՝ 120 վերստի վրա, Սեյմի ափին: Երեք կողմերից այն շրջապատված է գետածոցերով, իսկ չորրորդից, հյուսիսայինից, մենաստանի պարսպին հարում են մենաստանի դաշտերն ու մարգագետինները: Մի ժամանակ մենաստանը Սեյմից վերև, խուլ անտառի թավուտում էր, ցածրադիր և նեղ վայրում, անտառներով ու ճահիճներով շրջապատված, այժմյան վայրից կես վերստ դեպի արևմուտք: Այժմ երկրամասի անտառաթավուտներից այստեղ միայն մենաստանի արևմուտքում է նրա հոգածությամբ պահպանվել ոչ մեծ անտառ, դարավոր կաղնիներով ու ծփնիներով՝ այս մեկուսի վայրում վաղեմի հոգևոր սխրանքների վկաներով:

Ե՛րբ և ո՛վ է կառուցել մենաստանը, այժմ բոլորովին անհայտ է: Անկասկած է միայն, որ դա եղել է խոր անցյալում: Չեռնիգովի արքեպիսկոպոս, գերապատիվ Ֆիլարետի կարծիքով, մենաստանի պատմության առաջին կեսի սկիզբը ծագում է դեռևս մինչև թաթարական արշավանքը: Դրա նախնական հիմնադրման առիթը սուրբ Նիկողայոսի սրբապատկերի հայտնությունն էր առաջին հին մենաստանի նշյալ տեղում: Նույն տեղում այժմ միայն փոքրիկ ճգնարան է հրաշագործի ոչ մեծ փայտե վանքով: Ճգնարանի հյուսիսարևելյան անկյունում մինչև այժմ էլ ցույց են

տալիս բլուրը, ուր երևացել էր հրաշագործ սրբապատկերը: Այնուհետև, դեռևս սուրբ Դիմիտրի Ռոստովցին, երբ այդ մենաստանի ավագերեցն էր, իր ձեռքով եկեղեցական Ավետարանում գրի էր առել, իսկ հետո մենաստանի մեկ այլ վանահայր իր հովվապետին տեղեկացրել է հետևյալ պահպանված ավանդության մասին. «Մեր մենաստանի ծեր վանականներն ու աշխարհիկ ավագները բանավոր պատմում են, որ այս մենաստանը Կրուպիցկի են անվանում այն պատճառով, որ Բատայի ավերումների ժամանակ վանականները և բազմաթիվ խաղաղ բնակիչներ հարձակումներից պատսպարվում են վանքում, որն այժմ կոչվում է հին, և սովից հալումաշ էին լինում. հենց այդ ժամանակ երկնքից այնքան հատիկ է թափվում, որ բոլորը կարողանում են հագեցնել սովը: Եվ այդ հատիկները պահպանվում են արծաթյա տապանակի մեջ նույնիսկ մինչև հետման Մազեպայի ժամանակները: Ինչպես դավաճանությամբ Բատուրին քաղաքն ավերվեց, նույնպես և վանքն ավերվեց, և ով վերցրեց հատիկները, հայտնի չէ»:

XVI դարի կեսին Կրուպիցկայա մենաստանը գրեթե բոլորովին ամայացավ ու մոռացվեց: Այդ ժամանակ այն արդեն այժմյան տեղում էր: Այդ ժամանակ էլ, սուրբ Դիմիտրիի վկայությամբ, այստեղ եկավ առանձնության սիրահար կույս Մակրինան և տեղավորվեց մենաստանի ավերակներում, դատարկ եկեղեցու կողքը: «Սա,-գրում է սուրբը,-վաղուց ամայացած վայր էր, նա երկար ապրեց չափազանց հին ու բարձիթողի փայտե փոքր եկեղեցուն կից այս անապատում, այդ նույն տեղում կանգնած, ուր հիմա ընթրիքի զոհասեղանի մոտ մեծ խնձորենի է: Այս կույս Մակրինայի մոտ սկսեցին վանականներ գալ և կամաց-կամաց տեղն ընդլայնեցին ու մենաստանը կենդանացավ»: Այդ ժամանակվանից սկսվում է այդ մենաստանի կայուն հիմնավորումը: Դրա ամենաշռայլ հովանավորները ուկրաինական և զապորոժյան հետմաններն էին: Մենաստանի ծաղկումը համընկնում է սուրբ Դիմիտրիի (Դիմիտրիա Տուպտալո) կառավարման տարիներին (1682-1692): Այս մարդու սրբության մասին փառքը այն ժամանակ մենաստանի կողմն էր գրավում թե՛ ցարերի, թե՛ ազնվականների և շատ բարեպաշտ երկրպագուների շռայլությունն ու բարեհաճությունը: Այժմ մենաստանը զրկված է առաջվա հարստությունից, բայց զուրկ չէ առատությունից ու բարեկեցությունից: Այստեղ երեք տաճար կա. Նիկոլաևյան մայր տաճարը՝ ի պատիվ սուրբ և հրաշագործ Նիկոլայոսի, երկու կցաշենքով (այստեղ, տաճարային օրինակի փոխարեն, սրբի հրաշագործ սրբապատկերն է. տաճարը հինգամբեթանի է, կառուցված 1680 թվականին և դրանից հետո բազմաթիվ անգամներ կարգի է բերվել ու բարելավվել մինչ վերջին ժամանակներս), տաք քարե տաճարը՝ ի պատիվ Տիրոջ Պայծառակերպության: Նիկոլաևյանը փայտե եկեղեցի է, գտնվում է անապատում, սրբապատկերի ձեռքբերման և մենաստանի նախկին տեղում (սկզբում կառուցվել է փայտե խարխուլ եկեղեցու տեղում 1746 -1749 թվականներին, վերականգնվել է 1800-ին):

Բացի այդ, մենաստանում կան նորերս կառուցված պարզ և գեղեցիկ քարե զանգակատուն, զոհասեղանի քարե մասնաշենք, վանական քարե մասնաշենք, քարե պարիսպ մենաստանի շուրջը և այլն:

Սուրբ նահատակ Վարվառայի մասունքների մի մասի (աճյունի) հետ, որ այստեղ բերել է սուրբ Դիմիտրիին Բատուրիներից, մինչ այժմ մենաստանի գլխավոր սրբությունը հիշատակված սրբի հրաշագործ պատկերի վաղեմի հայտնությունն է: Մինչև 1812 թվականը հայտնված պատկերը գտնվում էր Նիկոլակյան եկեղեցուն, ճգնարանում, նախկին մենաստանի տեղում, իսկ նույն թվականի սեպտեմբերի 6-ին այն փոխադրվեց Նիկոլակյան մայր տաճարի այժմյան տեղը: Բայց պատկերի նախնական տեղի հիշողությունը պահպանվել է մինչ օրս և տոնվում է մայիսի 9-ին՝ մենաստանից ճգնարան եկեղեցական խաչերթով: Նիկոլակյան փոքր եկեղեցուն մայիսի 8-ին տեղի է ունենում երեկոյան ժամասացություն, իսկ մայիսի 9-ին՝ հանդիսավոր պատարագ: Վարարած Սեյմն այդ ժամանակ դեռ շրջապատում է մենաստանը բոլոր կողմերից և ճգնարանը ողողում ջրով և զրկում շրջապատի հետ ցամաքային հաղորդակցությունից: Սակայն ոչինչ չի կարող կանգնեցնել բարեպաշտ ժողովրդի ձգտումը սիրելի սրբի և նրա պաշտելի պատկերի հանդեպ: Եկեղեցական թափորին ամեն կողմից միանում են սրբին երկրպագողները և նավակներով նրա պատկերն ուղեկցում նրա գտնվելու հին վայրը:

Նիկոլա՝ նշանավոր անուն,
Հաղթանակի անվանակից,
Հաղթում է բարբարոսներին,
Սփոփում քրիստոնյաներին:

(Հոգևոր ժողովրդական բանաստեղծություններից.
Բեսսոնովի երկերից)

Ռուսական երկիր Բատայի գնդերի թշնամական առաջին ներխուժումից հետո երկար ժամանակ Ռուսիայի վրա կախված էր թաթարական ծանր լծի մռայլ ամպը: Բատայի ավերումներն այնքան մեծ էին, որ ռուս ժողովուրդը, դրանցից ճնշված, այնուհետև երկար ժամանակ սարսռում էր հենց միայն թաթարի անունը լսելուց, և չէր փորձում ընդդիմանալ իր վրա դրված լծին և իր բեռը տանում էր հերոսական համբերությամբ: Գիշտ է, թաթարներն այլևս նման արշավանքի չդիմեցին Ռուսիայի վրա, ինչպես առաջին անգամ, այնուամենայնիվ, նրանք թույլ չտվեցին մոռանալ իրենց և Ռուսական երկիր իրենց շարունակվող արշավանքների ժամանակ, իսկ կողոպուտների ընթացքում պակաս բարբարոսություն չէին ցուցաբերում: Նրանց մոտենալուց ռուս մարդիկ նախկինի պես հուսահատվում էին. նրանք փրկություն էին փնտրում, որտեղ պատահեր, կամ հանձնվում Աստծո կամքին, պատրաստ ամեն ինչի: Հազվադեպ էր միայն, որ չէին դիմանում մոնղոլական խոշտանգումներին և պայքարի մեջ էին մտնում թաթարների հետ:

Սկզբում դրանք թշնամուն դիմադրելու չնչին ջանքեր էին, լծի ծանրությունը գրեթե չթոթափող: Ինչքան ժամանակն անցնում էր, սակայն, այնքան ավելի էր հիշողությունը խորանում Ռուսիայում թաթարական առաջին ջարդերի մասին: Թաթարական կայսրությունը թուլանում էր ինքնիրեն և բաժանվում տարբեր հորդանների, մինչդեռ Ռուսիան ուշքի էր գալիս, գիտակցում նախկին սխալները, ձգտում միասնության, ավելի ու ավելի էր ուժեղանում և հասկանում իր զորությունը: Որքան անցնում էր ժամանակը, այնքան ավելի հաճախակի էին դառնում թաթարական բռնությանն ընդդիմանալու փորձերը, մինչև վերջապես Ռուսական երկրի մեծ մասը չմիավորվեց մոսկովյան իշխանության տակ և ամբողջ զորությամբ հաղթականորեն դուրս չեկավ ողջ Մոնղոլական կայսրության դեմ. առաջին անգամ՝ մեծ իշխան Դիմիտրի Յովհանի Դոնսկոյի (1380), իսկ հետո, հարյուր տարի անց, վերջնականապես թոթափեց թաթարական լուծը. դա եղավ Վասիլիի որդի մեծ իշխան Իվան III-ի ժամանակ (1480):

Մենք արդեն գիտենք, թե ինչպես մեր հայրենիքի ճակատագրում այդ տխուր դարաշրջանի սկզբին մոնղոլական բռնությունից ապաստան և մխիթարություն էին փնտրում ռուս մարդիկ Աստծո մեծ հովվապետ, դժբախտությունների մեջ փութեռանդ հասնող սուրբ Նիկողայոսի մոտ և թե ինչպես նրա օգնությամբ նրանք իրենց վրա իրենց խաչն էին դնում: Այժմ կպատմենք, թե ինչպես Աստծո սպասավորը նպաստեց Ռուսիայի հարությանը այդ ստրկությունից իր, Աստվածամոր պաշտպանության, աղոթքների ու միջնորդության օգնությամբ, սուրբ կուսակրոն Սերգիի և մյուս սրբերի՝ Ռուսական հողի համար անդրենաձին աղոթողների հետ միասին:

Պահպանված շատ հին հուշարձաններ և ավանդություններ վկայում են, որ ռուսների նախնիներն այն ժամանակ սրտանց աղոթում էին հրաշագործին մոնղոլներից անարգված քրիստոնեության անունը վերականգնելու համար, անդադրում վազում նրա մոտ պաշտանություն գտնելու խնդրանքներով, և որ մեծ սուրբը, իր հովանավորության տակ առնելով Ռուսական հողը, այժմ, երբ սպառվել էր Աստծո ցասումը, գթասրտորեն անսում էր քրիստոնյաների աղոթքներին. ոչ միայն սփոփում նրանց ու թեթևացնում մարմնական ու հոգևոր վշտերը, այլև շատ դեպքերում հրաշալիորեն օգնում թշնամու դեմ պայքարում: Առանց նրա օգնության չէ, որ Ռուսիայից անհետացավ թաթարական անվան հանդեպ վախի վերջին ստվերը:

Ահա մեր հայրենիքի և մեր նախնիների հանդեպ սրբի գթասրտության վաղեմի առաջին վկայությունը՝ սուրբ Նիկողայոս Մոժայսկու հրաշագործ պատկերը: Իր անվանումն ստացել է Մոժայսկ քաղաքից (Մոսկվայի նահանգ), ուր գտնվում է մայր տաճարում, նույնպես սրբի անունով: Իսկ ծագման ու առաջին փառքի համար, ըստ ավանդության, պարտական է մոնղոլների՝ Ռուսական հողի թշնամիներ-

րի դեմ այդ քաղաքին սուրբ Նիկողայոսի հրաշագործ օգնության հետևյալ դեպքով:

Վաղուց էր դա, այնքան վաղուց, որ մոռացվել է անգամ իրադարձության ժամանակը. ամեն դեպքում, արդեն կառուցված էր սրբի տաճարը, ի հիշատակում հրաշագործ պաշտպանության ստեղծվել էր պատկերը և որը, հաստատապես հայտնի էր, գոյություն ուներ դեռ 1303 թվականին: Բայց դա կատարվեց XIV դարից ոչ ուշ, քանի որ ներկայիս Մոժայսկի պատկերը պատմությունն ու ավանդությունը համարում են նման բոլոր պատկերների բնօրինակը՝ նրանց անվանելով, ուր էլ որ նրանք լինեն, սուրբ Մոժայսկու պատկեր: Բայց եթե դա այդպես է, եթե դա բնօրինակն է, և մնացած բոլոր քանդակագարդ պատկերները՝ դրա կրկնօրինակը, ապա այս վերջիններս մեզ հասել են արդեն XV դարի սկզբին: Այսպես, սրբի պատկերն այդ տեսքով Մոսկվայի Կրեմլի դարպասների վրա՝ վերաբերում է 1401 թվականին, Մցենսկու քանդակագարդ պատկերի հայտնվելը՝ 1416 թվականին: Եթե պատկերն արդեն այդ ժամանակ այդքան փառք ուներ, ապա, ակնհայտ է, որ նրա ծագումը վերաբերում է ծայրահեղ դեպքում XIV դարին, իսկ գուցե և ավելի վաղ: Ահա այն ամենը, ինչ կարող ենք ասել նրա վաղեմության մասին: Ավանդությունն ասում է, թե թշնամիները մտադրվել էին հարձակվել Մոժայսկի վրա: Այդ ժամանակ հրաշալի նշան երևաց. ի քաջալերումն Մոժայսկի բնակիչների և ի սարսափ թշնամիների, սուրբը հրաշքով երևաց ահեղ տեսքով՝ օդում կանգնած մայր տաճարի վրա, մի ձեռքում՝ սուր, մյուսում՝ տաճարը շրջապատող ամրոցի պատկերը: Թշնամին այնքան էր սարսափած այդ տեսիլքից, որ պաշարումը վերացրեց ու փախավ՝ ի զարմանս և հուրախություն պաշարյալների: Այդ ժամանակ էլ բարեպաշտ քաղաքացիները՝ ի նշան երախտագիտության հրաշալի օգնության, պատրաստեցին սրբի ներկայիս պաշտելի, քանդակագարդ պատկերը: Քաղաքի փրկության համար սքանչելագործի այդ հրաշք տեսիլքի հիշատակին, հավանաբար, այն այժմ անվանվում է հայտնված, իսկ հետո Նիկողայոս Սպասավորի զորությամբ նրանից կատարված նոր հրաշքների նշանները հաստատեցին դրա անվանումը և հրաշագործի փառքը. անշուշտ, սրբի հրաշք տեսիլքի հիշատակին է այն ներկայացված նաև սրով ու տաճարով արված պատկերը: Այդպիսի սփոփիչ և ուսանելի ավանդություն է ընկած այդ պատկերի հոյակապ պատմության հիմքում:

Այստեղից հասկանալի է նրա անսովոր փառքը և խորին ակնածանքը, որ վաղուց ի վեր ցուցաբերում է նրա հանդեպ ռուս ժողովուրդը: Մեր նախնիների կողմից այդ պատկերի պաշտամունքի մասին կարելի է դատել այն բանով, որ մոսկովյան մեծ իշխաններն ու ցարերը իրենք էին գնում Մոժայսկ ուխտի, խոնարհվելու Նիկողայոս սպասավորի այդ հրաշագործ պատկերին: Այսպես, 1537 և 1538 թվականներին այստեղ ուխտագնացության եկավ տիրակալուհի Ելենան:

1546 թվականին նույն նպատակով այստեղ ուղևորվեց մեծ իշխան և Իվան IV թագավորը՝ մենակ, իսկ 1564 թվականին՝ թագուհու, Իվան որդու, Անդրեյի որդի իշխան Վլադիմիրի և միտրոպոլիտի հետ: 1592 թվականին սքանչելագործին խոնարհության եկավ նաև Իվանի որդի ցար Ֆյոդորը: Այդ պատկերին Պետրոս Մեծի խորին հարգանքի ու, գուցե նաև, Մոծայսկ նրա այցելության մասին է վկայում տեղական այսպիսի ավանդությունը. հենց Պետրոս I-ի կարգադրությամբ է մինչ այժմ Մոծայսկի գավառական գանձատնից Նիկոլաևյան տաճարին տրվում 6 ռուբլի 81-ական կոպեկ մոմերի ու նշխարի համար: Ի դեպ, պատկերի բազմաթիվ թանկագին զարդակախոցների մեջ հատկապես հիանալի է Պետրոս I-ի դիմանկարի մանրակերտը՝ բարձրահարգ ոսկուց: Այսպես էր հնում: Բայց և այժմ էլ՝ բարձրաշխարհիկ անձինք, լինելով այս կողմերում, իրենց պարտքն են համարում աղոթել փառավոր սրբապատկերի առջև: Այսպես, 1837 թվականին Նիկոլաևյան տաճար այցելեց ցարորդի-գահաժառանգ, այնուհետև կայսր Ալեքսանդր Նիկոլաևիչը: Այժմ պատկերը որպես տաճարի շարունակություն գտնվում է ցարական դարպասների աջակողմում: Սուրբն այնտեղ պատկերված է ողջ հասակով, $2\frac{1}{2}$ արշին բարձրությամբ, հին եպիսկոպոսական հանդերձով՝ փիլոնով և ոչ թե արքեպիսկոպոսական շուրջառով: Պատկերն առջևից պատված է արծաթազօծ դրվագակերտվածքով. պսակը և զարդակախոցը՝ կարմիր ոսկուց, իսկ արծաթազօծ խուլյրը զարդարված է խոշոր մարգարտով և թանկագին քարերով: Սպասավորի աջ ձեռքում, ինչպես արդեն ասացինք, սուր է, իսկ ձախում՝ ամրոցով շրջապատված հինգգմբեթանի տաճարը, երկուսն էլ փայտից, ոսկեզօծ: Պսակի մոտ գրություն կա. «Սուրբ Նիկողայոս, Մոծայսկի հրաշագործը»: Պատկերը պահպանվում է փայտե, ոսկեզօծ, սրահանման խցում: Ի հավելումն՝ հրաշագործ զորության և մինչ այժմ պահպանված նրա նկատմամբ առկա խորին պաշտամունքի մասին վկայությունն են չնվազող, թանկագին՝ ոսկյա և արծաթյա զարդակախոցների զանգվածը, հրաշագործից օգնություն փնտրող ուղղափառ հավատացյալների մարմնի տառապող մասերի պատկերներով, ինչպես նաև ամեն տեղից այստեղ ուխտագնացության եկող ուխտավորների անսպառ բազմությունը:

Այս բոլոր տվյալները մեզ հայտնում է Մոծայսկի Նիկոլաևյան տաճարի ձեռագիր տարեգիրը: Դրանից էլ, ի լրումն դրա, իմանում ենք Նիկողայոս Սպասավորի քանդակագարդ պատկերի հրաշագործ զորության ևս երեք դեպքերի մասին:

1) Մինչև 1820 թվականը Նիկոլաևյան մայր տաճարի ներքին հարկաշարքի պատկերախորշում տեղական սրբապատկերների առջև մոմերի համար հինգ կանթեղ կար, լեհերեն գրությամբ: Կա մի ավանդություն, որ այդ կանթեղները տաճարին նվիրաբերել է ինչ-որ լեհ թագավոր: Մոծայսկի վրա հարձակման ժամանակ նա հրամայել է տաճարից վերցնել սուրբ Նիկողայոսի պատկերը, բայց,

հանկարծակի կուրանալով, տեղնուտեղը վերադարձնում է սրբապատկերը ու այնուհետ նրան նվիրում է կանթեղներ:

2) 1812 թվականին, երբ թշնամին մոտենում էր Մոծայսկին, բնակիչները լքեցին քաղաքը և ցրվեցին տարբեր կողմեր: Սուրբ Նիկողայոսի հրաշագործ պատկերը մայր տաճարի եղբայրները թաքցրին տաճարի ներքնահարկում, հողի տակ: Թշնամուն վտարելուց հետո քաղաք վերադարձած բնակիչները հայտնաբերեցին, որ թշնամիները մայր տաճարից բավականին եկեղեցական իրեր են կողոպտել, այրել են պատկերախորշը, իսկ վայրը, ուր գտնվում էր սրբապատկերը, միայն փոքր-ինչ փորփրել էին: Երևում է, որ սուրբ Նիկողայոսը թույլ չէր տվել անարգել իր սրբապատկերը:

3) 1815 թվականի մարտի 11-ի գիշերը ինչ-որ մեկը մայր տաճարից եկեղեցական փող էր գողացել՝ 2800 ռուբլի թղթադրամներով: Որքան էլ ջանադիր էին որոնումները քաղաքացիական իշխանության ու եկեղեցականների կողմից, գողը չբռնվեց: Բայց մարտի 24-ին անհայտ անձը տաճարի ժամատանը նամակ գցեց, ուր գրված էր. «Մայր տաճարի փողերը վերցրեք խորդանոցի ածուխների միջից, սպասավորից փրկություն չկա, մեղանչել են միայնակ»: Եվ իսկապես, ածխատանը, տաճարի առնուտքում, գտնվեց 1938 ռուբլի 80 կոպեկ: Այս մասին Մոծայսկի քաղաքապետին ուղղված եկեղեցականների զեկուցման կրկնօրինակը պահպանվում է մայր տաճարում:

Ահա և մեկ այլ վկայություն: Ենիսեյսկի եպիսկոպոս Նիկողիմը անձամբ, իր կյանքից, Մոծայսկի սուրբ Նիկողայոսի այդ նույն սրբապատկերի հրաշալի նշանի մասին հաղորդում է հետևյալ պատմությունը:

Ծծկեր նորածինը, առանց հսկողության, մենակ մնալով օրորոցում, սկսում է լաց լինել, կանչելով ծնողներին: «Մայրս, երբ տուն եկավ,-պատմում է սուրբ հայրը,- ինձ գտավ շնչահատ. լաց լինելուց սպառել էի արցունքներս և ձայնս, տնքում էի՝ խռխռալով, և սևացել էի: Սրանից սկսվեցին թե՛ իմ, թե՛ մորս տառապանքները. զօր ու գիշեր տնքում էի: Ինձ խնամելու ժամանակ՝ քնից զրկվելով, մորս տեսողությունը թուլացավ: Այսպես անցակացրինք 1803-1804 թվականների աշունը, ծմեռը և գարնան մի մասը:

Մայիսին ծնողներս ուխտ արեցին ինձ հետ ոտքով գնալ Մոծայսկ (25 վերստ) և այնտեղ, մայր տաճարում գտնվող սուրբ Նիկողայոսի պատկերի առջև աղոթել ինձ և իրենց համար:

Այս խոստումը կատարելուց հետո ես շուտով առողջացա, իսկ մորս տեսողությունը վերականգնվեց:

Ծնողներիս հետ միասին հավատում և խոստովանում եմ,-ավարտում է սուրբ հայրը,-որ Աստծո այս հրաշալի գթասրտությունը մեր հանդեպ կատարվել է Աստծո սպասավոր Նիկողայոս Աքանչելագործի աղոթքներով, նրա սրբապատկե-

րի առջև ծնողներիս աղոթքով, որ Մոժայսկի մայր տաճարում է: 23 օգոստոսի 1892 թիվ»:

Յուրաքանչյուր շաբաթ, հինգշաբթի օրը, մինչև պատարագի սկսվելը մայր տաճարում պատկերի առջև օրհներգությամբ մաղթանք է արվում սրբին, իսկ յուրաքանչյուր տարի օգոստոսին, ամսի մեկին հաջորդող կիրակի օրը, քաղաքի շուրջը եկեղեցական թափոր է լինում հրաշագործ սրբապատկերի և այլ եկեղեցիների ու Լուծեցկի մենաստանի պատկերների հետ: Եկեղեցական այդ թափորը, քաղաքացիների հատուկ խնդրանքով, հաստատված է 1850 թվականին Սուրբ Սինոդի թույլտվությամբ, ի նշան երախտագիտության 1848 թվականի ժանտախտից փրկվելու:

Մեզ համար այդքան մոտ իրադարձություններից կրկին դիմենք մոնղոլական լծի ժամանակներում Ռուսական երկրի դժբախտությունների և ուղղափառներին սքանչելագործի օգնության ու գթառատության նոր երևույթների մասին պատմությանը: Դարերը մեզ համար պահպանել են բարեպաշտ մի ավանդություն ասիական բարբարոսների դեմ մեր հայրենիքի պայքարում սրբի հատուկ հովանավորության մասին:

Թաթարներն այն ժամանակ ծաղրանքի էին ենթարկում ողջ ռուս ժողովրդին, ռուս իշխաններին, ռուսական հավատը, պարծենում էին իրենց ուժով ու իշխանությամբ, և այնուամենայնիվ ռուս անվան նվաստացման հետ միաժամանակ բարբարոսները չէին կարող չտեսնել շատ բաներում քրիստոնյաների ակնհայտ առավելությունն իրենց հանդեպ, չէին կարող, ծայրահեղ դեպքում, չտեսնել նրանց մեջ եղող ամենախելոքներն ու ամենաազնիվները: Դա ապացուցում են նշանավոր թաթարների՝ ուղղափառ հավատին դիմելու դեպքերը, որ հետևանք են հենց այդ գիտակցության: Ռուսիայի վրա Ռսկե հորդայի լիակատար տիրապետության շրջանում մի նշանավոր երիտասարդ պալատական թաթար, համեմատելով իր խանի մոտ հորդային խոնարհության եկած ռուսներին իրենց հայրենակիցների հետ, աստիճանաբար սիրով լցվեց հարկատուների, նրանց հավատի, կյանքի, բարքերի և սովորությունների հանդեպ: Միևնույն ժամանակ, նրան ավելի ու ավելի պարզ էր դառնում ցեղակիցների վայրենությունը, տգիտությունը, բարոյազրկությունը, նրա ազնիվ հոգուն ավելի ու ավելի նողկանք էր պատճառում թաթարական անհեթեթ կռապաշտական հավատը: Վերջիվերջո, նա չկարողացավ տանել իր անօրենության գիտակցման հոգեկան տանջանքների բեռը, որոշեց թողնել հայրենիքը և փախչել ռուսների մոտ: Այդպես էլ արեց: Հանկարծակի թաքնվեց Հորդայից և ուղևորվեց Սուզդալ, մկրտվեց այստեղ և նոր ուղղափառ անունով՝ Կլեոպա, ծառայության անցավ Վլադիմիրի և Սուզդալի իշխանի մոտ: Դրանից շատ ժամանակ է անցնում: Կլեոպան իսկական ռուս է դառնում, վերա-

փոխվում անճանաչելիության աստիճան: Անկեղծ բարեպաշտությունը, բարությունը, ազնվությունը գործերում նրան դարձնում են թե՛ իշխանի, թե՛ ժողովրդի, թե՛ նշանավոր ազնվականների սիրելին: Նա ամուսնանում է ռուսի հետ, երեխաներ ունենում և ապրում որպես իսկական ռուս բոյար: Այդ ընթացքում Յորդայում հանկարծակի խռովություններ են ծագում, Ռուսիային սպառնալով նոր դժբախտություններով: Իշխանից փորձառու դեսպան է պահանջվում Յորդայում դժվարությունները հարթելու համար: Ո՞վ կարող էր այստեղ ավելի փորձառու լինել, քան նախկին թաթարական պալատականը, խանի սիրելին: Ռուսիայում բոլորը՝ թե՛ իշխանը, թե՛ հենց ինքը Կլեոպան, հույս ունեին, որ անճանաչելի է դարձել հայրենակիցների համար, և այդ պատճառով էլ հույսով ուղարկում են նրան խանական ռազմակայան: Կլեոպան նորից տեսնում է հայրենի վաչատները, և՛ հարազատ լայնահուն Վոլգան, և՛ Խվալինյան ծովի անընդգրկելի կապույտը. բայց հիմա առավել տխուր էր այդ բոլորը տեսնել անհավատության ու բարբարոսության մռայլության մեջ և առավել նրան ետ էր ձգում, դեպի նոր հայրենիք՝ Ռուսիա, Սուզդալ, նոր հարազատներին ու հայրենակիցներին մոտ: Անհրաժեշտ էր, սակայն, նախ և առաջ կատարել հանձնարարությունը: Հմտորեն և հաջող էր գործերն առաջ տանում Կլեոպան, երբ հանկարծ մի ծեր պալատական ճանաչում է նրան և խանին զեկուցում, որ նա փախստականն է, դավաճանն ու հավատափոխը: Ակնթարթորեն ամեն ինչ փոխվում է: Խանը կարգադրում է բանտ նետել Կլեոպային, դաժան կտտանքների ենթարկել և տանջել, քանի դեռ չի դարձել նախկին, հեթանոս հավատին: Եզնենու ճիլոպներով ձախկում են Կլեոպային, որքան կարողանում են, որպեսզի սպիպեն հրաժարվել Ուղղափառությունից, և վերջապես խանի անունից հայտարարում, որ եթե նա համառի մինչ հաջորդ օրը, ապա վաղորդյան արևն իր շողերով կլուսավորի միայն նրա գլխատված մարմինը, ու այնուհետև Կլեոպային ծանր կապանքների մեջ գիշերը թողնում են բանտում: Բայց Քրիստոսի խոստովանորդու հաստատունությունն աներեր էր: Նա որոշեց դիմանալ հանուն Քրիստոսի: Արցունք թափելով մխիթարություն էր փնտրում և առ Տեր աղոթքներով՝ զորակցություն և օգնության էր կանչում սուրբ Նիկողայոսին: Տերը լսեց տառապալի աղոթքը և նրան ազատարար ուղարկեց, Իր սպասավորին: Լռության մեջ, լուսավորված երկնային լույսով, հրաշագործը հանկարծակի հայտնվեց Կլեոպային, մի հպումով ակնթարթորեն փշրեց նրա կապանքները և այս բառերով. «Արի իմ ետևից», - պատվիրեց հետևել իրեն: Անլսելի, սրբի առջև հրաշքով բացված բանտի դռներով, պահակների միջով անտեսանելիորեն սուրբ Նիկողայոսը Կլեոպային բերեց խանական ռազմակայանից հեռու և, երբ արդեն որևէ վտանգ չկար, անհետացավ: Կարելի՞ է, արդյոք, պատկերացնել փրկվածի հիացմունքը, նրա երախտագիտությունը Աստծուն և Նրա բարեգութ սպասավորին, երբ կրկին իրեն գտավ ազատության մեջ... Նա բարեհաջող հասավ Սուզդալ և անսպասելի կանգնեց իշ-

խանի, հարազատների և քաղաքացիների առջև, երբ այստեղ արդեն լուրեր էին հասել նրա դժբախտության մասին, և բոլորը զոհված էին համարում: Մեծ էր ուղղափառների ուրախությունը սիրելի մարդուն ողջ տեսնելով և առավել մեծ էր զարմանքը նրա հրաշքով փրկության մասին Կլեոպայի պատմությունից: Հրաշքով սպասավորի այսպիսի օգնության մասին պատմվում է նրա սրբապատկերի առիթով, որն այժմ պահպանվում է Նովգորոդի նահանգի Գլեբովո գյուղում (Վալդայ քաղաքից հինգ վերստի վրա): Ըստ ավանդության, բարեպաշտ Կլեոպան այդ սրբապատկերը նկարել է ի երախտագիտություն հրաշագործի՝ իր փրկության համար:

Պակաս փառավոր չէ այն իր գոյության մեր ժամանակներում: Բարեպաշտ Կլեոպայից այն փոխանցվել է սերնդեսերունդ, մի տեղից տեղափոխվել մի ուրիշը: Դեռ XVIII դարում այն գտնվում էր Վալդայսկ գավառի Ջաօզերյե գյուղակում՝ կալվածատեր Կլեոպինի տանը: Այնուհետև, ազգակցական կապերով անցավ Ստոգովների ցեղին՝ դաստակերտ Գլեբովո:

Ստոգովների ցեղի ընդհատումով բոլորովին մոռացվեց այդ սրբապատկերի արժանահիշատակ ծագման մասին ավանդությունը: Ստոգովյան ունեցվածքի բաժանման ժամանակ զրկվեց արծաթե հին մակադրվագից, բաժին ընկավ ինչ-որ ժառանգորդի և տեղափոխվեց նրա կալվածք: Սակայն սուրբ հորը հաճո չէր այդ տեղափոխությունը և նրա հանդեպ կատարված վիրավորական կողոպուտը: Նրան վերցրած տերը հանկարծ հիվանդացավ ծանր տկարությամբ, ինքն էլ չիմանալով հիվանդության պատճառը: Այդ ժամանակ նրա երագում հայտնվեց սուրբը և կարգադրեց անմիջապես պատկերը վերադարձնել տեղը, եթե ուզում է առողջանալ: Հիվանդը կատարեց հրամանը և առողջացավ: Այսպիսին է պատկերի ուշ շրջանի համաժողովրդական ճանաչման սկիզբը: Դրանից հետո այն փառաբանվեց հատկապես 1860 թվականից սկսած, երբ, ասում են, հրաշագործ պատկերի մոտ Գլեբովո ժամանեց ինչ-որ տիկին՝ հիվանդ դստեր հետ: Նա նույնպես երազ էր տեսել, որով նրան հրամայված էր հիվանդին բերել այստեղ: Ջանադրաբար աղոթեցին նրանք սրբապատկերի առջև, սկզբից մինչև վերջ ունկնդրեցին երեկոյան ժամասացությունն ու մաղթանքները և հրաշագործի նկատմամբ հավատով լեցուն վերադարձան: Իսկապես, նրա դուստրը լիովին առողջացավ: Ովքե՞ր էին եկվորները, որտեղի՞ց էին եկել, անհայտ մնաց:

Վերջին ժամանակներս գլեբովյան կալվածքը և հին տունը, որտեղ սրբապատկերն է, անցան մեծահարուստ հողատեր Պ. Ի. Կոնոնովիչի տիրապետությանը:

Նոճեփայտի վրա բյուզանդական խիստ ոճով նկարված սրբի պատկերը մեզ ներկայանում է մինչև գոտկատեղ, օրհնող աջ ձեռքով և ձախում պահած Ավետարանով: Նրա չափսերը 9¹/₂ վերշոկ բարձրության և 7 վերշոկ լայնության են: Մինչ

մեր օրերը նա, անկասկած, մի քանի անգամ նորոգվել է: Այն արծաթե մակադրվագով, ոսկեզօծ պսակով անհայտ երախտավորի նվիրատվությունն է: Պատկերի առջև վառվում է անշիջելի կանթեղը և իրենց վշտերով ու ուրախություններով սրբի մոտ շտապող բազմաթիվ ու եռանդուն աղոթարարների մոմերի համար դրված է մետաղե մոմակալ: Հատկապես ժողովրդի մեծ հոսք է լինում այստեղ մայիսի 9-ին:

Ամրապնդվելով Աստծո օգնությամբ և Աստծո սպասավորների հովանավորությամբ, Ռուսիան այնքան ընդլայնվեց և զորացավ, որ իր մեջ բավականաչափ զորություն զգաց նվաստացնող և ծանր թաթարական լծից ազատագրվելու առաջին վճռական փորձի համար: Այդ առաջին փորձի փառքը պատկանում է Իվանի որդի մեծ իշխան Դիմիտրի Դոնսկոյին: Պատմությունը պարզորոշ ասում է, որ, ճանապարհ ընկնելով ողջ Ռուսիայի աղոթքներով, լուսավորված հնագույն մայրաքաղաք Մոսկվայի բոլոր սրբապատկերների լույսով, գոտեպնդված հայր Սերգիի խրախույսներով, խորհուրդներով և օրհնությամբ, նա դուրս եկավ Մամայի առաջնորդած թաթարական անհաշիվ նորանոր գնդերի դեմ, որ մտադրվել էր Ռուսիային հիշեցնել Բատայի ժամանակները: Բացի այդ, ավանդությունը մեզ պատմում է, որ Ռուսիայի համար նրա հավիտենական պաշտպանների աղոթքներին՝ Երկնքի Տիրոջ և ռուս սպասավորների, կրկին, բոլորին ակնհայտ, իր օգնությունը բերեց Ռուսիայի աղոթարար և հովանավոր Միրլիկիայի հրաշագործը: Այս ավանդության ակնառու վկաներ են մինչ այժմ ծառայում Նիկոլաևյան Ուզրեշսկի մենաստանը և նրա՝ սուրբ Նիկողայոսի հրաշագործ պատկերը:

Հենց միայն իր բնական գեղեցկությամբ այդ մենաստանը կարող է գրավել մեզ: Մոսկվա գետի ափին, փոքրիկ բացատում, կանաչ մարգագետինների, բլուրների լանջերի միջև հրաշալիորեն պատկերանում է այն աղոթարարների հայացքի առջև իր հոյակերտ տաճարներով ու շինություններով: Բայց սուրբ սպասավորի երկրպագուին և ընդհանրապես ուղղափառ քրիստոնյային, որ ակնածանքով ձգտում է սրբավայր, այն առավել գրավում է պատմական ճակատագրով և սրբի հրաշագործ պատկերով:

Մենաստանի պատմությունն սկսվում է սուրբ Նիկողայոսի այդ սրբապատկերի հայտնությամբ Իվանի որդի մեծ իշխան Դիմիտրի Դոնսկոյին Մամայի վրա արշավանքի ժամանակ: Ըստ ավանդության, սրբապատկերը երևում է իշխանին այն տեղում, որտեղ այժմ, մայր տաճարի մոտ, չորացած ծառի տակ, ի հիշատակ այդ իրադարձության կանգնած է պատկերը: Տեսնելով սրբապատկերն իր ողջ փառավորությամբ, հրաշալի աստղափայլով, ուրախացած այդ հիանալի կան-

խանշանով մեծ իշխանը սրտանց բացականչում է. «այն ամբողջովին արեգակ է», որից էլ վայրն ստացավ Ուգրեշա անվանումը:

Հնագույն, հայտնի չէ ու՛մ կողմից և ե՛րբ կազմված գրությունը, որ պահպանվել է մինչև այժմ, այսպես է պատմում պատկերի հայտնության մասին.

«Իվանի որդի մեծ իշխան բարեպաշտ Դիմիտրի Դոնսկոյը, որ Մոսկվա քաղաքից դուրս եկավ թաթարների թագավոր, անհավատ Մամայի դեմ, և Մոսկվայից քչեց տասնհինգ ասպարեզ հեռու, զինվորների հանգստյան համար վրաններ խփեց կանաչավետ վայրում, և այդտեղ նրան հայտնվեց Նիկողայոս Սքանչելագործի հրաշալի պատկերը, մշուշով զարդարված, լուսավոր աստղերով շրջանակված և լուսավորված վիթխարի լույսով, ծառի, որ սոճի էր կոչվում, վերևում ինքնիրեն օդում կանգնած, և ոչ մի բանից չկառչած: Եվ հայտնությունը տեսնելով, Իվանի որդի բարեպաշտ մեծ իշխան Դիմիտրիին իր զինվորներով, բարեպաշտ իշխաններով ու բոյարներով համակվեցին աներեր հավատով, և աղոթեցին նրա հրաշալի պատկերի առջև. սուրբ պատկերը ինքնուրույն իջավ բարձրությունից և ազնիվ ձեռքը դրեց իշխանի վրա, նա էլ ուրախությամբ ու գորովագին արցունքներով ու համբույրներով առավ իր խմբի մեջ...

Մամային քշելուց հետո, երբ բարեպաշտ իշխանը փառավոր հաղթանակով բարեհաջող վերադարձավ ռազմադաշտից, հասավ այն նույն տեղը, ուր հրաշալի պատկերը հայտնվելով՝ ազնիվ ձեռքով հպվեց իրեն, և թշնամու հանդեպ տարած հաղթանակի պարգևի համար շնորհակալ լինելով Ամենասուրբ Աստծուն և Աստծո սպասավոր Նիկողայոսին, իր զինվորների հետ մաղթանքի երգերի աղոթքով, և միևնույն ժամանակ ինքը՝ Իվանի որդի բարեպաշտ Դիմիտրիին, բարեպաշտ իշխաններով ու բոյարներով, այդ նույն տեղն անվանեցին «Ուգրեշա», որն այդպես է կոչվում մինչ օրս. և կարգադրեց այդ նույն տեղում տաճար կառուցել հանուն և ի պատիվ Քրիստոսի սպասավոր սուրբ Նիկողայոս Սքանչելագործի. և փառավորապես կառուցվեց այդ մենաստանը, և բավարարելով ապրուստի բոլոր անսպառ միջոցներով»:

Մեզ համար այս ամենաընդհանուր վկայություններից բացի, մենաստանի վերաբերյալ ոչ մի լուր չի պահպանվել մինչև XV դարի կեսերը, որտեղից սկսվում է նրա առավել ճշգրիտ պատմությունը: Այդ ժամանակվանից մենաստանին շատ ուրախություններ ու վշտեր են վիճակվել: Այն կանգնած է հենց Մոսկվա տանող ճանապարհին, և այդ պատճառով էլ վերջինիս վրա նոգայցիների, դրիմցիների, լեհերի և, վերջապես, ֆրանսիացիների բոլոր արշավանքները՝ հրդեհի, կողոպուտի, ավերումների ամեն տեսակ դժբախտություններով, արտացոլվել են և նրա վրա: Մենաստանի ամենափառավոր ժամանակներն, անկասկած, ընկնում են նրա գոյության առաջին կեսին, XVI և XVII դարերին, երբ Ռուսիան զվարթագին զգում էր անտանելի լծից ազատագրման ուրախությունը և երախտագիտությունը

սրբին՝ այդ մեծ գործում օգնելու համար: Նրա վանահայրերն այդ ժամանակ հաճախ եպիսկոպոսական ամբիոններ էին կառուցում: Մերձնոսկովյան ցարական ոստաններին և Մոսկվային ամենամոտ մենաստանը կոչվում էր «ցարական մենաստան», «ցարական ուխտավայր», և ռուսական առաջին ցարերի ուխտագնացություններն այստեղ անվանում էին Ուզրեշյան արշավանքներ: Հաճախակի էին այդ արշավանքները: Միխայիլ Ֆյոդորովիչի հայտնի արշավանքները միայն ինն էին, իսկ Ալեքսեյ Միխայլովիչինը՝ տասներեքը: Դրանք միշտ ավարտվում էին այն ժամանակվա ցարական ողջ ճոխությամբ ու հարստությամբ, ընդ որում՝ տիրակալները երբեմն այդ արշավանքներն իրականացնում էին ոտքով, ինչպես, օրինակ, 1620 թվականի մայիսի 5-ին՝ Միխայիլ Ֆեոդորովիչը: Նրան ուղեկցող բոլոր բոյարներն ու բոյարական բարձրաստիճանավորները նույնպես ոտքով էին գնում: Թե ինչպիսի հարգանք էր վայելում այն ժամանակ այս մենաստանը, կարելի է դատել այն բանից, որ այն ժամանակվա նրա հիշատակացուցակում մեծ մասամբ գտնում ենք նշանավոր բոյարական տոհմերի գրանցումներ, որոնց մի մասն այժմ գոյություն չունի: Այդպիսիք են. արքայազն Միխայիլ Կայբալինի տոհմը, իշխան Մստիսլավի, իշխաններ Սիցկինների, Տելյատնների, Շչենյատնների, Բելսկինների, Շույսկինների, Ելեցկինների, Գլինսկինների, Վոլինսկինների, Միխայիլի որդի իշխան Դիմիտրի Պոժարսկու տոհմը և այլն:

Հենց XVII դարի վերջից, երբ Ռուսիան առաջին անգամ հայացք նետեց դեպի փառավոր ապագա և նրա տեսադաշտից ժամանակավորապես անհետացան նախկին ծանր օրերի հիշողությունները, իր նշանավոր անցյալով մենաստանի փառքը ասես ներկա փառքից խամրելով, աստիճանաբար սկսեց պակասել և, այն չափով, ինչպես մոնղոլների նախկին հարկատուի հզորությունն էր ավելի ու ավելի աճում, այս դարասկզբին գրեթե բոլորովին նվազեց: 1833 թվականին մենաստանի միաբանները ընդամենը վեցն էին, արտաքին վիճակը չափազանց անմխիթար էր, այն բոլորովին խարխուլված էր, ավերված ու ամայի: Բայց ահա, սկսած 1840 թվականից, Իլարիա վանահոր և նրա ժառանգորդ վարդապետ Պիմենի ժամանակվանից, մենաստանն սկսեց կենդանանալ: Ուզրեշի մենաստանի հրաշագործ պատկերի փառքը կրկին իրեն ձգեց ուղղափառ ուխտագնացների սրտերը, և մենաստանը արտաքին բարեկարգությամբ թեև այժմ երրորդ կարգի է, բարեգործությամբ և գեղեցկությամբ կարող է կրկին դասվել մեր առաջնակարգ մենաստանների շարքին: Այն հոյակապ քարե կառույց է, շուրջը գեղեցիկ քարե պարիսպ, ներսում մինչև վերջին ժամանակներս 11 եկեղեցի կար, իսկ ոչ ուշ, քան 1894 թվականին օրհնվեց նոր տասներկուերորդ գեղեցիկ՝ Սպաս Պրեոբրաժենսկու վեհաշուք մայր տաճարը, որ կառուցվեց մենաստանի 500-ամյա հիշատակին: Ռուս քաղաքացու համար այդ տաճարը պետք է հիշարժան լինի, քանի որ մենաստանի հիմնադրման իրողությամբ հանդերձ, միաժամանակ հիշեցնում է նաև այլ

մեծ իրադարձությունների՝ Իվանի որդի իշխան Դիմիտրի Դոնսկոյի Կուլիկովյան փառավոր ճակատամարտի և նրան սրբի հրաշագործ օգնության մասին: Բարեպաշտ մարդու համար, սակայն, առավել թանկ է մենաստանի Նիկոլայան մայր տաճարը, որ նրա կենտրոնում է, ոչ մեծ, քարե, հին, հայտնի չէ ե՛րբ և ո՛ւմ կողմից կառուցված ու բազմաթիվ անգամներ նորոգված: Դա նախ և առաջ մենաստանի ամենափառավոր տաճարն է իր խոր հնությամբ, այնուհետև, այն պատճառով, որ այստեղ պահպանվում է մենաստանի գլխավոր սրբությունը՝ հրաշագործի հայտնության սրբապատկերը:

Այդ փառավոր պատկերի մասին մենք արդեն խոսել ենք մանրամասն: Այստեղ կարելի է միայն ավելացնել, որ այն ինքնին ոչ մեծ չափսի է, շրջանակված, սակայն, սրբի վարքագրությամբ, 1¹/₄ արշին բարձրությամբ, 1 արշին լայնությամբ, ամբողջովին արծաթե, փորագրված վերջերս արված մակադրվագով, սակայն խույրը հին է, մաքուր ոսկուց և թանկարժեք քարերով :

Այդ նույն հին մայր տաճարում պահպանվում են Միրլիկիայի սրբի անփտելի մասունքներից. մի մասը արծաթաոսկեզօծ դամբարանում, ուրիշ սրբերի մասունքների մի մասի հետ. երկրորդը՝ առանձին տապանակում, եկեղեցու բեմի զոհասեղանին, և Զոռմից մենաստան է բերվել վերջերս ոմն Ա.Ի.Գ.-ի կողմից որպես նվիրատվություն, որի մասին գրություն կա:

Բացի այդ, մենաստանի ժամատանը հատկապես պաշտվում է սուրբ Նիկողայոսի հին սրբապատկերներից մեկը, որ անվանվում է Ռադոնսկյան: Տեղի բնակիչները հաճախ են գալիս այդ պատկերի մոտ և հավատում նրա հրաշագործ զորությանը, հատկապես հիվանդ նորածինների համար, այն բանից հետո, երբ հրաշագործն այստեղ հիանալի օգնություն ցույց տվեց մի փոքրիկի: Այս նույն ժամատանը, նրա պատերին, կարելի է տեսնել մենաստանի պատկերը իր նախկին տեսքով և սրբապատկերի հրաշքով հայտնությունը:

Որպես վիթխարի, ճերմակ մոմ, մենաստանի բոլոր կառույցների վրա վեհորեն խոյանում է բարձր, գեղաշար վեցհարկանի (37 սաժեն) զանգակատունը: Չասենք միաբաններին բնակատեղի և մենաստանի ծառայողների համար գեղեցիկ և ճոխ կառուցված մյուս շինությունների մասին. այստեղ բոլորը նույնպես կան: Ուշադրություն դարձնենք ահա թե ինչին: Սրբի կողմից սիրված և նրանից ամեն ինչով՝ թե՛ երկրային, թե՛ հոգևոր բարիքներով շնորհված մենաստանը արժանավորապես շնորհապարտ է սպասավորին և իր շռայլ բարեգործությամբ նպաստում է նրա անվան փառքին: Նրան կից, հենց մենաստանի ներսում կա բավական ընդարձակ մի հիանալի հիվանդանոց, ամեն տեսակ արական սեռի ներկայացուցիչների համար 50 տեղով անկելանոց, աղոթարարների համար ասպնջատուն՝ երկհարկանի փայտե շինություն. մենաստանից դուրս՝ երեք հյուրանոց ուխտավորների համար, որոնցից յուրաքանչյուրը ներառում է 160 համար: Վերջապես, մե-

նաստանը ունի իր ժողովրդական երկդասյա ուսումնարանը հատկապես քարե մեծ, գեղեցիկ, ճարտարապետական ինչ-որ զարդանախշերով եկեղեցով շինություն, և դրան կից ևս մի մասնաշենք ուսուցիչների համար ներքևում և մանկական հիվանդանոցի համար՝ վերևում: Ի՞նչ մենաստան, եթե նվիրված չէ որբերի ու չքավորների հայտնի ստնտուի, անմեղների պահապանի, թույլերի ու վիրավորվածների պաշտպանի անվանը, որ առավել պատշաճում է մերձավորին շռայլ օգնությամբ:

Վերջում նկատենք, որ մենաստանում պահպանվում են սրբի այդ պատկերի հրաշքների մասին ոչ հեռու ժամանակներից եկող բազմաթիվ պատմությունների գրությունները:

Մոնղոլական տիրապետության շրջանի առաջին կեսին է վերաբերում սրբի ևս երկու պատկերի հայտնությունը:

Դրանցից մեկը Ուտա գյուղում է (Օռլովսկի նահանգի Տրուբչեսկի գավառում): Ըստ ավանդության, այդ պատկերը միաժամանակ հայտնվել է Սվենսկի Աստվածամոր և սուրբ Աֆանասիի ու Կիրիլի հրաշագործ սրբապատկերների հետ և սկզբում գտնվել է Կիև-Պեչորսկի Լավրում: Դրանց հետ միասին այն 1288 թվականին մենաստանից հանձնվել է Չեռնիգովի ու Բոյանսկի իշխան Միխայիլ Ռոմանովիչի պատվիրակներին, այն իշխանին, որը հիվանդության պատճառով զրկվել էր տեսողությունից և բուժվել Սվենսկի Աստվածամոր պատկերով: Ե՛րբ և ո՛ւմ կողմից է հրաշագործի պատկերը բերվել Ուտա գյուղ, անհայտ է:

Երկրորդը Ստոլբովո գյուղի (նույն Օռլովսկի նահանգի Դմիտրովսկի գավառում) Պետրոպավլովսկի ծխական եկեղեցում է, նախկին Ստոլբովո մենաստանի տեղում: Այստեղ, տաճարում, պղնձե հատուկ տախտակի վրա էլ գրված է այդ պատկերի հրաշալի պատմության մասին ավանդությունը: Այն ասում է. «Ծննդից սկսած 1334 թվականի ամռանը Քրիստոսի սուրբ Նիկողայոսի հրաշագործ սրբապատկերը երևաց Իբուժ գետի վրա, կաղնե սյան վրա, խիտ, ոչռուսական անտառներում. այս հրաշագործ սրբապատկերի մոտ շտապող կույրերը, կաղերը և բորոտները բուժվում էին: Մեկ դար անց սուրբ Նիկողայոս Սպասավորի անունով կառուցվեց փայտե տաճար»: Այնուհետև, XV դարում, այստեղ հիմնվեց մենաստան և բնակավայր, և այլևից սկսած՝ սրբապատկերի հայտնման տեղից, ինչպես գյուղը, այնպես էլ մենաստանը անվանեցին Ստոլբովո: Երկար ժամանակ տաճարի առջև կանգուն մնաց այդ սուրբ սյունը: Երբ վերջապես ժամանակն այն ոչնչացրեց, եկեղեցու հրապարակում նոր քարե սյուն կանգնեցվեց, որ այստեղ է անհիշելի ժամանակներից մինչ այժմ: Մենաստանը լուծարվեց 1764 թվին:

Կուլիկովյան ճակատամարտից հետո անցավ ևս հարյուր տարի, և Ռուսիան վերջնականապես ազատվեց թաթարական լծից: Դա տեղի ունեցավ 1480 թվա-

կանին: Այդ իրադարձության պատմության մեջ առավել ակնառու է Նիկողայոս հրաշագործի առանձնահատուկ աջակցությունը Ռուսական հողի բարօրությանը: Դրա հետ մեկտեղ նա որևէ հատուկ, միտումնավոր նշան ցույց չտվեց. այնուամենայնիվ պատմական տեղեկությունները մեզ պարզ ասում են, որ Մոսկվայի մեծ իշխանի կողմից թաթարական բասմաների դուրսմղման իրողությունը կատարվել է միայն հրաշագործի օգնությամբ: Ահա այդ տեղեկությունները:

Վասիլիի որդի մեծ իշխան Իվան III-ը (1462-1505) «սուրբ Նիկողայոսի նախանձախնդիր ուխտավորն» էր, ըստ Իվերիայի իշխանի նամակի արտահայտության՝ ուղղված այդ տիրակալին: Կարանզիսի խոսքերով, «մեր հնությունների մեջ պահպանվել է 1497 թվականի ոսկե մեդալի նկար սուրբ Նիկողայոսի պատկերով. մակագրության մեջ ասված է, որ մեծ տիրակալը այս միակ թալերը ոսկուց ձուլել է իր իշխանուհի Թեոդոսիայի համար»: Այս մեդալն ու մակագրությունը հաստատում են Իվերիայի իշխանի վկայությունը: Բայց այդ թագավորության տիրակալների՝ սրբի հանդեպ նախանձախնդիր հարգանքի ու պաշտամունքի մասին ավելի շատ պատմում է հետևյալ ավանդությունը, որ գրի է առել անգլիացի բանաստեղծ Միլտոնը XVII դարում, այն մասին, թե ինչպես Սոֆյա Պալեոլոգը օգնեց ամուսնուն ազատվել թաթարական լծից: «Մինչ այդ ժամանակը,-ասում է նա,-թաթարական խանը Ռուսիայում ուներ իր ներկայացուցիչները, որոնք ապրում էին հենց Մոսկվայի ամրոցում՝ հետևելու համար պետական գործերին: Որպեսզի նրանց այդտեղից դուրս քշի, Սոֆյան դիմեց հնարանքի, իբր վերևից տեղեկություն է ստացել, թե ինքը պարտավոր է այդ նույն տեղում, ուր թաթարական հավատարմատարների տունն է, սուրբ Նիկողայոսի համար տաճար կառուցել: Այսպես, ծնելով որդի, նա խնդրանքով դիմեց թաթարական իշխանին, որին հրավիրել էր մկրտությանը, որպեսզի նա իրեն տա այդ տունը: Ստանալով, նա հիմնահատակ քանդեց այն (այդ տեղում իսկապես նրա կողմից տաճար կառուցվեց սուրբ Նիկողայոսի անունով, որն այնուհետև կոչվեց Գոստունսկի), այսպիսով դուրս քշեց թաթարական վերակացուներին ամրոցից և աստիճանաբար նրանցից խլեց այն ամենը, ինչին նրանք տիրում էին Ռուսիայում»: Որքան էլ պատմականորեն ճշմարիտ չլինի Միլտոնի այս վկայությունը թաթարական լծից ազատագրվելու մասին, որ գործը վերագրում է միայն Սոֆյային, և ոչ թե Իվան III-ին, այնուամենայնիվ հարց է ծագում. որտեղի՞ց է օտարականին հայտնի այս մեծ իրադարձության հետ սրբի անվան կապը: Ակնհայտ է, որ դա ժամանակակից իրադարձության և Ռուսիայի հանդեպ գրողի համընդհանուր հավատամքի արձագանքն է, որ այդ գործն իրականացել է Աստծո ողորմածությամբ՝ սուրբ Նիկողայոսին ուղղված թագավորների և ամենքի աղոթքի զորությամբ և նրա աներևույթ հովանավորությամբ Մոսկ-

վայի իշխանի խիզախ նախաձեռնությանը, իսկ սրբի անունով տաճարը, որ հիշյալ տիրակալը կառուցել է Կրեմլում, այդ ավանդության իրեղեն ապացույցն է:

Այսպես, թե՛ սկսվեց, թե՛ ընթացավ, թե՛ ավարտվեց ռուսական ժողովրդի և պետության պատմության մեջ թաթարական տիրակալության այդ ծանր շրջանը Ռուսական երկրի մեծ սպասավորի հովանավորությամբ, խրախուսանքով և աջակցությամբ:

Այդ շրջանի ավարտով, սակայն, չպակասեցին Ռուսական երկրին այդ թշնամիների պատճառած դժբախտությունների ժամանակ հրաշագործի ցուցաբերած ողորմածության ու մխիթարության կարիքը: Թեև ընկավ Թաթարական մեծ թագավորությունը, թուլացավ նրա ուժը, թեև մոսկովյան տիրակալների կողմից ոչնչացվեց ամեն տեսակ ստրկական կախվածություն նրանից, սակայն թաթարների դեմ պայքարը դրանից հետո էլ երկար ժամանակ չդադարեց: Դեռևս մնացել էին զանազան խաների գիշատչական բներ՝ Թաթարական ողջ թագավորության ժառանգորդների՝ Ղրիմի, Ղազախստանի և Աստրախանի հորդաները: Դրանք հանգիստ չէին թողնում Ռուսական հողը և հաճախ էին տագնապ հարուցում արշավանքներով, դաժան ավերումներով: Ռուսական պետությանը հատկապես շատ հոգսեր ու դժբախտություններ էին պատճառում ղազախական և ղրիմյան թաթարները: Բայց նրանց հերթն էլ եկավ: Սարսափելի ջանքեր պահանջվեցին Մոսկվայի թագավորությունից թշնամական բույնն ավերելու համար: Բոլոր միջոցները՝ թե՛ նյութական, թե՛ հոգևոր, օգտագործվեցին Վասիլի որդի, թագավոր Իվան Ա-հեղի կողմից այն բանի համար, որ Ռուսիան հաղթանակով դուրս գա իր վաղեմի թշնամու դեմ պայքարից: Սովորականի պես եռանդուն աղոթում էր Ռուսիան Կազանի պաշարման ժամանակ, և, ըստ ավանդության, իսկապես, երկնային ուժերը թե՛ գաղտնի, թե՛ անթաքույց (շատերի համար) օգնում էին ուղղափառներին: Այսպես, որոշ պաշարյալներ, ըստ ավանդության, սուրբ Նիկողայոսին տեսել են մարտնչող ուղղափառ զինվորների մեջ: Կազանի թագավորության հպատակեցման պատմության մեջ «Տոհմաբանական գիրքը» մի տեղ այսպիսի դեպք է հիշատակում սուրբ Նիկողայոսի հայտնության մասին:

«Ինչ-որ մեկը,-ասվում է այնտեղ,-նիժեգորոդցի-զինվոր, պահակության իր հերթից ազատվելով, ծանր աշխատանքից ու հսկումից հետո պառկած էր իր հյուղակում, թեև քնած լսում էր ինչ-որ մեկի ձայնը, որ պատվիրում է իրեն վեր կենալ: Իսկ նա պատասխանում է. «թույլ տուր քնել, շատ եմ հոգնել պահակությունից»: Եվ պարզ տեսնում է սուրբ Նիկողայոսին, որն ասում է նրան. «զնա՛, հասիր թագավոր, մեծ իշխան Իվանին, պատվիրի՛ր իր զինվորներին խաչակնքել և սուրբ ջրով ցողել, քանի որ Աստված նրա ձեռքն է հանձնում Կազան քաղաքը»: Նա շտապ գնում և հայտնում է սա թագավորին և մեծ իշխան Իվանին, և լինում է այնպես, ինչպես Պատվիրել էր սբ. Նիկողայոսը»:

Այդ նույն գիրքն այնուհետև սրբի հայտնության ոչ պակաս նշանակալի այլ դեպք է նկարագրում: Մի աստվածավախ մարդ, Տիխոն անունով, Գոլովինի ծառան, որ վիրավորվել էր մարտում, սարսափելի տանջանքների մեջ պառկած էր և այդ հիվանդության ժամանակ, կարծես երազում, տեսնում է այսպիսի հրաշք.

«Որպես գերագույն առաքյալներ Պողոսն ու Պետրոսը և ուրիշ այլ սրբեր, նրանց հետ էլ սրբերի մեջ մեծ հրաշագործ Նիկողայոսը քայլում են օդում, աննկարագրելի լույսով փայլելով. ներքևում, գետնի վրա երևում են, իբր, Կազանի բնակիչները, հեծյալ գնդերով, աղերսով դիմում են սուրբ Նիկողայոսին. «Օ՛, Նիկողայոս, օգնիր այս կռվում ռուս զինվորներին»: Սուրբ Նիկողայոսն էլ դիմում է սուրբ առաքյալներին և նրանց հետ մյուս սրբերին և ասում նրանց. «Ամենաշնորհ Աստված, Դու ուզում ես բոլոր մարդկանց փրկել և ճշմարիտ ճանապարհի բերել, բարեհաճիր և այստեղ ուղղափառներին ապրեցնել. մի հապաղեք, այլ շուտափույթ օրհնեք և լուսավորեք սույն վայրը, ինչպես հրամայել է ձեզ Տերը»: Նրանք էլ օրհնեցին Կազան քաղաքը, և լույսով համբառնացին ու աներևութացան»:

Տեսիլքից արթնանալով, Տիխոնն զգաց, որ հիվանդությունը թեթևացել է և դա պատմեց տիրոջն ու նրա հետ եղողներին:

Թաթարական չարագործությունների վերջին ստվերն անհետացավ միայն 1783 թվականին, երբ վերջնականապես ոչնչացվեց Ղրիմի հորդան, և Ղրիմը միացավ Ռուսիային՝ Պոտյոմկին իշխանների տիրապետությանը: Ամենայն հավանականությամբ, թաթարների դեմ վերջին պայքարի, մասնավորապես՝ Մոսկովյան պետության հարավային սահմանների վրա Ղրիմի թաթարների արշավանքների ժամանակներին պետք է վերագրել Աստծո սպասավորի՝ Ռատնի անվանումով պատկերի նոր հրաշալի օգնությունը ուղղափառներին մոնղոլների դեմ մղված կռիվներում (այն այժմ պահպանվում է Բելգորոդի (Կուրսկի նահանգ) Տրոյիցկի մայր տաճարում, նույնանուն (Տրոյիցկի) արական մենաստանում): Այդ մենաստանը հիմնադրվել է 1599 թվականին Ֆեոդորի որդի Բորիս ցարի կարգադրությամբ, որի պատճառով սուրբ Նիկողայոսի անունը կրող առաջին փայտե եկեղեցում կար նաև կցաշենք՝ ռուս նահատակներ՝ սուրբ իշխաններ Բորիսի և Գլեբի անուններով. առաջին կառույցը վերջնականապես ավարտվեց միայն 1630 թվականին և այդ ժամանակվանից, ճակատագրի բազմաթիվ անակնկալների ենթարկվելով, գոյություն ունի առ այսօր:

Ուշագրավ է, որ այդ մենաստանը և ուրիշները՝ Սվյատոգորսկինը, Վալույսկինը (վերջինս հիմնադրվել է փոքր-ինչ ուշ), դրա սահմաններից ամենահարավայիններն են, որոնք այն ժամանակ դեռևս գրեթե չբնակեցված նահանգներ էին, սահմանամերձ և Մոսկովյան պետության համար անրոցի դեր էին կատարում, սկզբում բոլորն էլ նվիրված էին սուրբ Նիկողայոսին կամ հռչակված էին նրանով: Դա անվիճելի վկայությունն է այն բանի, որ եթե Ռուսիան, նրա ցարերը, զինվոր-

ներն ու ժողովուրդն ի սկզբանե հոգացել են թշնամիներից իրենց պաշտպանելու մասին ամեն տեսակ ամրություններ կառուցելով, ինչպիսին այդ երկրամասի բոլոր առաջին քաղաքներն էին, ապա վերջին հույսը նրանք միշտ էլ դրել են Տիրոջ, Աստվածամոր և նրանց սուրբ ծառաների, հատկապես սուրբ Նիկողայոսի վրա. նրանց երկնային պահպանությանն էին հանձնել իրենց երկրային ամրությունները: Եվ տվյալ դեպքում Ռատնիի պատկերի հրաշագործ պատմությունը հիանալիորեն բացատրում է սրբի նկատմամբ այդ հույսի ու ջերմեռանդության հիմքը:

Պահպանված ավանդության համաձայն, Բելգորոդում գտնվող սուրբ Նիկողայոսի պաշտելի սրբապատկերը Ռատնի է կոչվում հետևյալ պատճառով: Երբ բելգորոդյան սահմաններն ամայացան թաթարական արշավանքներից, և երբ սույն վայրագ թշնամիները ձիերով մոտեցան Կորենյոկ բնակավայրին, նույնպես և Ուստինկա, որ մոտ էր դրա սահմաններին, և ձիերով արդեն խուժեցին Կորենկա գետի ամբարտակ՝ ընդհուպ Կորենկայի անապատ, ուր սրբի պատկերն էր գտնվում, ապա, իմանալով այս մասին, այդ անապատի վանահայրը եկեղեցուց վերցրեց Քրիստոսի սուրբ Նիկողայոսի պատկերը և, այն տանելով այդ անապատի միաբանների ու բնակիչների հետ, եկան ամբարտակի մոտ և աղոթքի արարողություն կատարեցին: Այդ տեսնելով, ափին գտնվող թաթարները չհանդգնեցին հակառակել ուղղափառներին և, նահանջելով դեպի ամբարտակը, շփոթության մեջ ընկան, որից էլ շատերը ձիերով ամբարտակից ընկան գետը և խեղդվեցին, իսկ մյուսները փախան անապատ, և այս առիթով է, որ Քրիստոսի սուրբ Նիկողայոսն անվանվեց Ռատնի (մարտիկ, ռազմիկ):

Միայն այսքանն է հայտնի այժմ այս հռչակավոր սրբապատկերի սկզբնական և վաղեմի պատմության մասին: Նրա մենաստանի ծագման մասին՝ Կորեննի անապատի, Ուստինկա գյուղի, կամ Կորենկայի, որից էլ այն, հավանաբար, ստացել է իր անունը, ոչինչ չգիտենք: Սրբապատկերի և նրա գտնվելու մասին հետագա պատմությունը խճողված չէ: 1764 թվականին բոլոր անպատկան վանքերի լուծարումից հետո, նույն բախտին արժանացավ և այս անապատը, և այդ պատճառով էլ շուտով, 1765 թվականին, հրաշագործ պատկերն էլ տեղափոխվեց և դրվեց Բելգորոդի Տրոյիցկի մայր տաճարի (նախկինում արքեպիսկոպոսական նստավայրը, մինչև 1830 թվականին եպիսկոպոսական ամբիոնի փոխադրումը Կուրսկ) վանական եկեղեցի, իսկ Ուստինկայում մնացած Նիկողայոս Աքանչելագործի եկեղեցին դարձավ ծխական: Հանդիսավորապես իջեցվեց սրբապատկերը իր նախկին տեղից, հանդիսավորապես տարվեց և Բելգորոդի բոլոր եկեղեցիների կողմից բարեպաշտների թափորով դիմավորվեց և ուղեկցվեց նոր վայրը: Հավանաբար, հենց այդ ժամանակվանից էլ ի հիշատակ այդ հանդիսավոր տեղափոխման և նրա նախկին տեղում լինելուն, սրբապատկերի հայտնության վայրում սկսվեց և մինչև այսօր էլ մայիսի 5-ին կատարվում է եկեղեցական խաչերթը:

Ստույգ տեղեկություններ այդ մասին թեև չկան, բայց արդեն 1776 թվականի տեղական Հոգևոր կոնսիստորիայում այդ եկեղեցական խաչերը հիշատակվում է որպես սովորական մի բան: Հազարից մինչև քսան և ավելի երկրպագուներ մայիսի 5-ին հավաքվում են պատկերի հայտնության վայրի՝ Ուստինկա գյուղի հանդիսությանը, իրարից փախցնելով, ջանում են մինյանցից խլել հրաշագործ պատկերը տանելու պատիվը երեսուն վերստ տարածության վրա, ինչպես Ուստինկա, այնպես էլ հակառակ ուղղությամբ, Բելգորոդ, և մեծ երջանկություն են համարում հավել սրբապատկերի տապանակին, կամ նույնիսկ պատգարակներին և ընդհանրապես դրան առնչվող բոլոր իրերին: Բացի այդ, տեղական և շրջակա բնակիչների կողմից տարվա մնացած ամբողջ ժամանակ չի թուլանում այս անսովոր, բարեպաշտ երկրպագությունը փառավոր սրբապատկերին: Գրեթե օր չի լինում, որ նրանցից որևէ մեկը պատկերը չտանի իր տուն նրա առջև հրաշագործին աղոթելու համար: Քաղաք ժամանող գրեթե բոլոր պատահական այցելուները, եթե նրանք բարեպաշտ մարդիկ են, իրենց պարտքն են համարում խոնարհվել նրան, իսկ շատերը նրան այցելում են նպատակադրված: Դա պատկերի չնվազող հրաշագործ զորության մեծագույն ապացույցն է: Դրա մասին է վկայում պատկերի վրա մետաղական զարդակախոցների զանգվածը: Վերջապես, դրա հաստատումն է սրբապատկերի արտաքին տեսքը. հակառակ կողմից նրա տախտակը մասամբ այրված է, մինչդեռ երեսի կողմից միանգամայն անվնաս է: Ըստ ավանդության, դրա պատճառն այն է, որ սրբապատկերը թշնամու արշավանքի կամ հրդեհի ժամանակ եղել է բոցերի մեջ և մնացել է ամբողջական ու անվնաս:

Այդ ժամանակ էլ, կարելի է կարծել, մոռոլլական լծի և ասիական բարբարոսների դեմ պայքարի այն ծանր տարիներին, ռուս ժողովրդի պատկերացումներում սրբի՝ որպես դժբախտությունների և վտանգների մեջ մեծ օգնականի մասին ևս մեկ գիծ է մտել: Ռուսիան սկսեց նրան հարգել թշնամիների դեմ պայքարում որպես պաշտպանի: Այդ ժամանակ էլ, հավանաբար, հայրենի թաքուն անկյուններում ժողովուրդը երգի բառեր է հնարել սրբի պատվին.

Նիկոլա՝ նշանավոր անուն,
 Հաղթանակի անվանակից,
 Հաղթում է բարբարոսներին,
 Սփոփում քրիստոնյաներին:

Էլ առավել է աճում սրբի նկատմամբ հարգանքը Ռուսիայում: Նրա անընդգրկելի տարածության վրա էլ ավելի են շատանում տաճարներն ու մենաստանները սիրելի սրբի պատվին:

Թարգմանեց՝ Թադևոս Խաչատրյանը

